



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



12°





Մ. ԱԱՀԱԿՅԱՆ

338.984.31(ԿԴ.925)

Ա

ԳԱՐԳ Ա 31

Հ. Ա. Խ. Հ.

ԱՍՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

(1928-29 1932-33 տ.)

17.2.26
Խ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՔԱՂԱՔԱՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱՑԻ-
ՆԵՐԻ ՑԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆ-
ԿԱՑԻՆՆԵՐԻ
6-րդ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԿԱՐԴԱ-
ՑԱՌ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ



ՀՐԱՄԱԿԱԿՈՒՅՑՈՒՆ Հ. Ա. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՎԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ

A II
11389

ՀԱՅՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԻ	ՏՄԱՐԱՆ
ԹԱՎԱՐ Ա 8779	
ԳՐԱՆԵՐԱԿԱՆԱԿԱՐ 2188 (բ)	
ՏԻՐԱԳ 1500	

ՏԵՐԿՈՒԽ ԽՈՇԱԾ

Տպագրության հանձնելով Բանսիրների, Գյուղացիների և Յարմիր Բանակայինների Հայաստանի 6-րդ Համազումարում կարգացած իմ զեկուցումը ՀՅԱՀ ժողոտնեսության հնդամբ պլանի մասին, անհրաժեշտ եմ համարում յերկու խոսք ասել այն առանձին դրգույկով Հրապարակելու առթիվ։

Վայելելով Համազումարի բարեհաճ վերաբերմունքը զեկուցումների համար սահմանված ոնկլամենտը մի քանի անդամ խախտելու համար, այնուամենայնիվ նյութի ընդարձակության հետեանքով յես ի վիճակի չեյք մանրամասնորեն և անհրաժեշտ չափով լուսաբանել ժողոտնեսության յերբեմն խիստ կարեոր և ուշադրության միանդամայն արժանի խնդիրները։

Այս խոկ պատճառով վորոշ Հարցեր կամ վրիոգել են իմ ուշադրությունից կամ շոշափված են յերբեմն անցողակի կերպով։ Այս բացը սղագրությունն ուղղելիս լրացնելը յես համարել եմ անհղատակահարմար յերկու հիմնական պատճառներով։

Նաի՞ անհրաժեշտ եմ համարել Համազումարում կարգացած իմ զեկուցումը տալ ըստ հնարավորության հարազատորեն և տալս, վոր ամենազլիսավորն ե, առաջնորդվել եմ Համազումարի կողմից որված դիբնեկտիվները հնդամյա պլանի մեջ կենսազործելու անհրաժեշտությունով։

Խորհուրդների 6-րդ Համազումարը, Հաստատելով ժողոտնեսության հնդամյա պլանի կոնտրոլ թվերը, ընդունեց մի շարք կարեւորակույն վորոշումներ, վորպէս զեկալիքը սկզբունքներ հնդամյա պլանը վերջնականապես ձևակերպելու համար։

Լերջին այս կարեոր հանդամանքը վճռական գեր և խաղացել Հաստատանի ժողոտնեսության հնդամյա պլանը սխեմատիկ և համառոտ կերպով տալու գործում։

Զեկուցման մեջ բերած թվական տվյալները, վորակական և քանակական ցուցանիշները համազումարի վորոշումների վորով վերջնականապես ճշտվելուց և Հաստատվելուց հետո Պետական Պլանային հանձնաժողովը մտադիր է հրապարակելու Հայաստանի

ժողանատեսության հնդամյա ընդարձակ պլանի , վորի միայն ընդ-
հանուր ոկտրունքներն ու հիմնական յելակետներն են շոշափոված
այս զեկուցման մեջ :

Հայաստանի ժողանատեսութան հնդամյա պլանի այս համառուս
պատկերի հրատարակումը հետապնդում և միայն մի նպատակ—
մեր լայն զանդվածներին մատչելի ու վորոշ նյութ մատակարարել ,
քանի վոր հնդամյա ընդարձակ պլանի հրատարակությունը կա-
րող և մեղնից անկախ պատճառներով գեռես ձգձգվել , մինչդեռ
նրա անհրաժեշտությունն ու կարիքը մեր ժողանատեսության աս-
պարիզում աշխատով բնկերների , ինչպես նաև բանվորա-դյուլա-
ցիական լայն զանդվածների համար բավական մեծ է :

Այդ կարիքը մասամբ բավարարելու նպատակով և , վոր Հա-
յաստանի կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախադահությու-
նըն անհրաժեշտ գտավ հնդամյա մեր պլանի վերաբերյալ իմ հա-
մառուս զեկուցումը հրատարակել առանձին զբքույկով :

Մ . ՍԱՀԱԿՅԱՆ

I ԺՈՂՅԱՑԵՍՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Ընկերներ, 12 տարի յե անցել այն պատմական մեծ որից, յերբ
Մորհրդային Միության բանվորությունն իր ձեռքը վերցրեց կա-
ռավարության զեկը, իր ձեռքը վերցրեց նոր կյանքի շինարարու-
թյան հնարավորությունները:

Մորհրդային հայտասահնը, վորպես մեր հսկայական Միության
մի մասնիկ, ավելի ուշ թեակոխեց միութենական շինարարության
չրջանը, ավելի ուշ մասնակից գարձավ նրա սաեզծագործական
աշխատանքներին: Յեթե մի փոքրիկ հետաղարձ հայացքով աշխա-
տենք բնորոշել այն ուղիները, վորոնցով անցել և խորհրդային
տնտեսությունը մեծ հեղափոխությունից հետո մինչև մեր որերը,
մենք կտեսնենք, վոր տնտեսական շինարարությունը մեղանում ու-
նեցել և զարգացման 2 ետապ, 2 փուլ: Յեթե հաշվի չառնենք ուազ-
մական կոմունիզմը, վոր վերացավ քաղաքացիական կովիներն ա-
վարտելուց անմիջապես հետո, և մեր գիտողություններն սկսենք
այն որերից, յերբ հայտարարվեց տնտեսական այսպես կոչված՝
նոր քաղաքականությունը, ապա կտեսնենք, վոր այդ որերից ան-
ցել և մոտավորապես 10 տարի Միության մեջ, իսկ մեղանում մոտ
8 տարի: այդ շրջանում մեր առաջադրած մի շարք կարենրազույն
տնտեսական ինդիքտները, կարելի յե ասել, ստացել են արդեն ի-
քենց վերջնական լուծումը: Այդ շրջանը մենք բնորոշում ենք, վոր-
պես վերականգնման շրջան: Վերականգնման շրջանը, վորպես
տնտեսական քաղաքականության մի փուլ, արդեն վերջացած պետք
է համարել: Մենք այսոր թեակոխել ենք արդեն տնտեսական ոե-
կոնսորտիւկտիվ կամ վերակառուցման շրջանը: Դեռևս 15-րդ հա-
մագումարը, վորը Միության ամբողջ տնտեսություն հաշվե-
նակուն եր տալիս; բնորոշեց, վոր մեր տնտեսության անցած ու-
ղիները կարելի յե բնորոշել, վորպես մեր տնտեսության վերա-
կառուցման աշխատանքների ավարտման ուղիները: Այնուհետեւ,
յերկրի վերակառուցման համար 15-րդ համագումարը տվեց

յերեք հիմնական դիրեկտիվ։ Այդ դիրեկտիվներից առաջինը յերկրի խնդուսարացման խնդիրն է։ Թույլ տվեք ինձ յերկար կանգ չառնել մեր յերկրի խնդուսարացման հարցի վրա, նախ, վորովհետեւ իմ ժամանակը խիստ սուզ և և ապա՝ քանի վոր համագումարի բոլոր պատղամավորներն, ինձ թվում և, առիթ են ունեցել արդեն մանրամասն ծանոթանալու այդ խնդրին և դիտակցում են, թե ինչ կարենոր նշանակություն ունի մեր յերկրի խնդուսարացման դործը, անտեսության ձեւերի վերակառուցման, արտադրական հարաբերությունները նոր հիմքերի վրա դնելու դործը, մեր անտեսությունը սոցիալիստական ուղիի վրա դնելու դործը։

Եերկրող հիմնական նշանարանը կամ դիրեկտիվը, վոր ավել և 15-րդ կուս։ Համագումարը, այդ դյուզի մեքենայացման, դյուզի սոցիալիստական սեկտորի ուժեղացման, կոլլեկտիվ արնետեսությունների, խորհրդային անտեսությունների կազմակերպման դիրեկտիվն է. և վերջապես, յերրորդ դիրեկտիվը՝ այդ կուտարածական հեղափոխության հրամայական պահանջն և, մի խնդիր, վոր անհրաժեշտորեն պետք և զուղակցվի մեր ամբողջ անտեսության շինարարության աշխատանքներին։

15-րդ կուս։ Համագումարի կողմից արված դիրեկտիվներն ընդուրում են մեր անտեսության յերեք հիմնական բնագավառները՝ հումույթի մատակարարման դիմավոր բնագավառը, ապա այդ հումույթների արդյունագործությունը և, վերջապես, ապրանքների և մթերքների սպառման բնագավառը։ Դրանց հարակից և զուղահեռ դրված են նաև ժողովրդական մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման, մեր այրութենական, տեխնիկական և քաղաքական անդրագիտության վերացման խնդիրները։

Ժողովնական այդ յերեք հիմնական բնագավառներից միջև գոյություն ունեցող փոխհարաբերություններին սոցիալիստական բովանդակություն տալու խնդիրն և հանդիսանում այն առանցքը, վորի շուրջը կենտրոնացած են մեր անտեսական քաղաքականության ընթացիկ ձեռնարկումներն այսոր։ Յեզ յեթե իմ թված յերեք բնագավառներից յերկրորդը՝ մեր արդյունարերությունն ու արդյունագործությունն իր զգալի, խոշոր տոկոսով հեղափոխության հենց սկզբի որերից կենտրոնացավ խորհրդային պետության ձեռքում, ապա մնացած յերկուսից՝ հումույթի հայթայթման բնագավառը— դյուզատնասությունը մինչեւ

այժմ, կարելի յե տաել, գտնվել ե բացաբակապես մասնավոր տնտեսությունների ձևոքին. և վերջապես Յ-րդը՝ ապրանքների և մթերքների բաշխման ու սպառման գործը նույնական ամբողջապես չի կենտրոնացած տակալին պետության ձևոքում:

Այսպիսվ, ժողովրդական տնտեսության այս յերեք հիմնական հատվածների սոցիալիստական վերակառուցման խնդիրն եր լուծում կուսակցության 15-րդ համագումարը, և այդ տեսակետից, ուրեմն, նրա զիրեկափնիքն ունեն կարևորագույն և վճռական նշանակություն: Յեթև արգյունաբերության բոլոր ճյուղերն անխօնիք գտնվում են պետության ձևոքին, նույնը չի կարելի տաել գյուղատնտեսության կամ առևտոքի վերաբերմամբ: Անհրաժեշտ ե, ուրեմն, վորպեսզի հետագայում մեր շինարարության սոցիալիստական թափը ուժեղացնելու նպատակով այդ ամենը յինթարկի պետության անմիջական աղղեցության, անհրաժեշտ է, վորպեսզի զարգացվի նաև այդ բնագավառների սոցիալիստական հատվածը: Այս ուղղությամբ 15-րդ համագումարը դնում է դյուզի սոցիալիստական զարգացման, խորհրդային խոչը տրնտեսությունների, կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպման, դյուզի մեքնայացման և այլ հարցերը, վորոնց լուծումն անհամեմատ գժվար և դյուզատնտեսության նման մի հետամնաց ողաճանողական բնագավառում: Այդ իսկ պատճառով ել այդ հարցերը պետք ե արժանանան ամենալուրջ ուշադրության մեր առորյա աշխատանքների ընթացքում: Առեարի ասպարիֆում 15-րդ համագումարը դնում է համայնացված սեկոորդի ուժեղացման հարցը՝ ապրանքների և մթերքների բաշխման ու սպառման գործը պետության անմիջական աղղեցությանը յինթարկելու նպատակով: Այսպիսով, մեր ծրագրային աշխատանքների բովանդակությունը կազմելու յե այդ յերեք հիմնական վերաբույն զիրեկտիվների կենսագործման ու անշեղ կիրառման հրամայական ոլահանջը: Այդ տեսակետից մատենալով մեր տնտեսության, մենք պետք ե մեր յուրաքանչյուր քայլը, մեր յուրաքանչյուր ձեռնարկությունը բղիսնցնենք այդ յերեք հիմնական սկզբունքներից: Դուք դիմեք, ընկերներ, սակայն, վոր տնտեսության մեջ բացի այն անձնուրացությունից ու հերոսական պայքարից, վորը ցուցահանեց մեր բանվորությունը Հոկտեմբերյան կարմիր որերին՝ խնելով քաղաքական իշխանությունը, բացի այդ աննախընթաց ինքնաղուհությունից, տնտեսական ասպարիֆում ոլահանջում և նաև այլ ընդունակությունն, տնտեսությունը սոցիալիստականորեն վերակառուցելու ունակություն, ոլահանջում և, վորպեսզի մեր

բանվորն ու գյուղացին վոչ միայն կոմի դաշտում կարողանան քրիել հեղափոխությունը, այլև կարողանան մեր նոր իրավակարգի հիմքը՝ տնտեսությունը վերակառուցել նոր, սոցիալիստական հիմունքներով: Այս ուղղությամբ ես մենք ունենք մի հրամայական զիրեկարիվ— մեր 15-րդ համազումարի տված զիրեկտիվը, վոր վերաբերում ե կուլտուրական հեղափոխությանը: Մեր հետամնացությունը, մասնավորապես Հայստանի աշխատավորության հետամնացությունը, կարող ե արգելք հանդիսանալ տնտեսության վերելքի հաջող ընթացքին: Ահա թե ինչու խոչոր ուշադրություն դարձնելով տնտեսական յերեք բնագավառների սոցիալիստական վերակառուցման վրա, մենք միաժամանակ զրան զուգընթաց առաջադրում ենք մեր կուլտուրական վերելքի, կուլտուրական հեղափոխության կարեռագույն խնդիրը, վորոնց զուգակցությունը պետք ե ազահովի մեր շինարարությոն հաջող ընթացքը:

Այդ հիմնական զիրեկտիվներն ունենալով վարդես զեկագոր սկզբունք, մենք անցնում ենք մեր տնտեսության կազմակերպման դործին: Յեթե վերականգնման ըրջանը բացի պլանային՝ հաշված, չափած ու ձեւած աշխատանքներից, իր մեջ պարունակել ենակ վորոշ տարերք, յենթակա յե յեղել վորոշ տարերայնության, ապա մեր թեակոխած յերկրորդ ըրջանը, տնտեսության վերակառուցման ըրջանն արգելն աշխատում ե վերացնել ամեն մի տարերային վերաբերմունք զեկաի մեր շինարարական աշխատանքները: Յեթե առաջին ըրջանում հարկավոր եր լարել մեր բոլոր ընդունակությունները, վորովեսզի կարողանայինք մեր անտեսությունը հասցնել նախապատերազմյան դրության, ապա այսոր, թեակոխելով վերակառուցման ըրջանը, մենք այլևս մոռացել ենք նախապատերազմյան դրությունը: Նախապատերազմյան դրությունն արգելն այն բարձունքը չե, վորին մենք ձգտում ենք այսոր, մեզ համար բարձունք ե հանդիսանում մեր յերկրի սոցիալիստական շինարարությունը, մեր անտեսության վերակառուցման այնպիսի ձեւրով, վորոնք կազահովեն սոցիալիզմի հաղթանակը:

Այսոր միանգամայն պիտի ժխտել այն տարերքի հակադղեցությունը մեր տնտեսության մեջ, վոր գոյություն ուներ առաջին ըրջանում: Այլևս տարերքը չե այստեղ, վորը պետք ե հակադղի մեր տնտեսությանը, այլ չափած, ձեւած, վերին աստիճանի մտածված ծրագրերը, պլանները, վորոնք պետք ե հիմնավորված լինեն մեր յերկրի իրական, տնտեսական հնարավորու-

թյուններով և ընդգրկեն այն ճանապարհները , այն ուղինները , վորոնք նախազգված են 15-րդ համազումարի գլուխկտիվներով : Պահնա այսոր զառնում և մեր տնտեսական քաղաքականության խոչոր ֆակտորներից մեկը , վորը պետք և առանձին ուշադրություն դարձրի ժողովնեսության զարգացման ուղինների վրա : Ահա թե ինչու այսոր մենք խոչոր նշանակություն ենք տալիս պլաններին : Ամբողջ Միության մեջ , բոլոր համազումարներում գրված և 5-ամյա պլանների քննությունը և այս , ընկերներ , բոլորովին պատահական յերեւյթ չեն : Համազումարները և , մասնավորապես մերը , պետք և իրենց հեղինակավոր խոսքն ասեն 5-ամյա պլանների նըկատմամբ , վորովհետեւ այդ այն ծրագիրն և , վորով մեր սոցիալիստական շինարարությունն ընթանալու յեւ առաջիկա 5 տարվա ընթացքում :

Յուրաքանչյուր պլան կազմելիս մենք պետք և ունենանք յերկու խումբ պայմաններ . 1-ին խումբը , այդ այն հանկան սոցիալ-պատմական հնարավորություններն են , վոր ունի ավյալ յերկրամասը , և այնակ զոյսություն ունեցող այն սոցիալ-պատմական դործոնները , վորոնք ինքնին հանդիսանում են մեր տնտեսության զարգացման աղջակը : Պայմանների 2-րդ խումբը՝ այդ մարդկային ուժն և , վորը միանալով առաջին խմբի՝ բնական պայմանների հետ , ստեղծում և տնտեսությունը , վորպես այդպիսին : Յեթե առաջին խմբի մեջ մտնում են յերկրի հողային , ջրային , ելեքտրական եներգիայի հարստությունները , ճանապարհները և այլ զործոններ , ապա պայմանների 2-րդ խումբը , վորը միանալով այդ տնտեսական , սոցիալ-պատմական խմբի հետ՝ պետք և առ տնտեսության արդյունքը , — այդ մեր մարդկային ուժն և , նրա կուլտուրականության աստիճանը և այլն : Մարդկային ուժը , հանկապես նրա կուլտուրական աստիճանը , միանալով բնապատմական զործոններին , ստեղծում են տնտեսությունը , վորպես այդպիսին : Ահա թե ինչու յուրաքանչյուր պլան կազմելիս մենք պետք և առաջին հերթին ուշադրության առնենք , ուսումնասիրենք այն բնապատմական յերեւյթները , վորոնք մեր յերկրի հատկանիշն են կաղմում , ապա մարդկային ուժը , նրա կուլտուրական աստիճանը , վորպեսպի այդ երկու խմբերի հավասար զործակցությամբ հնարավոր լինի կազմակերպել և բարձրացնել ժողովնեսությունը : Յեթե Հայաստանը առաջին խմբի պայմաններով բավական հնարավորությունները մեծ են մեղանում , ապա , դժբախ-

մարար, մենք չենք կարող այդ նույնն առել մարդկային ուժի, նրա կուլտուրականության, նրա վորակի վերաբերմամբ:

Բնական հարստություններն անհամեմատ ավելի խոշոր հնարավորություններ են պարունակում իրենց մեջ՝ այդ բնադավառում գեռ կան պոտենցիալ խոշոր չհայտնաբերված հնարավորություններ: Սակայն այդպես չե մեր մարդկային ուժի բնազավառը:

Են կանգ չեմ առնի այն հարցի վրա, թե ինչու կամ ինչպես ե առաջ յեկել այդ անհամաշափությունը, վորովհետեւ այդ մեղ չտփաղանց հեռու կտաներ: Դուք դիտեք, վոր անցյալում, ցարի տիրապետության որերին, մենք կտրված եյինք Միության տնտեսությունից և մեր յերկիրը վերածված եր մի զաղութիւն, զրա հետեանքով մենք հետ եյինք մնացել թե տնտեսապես և թե կուլտուրապես:

Մեր զարգացման համար այժմ անհրաժեշտ ե կուլտուրական նոր կյանք: Ենք այսոր մենք ձեռնամուխ ենք լինում տղիւտության խավարից ազատել նրանց, վորոնք յենթակա եյին ցարի և նրա սատրապների կամարականությանը: Պետք ե սակայն ընդգծել, վոր մեր տնտեսական կյանքն անհամեմատ ավելի յերածքացել, քան մեր կուլտուրական կյանքը:

Վերցնենք թեկուղ մեր ժողովնասության համար անհրաժեշտ մասնագետ ուժերի կարիքը:

Դուք դիտեք, թե ինչպիսի կարևորագույն հարց ե մասնագետներ և պատրաստված ուժեր ունենալու հարցը, թեկուղ այն տեսակետից, վորպեսզի կարողանանք մեր համայա պլանը, ծրագրին անշեղ կերպով ի կատար ածել: Այսպես, թե այնպես՝ պլանը կազմելիս, մենք պետք ե այդ յերկու խմբերի պայմանները հաշվի առնենք, պահպանենք վորոշ հավասարակշռություն, վորոշ համաշափություն և վորոշ զուգակցություն:

Այսուհետեւ, մեր տնտեսությունը, չի կարելի պատկերացնել վորպես մի առանձին, մի ինքնամփոփ տնտեսություն, մեկուսացած սոցիալիստական Հանրապետությունների Միության տնտեսությունից: Միութենական տնտեսությունը, վորն ունի արտադրական նոր ձեեր, արտադրական նոր հարաբերություններ, անկասկած մեր ընդհանուր չարհի տեսակետից, առողջ վերելքի տեսակետից չի կարող բաժան-բաժան լինել, չի կարող անդամականի առանձինք: Ենք քանի վոր տնտեսական նոր ձեերը, նոր հարաբերությունները դառնում են ել ավելի հրամայողական, ել ավելի

անհրաժեշտ, անտեսության միասնականության խնդիրը այսպիս-
սով զառնում է մեզ համար գերազույն և հիմնական սկզբունքը՝
Յեվ ահա յելակետ ունենալով այդ գերազույն սկզբունքը, ահ-
ղական անտեսության պլանները կազմելիս պետք է հաշվի տունել
նաև տեղական պայմանները և այդ տեղական պայմանների շա-
հերը զուղակցել մեր Միության միասնական անտեսության ընդ-
հանուր շահերին: Մասնագորապես, Հայաստանի նկատմամբ մեզ
համար բացի միութենական միասնական անտեսության ընդհա-
նուր սկզբունքց զոյտություն ունի և մի այլ վոչ պակաս կարենը
անտեսական ամբողջություն, —այդ մեր Անդրկովկասյան Ֆեղե-
րացիայի անտեսության հարցն և, նրա միասնականության հարցը՝
վորի վրա և կառուցված և ու զարգանում և մեր Փեղերացիան՝
Միութենական ամբողջական անտեսության մեջ Անդրկովկասյան
Փեղերացիան գրավում է նույնքան ամբողջական հասվածային
տեղ այն չափով, վոր չափով Անդրկովկասի բնական, կլիմայա-
կան, աշխարհագրական և այլ պայմանները տալիս են անտեսա-
կան զարգացման ընդհանուր հեռանկարներ, ունեն զարգացման
համարյա նույն ուղիները:

Ահա թե ինչու մեր ժողովնասության ողլանի աշխատանքնե-
րը ծրագրելիս, մենք պետք ե համաձայնեցնենք վոչ միայն
միութենական ընդհանուր պլանի հետ, այլ նաև մեր Փեղերացիայի
ողայմանների, Անդրկովկասյան ընդհանուր պլանի հետ, և վերջինի
միջոցով մացնենք միութենական ընդհանուր պլանի մեջ: Սակայն
բացի այս հիմնական պայմաններից, վորոնք հիմք պետք ե ծո-
ռայեն մեր աշխատանքների պլանավորմանը, կան նաև մի շարք
այլ զերեկատիվներ, զեկավար ցուցումներ, վոր արված են մեզ
թե մեր կուսակցության և թե խորհրդային որդանների կողմից:
և վորոնցով մենք պետք ե զեկավարվենք մեր աշխատանքները,
մեր ծրագիրը կազմելու դորձում:

Դուք ամենքդ զիտեք, վոր մեր արդյունաբերությունը և գյու-
ղատնտեսությունը միանման թափով չեն զարգանում: Մինչդեռ
արդյունաբերության զարգացման պրոցեսը արտահայտվամ և
համարձակ ու ուժեղ թափով, նույնը չի կարելի ասել գյուղա-
տնտեսության նկատմամբ: Գյուղատնտեսությունն ավելի զան-
գաղ է աճում: Մինչդեռ այսոր մեր արդյունաբերությունը նա-
խապատերազմյան նորմաններից վաղուց արդեն անցել ե, գյու-
ղատնտեսության ասպարիզում նույնը չի կարելի նշել. բոլոր
տվյալները ցույց են տալիս, վոր ժողովնասության այդ ճյուղը
չի հասել նախապատերազմյան նորմաններին, և նրա զարգացման

թափը գանդաղ և : Թերես զբա պատճառն այն և , վոր արդյունա-
րեռությունը պատերազմից հետո անմիջապես բնկավ սոցիալիս-
տական հաստիքածի ձեռքք , և նրա մեջ ստեղծվեցին սոցիալիստա-
կան նոր հարաբերություններ , իսկ զյուղատնտեսությունը մնաց
անհատական , մասնավոր տնտեսությունների ձեռքին , վորի հե-
տեսնիքով ել սկսեց զտրանալ ավելի թույլ թափով , հետ մնաց
նախապատերազմյան նորմաներից : Թերեսն չահնակություն ունի և
այն , վոր զյուղատնտեսությունը յենթակա յէ բնական պատահար-
ների , վորից և բնականաբար նրա աճման տեմպը թույլ կլիներ :
Այս ամենը ստեղծեց մի գրություն , վորի առաջ այսոր կանգնած
ենք մենք , այսինքն՝ զյուղատնտեսության ասպարիզում մենք
ունենք նախապատերազմյան ցուցանիշներից վորոշ չափով հետա-
մաց մի վիճակ :

Ստեղծված այս կացությունը խիստ պատասխանառու բնկեր-
ներից վոմանք բացարում ևն զյուղատնտեսության ղեղադա-
ցիայով՝ հետագիմությամբ , վոր իրը թե զյուղատնտեսության
սոսօպարիզում մենք հետ ենք մնում : Այս տեսակետը վոչ միայն
տնհիմն և , քանի վոր մեր յերկրի խորհրդայնացումից հետո տո-
րեց-տարի թվական բոլոր ավյանները զյուղատնտեսության առ-
պարիզում միայն վերելք են ցույց տալիս , այլև միանդամայն
սխալ և , քանի վոր անցած տարիները մեր զյու-
ղատնտեսության վերելքի տարիներ են յեղել այն-
պես , ինչպես յեղել են վերելքի տարիներ մեր ար-
դյունարերության համար : Այսպիսով , բնկերներ , միան-
դամայն անհիմն , միանդամայն սխալ են այն յենթագրություննե-
րը , թե զյուղատնտեսական ասպարիզում մենք ունենք վորոշ հե-
տադիմություն : Ամրագ տնտեսության մեջ այդ յերկու հիմնա-
կան ճյուղերը՝ զյուղատնտեսությունը և արդյունարերությունը
դարձանում են , և մեր վերելքի հետեանքով առաջանում են մի
շարք գժվարություններ : Մենք յերբեմն ականատես ենք լինում
սուր ճգնաժամերի պարենավորման ասպարիզում՝ զանազան
մթերքների , մանուֆակտուրայի և այլ ապրանքների բացակա-
յության հետեանքով : Այդ գժվարություններից , սպառման ավ-
րանքների ժամանակավոր արդ պակասությունից մեր թշնամի-
ները հանում են այն յեղակացությունը , թե Խորհրդային հիմու-
նությունը չկարողացավ անտեսությունը կազմակերպել և վարել ,
մոռանալով , սակայն , վոր արդ գժվարությունները մեր աճման ,
մեր տնտեսության վերելքի հետեանքն են , մեր տնտեսության
բուռն աճման հետեանքն են : Այդ աճման հետեանքով ել առաջա-
նում են և այն գժվարությունները , վոր այսոր մենք ունենք : Տա-

բորբնակ կլիներ, յեթե մենք կառեցնելինք մեր տնտեսության աճման թափը, վորպեսզի այսոր խուսափելինք վորոշ գժվարություններից : Այդ գժվարությունների դրության հետեւանքով մեշարք այլ ընկերներ կարծում են, թե մեր հիմնական ներդրումները գնում են վոչ այն ուղիով, ինչ ուղիով պիտի ընթանան, վորմենք ավելի ուշադրություն ենք դարձնում մեր յերկրի խոչըր արդյունաբերության վրա, քան թեթև արդյունաբերության՝ սպասողական նյութեր մատակարարող արդյունաբերության վրա : Յետ կարծում եմ, վոր այդ ընկերները վախենալով վորոշ գժվարություններից, տեղի տալով այդ գժվարությունների առաջ, յենթարկվելով այդ գժվարությունների շուրջը առաջացած քննադատություններին, կամա թե ակամա, ցանկանալով թե չցանկանալով, աշխատում են մեր կուսակցության տնտեսական քաղաքականության մեջ մտցնել անհարազատ մտայնության, վորը չերդիմում մեր սոցիալիստական շինարարական աշխատանքների եյլությունից, վորը չի համապատասխանում մեր սոցիալիստական շինարարության բովանդակությանը : Ահա թե ինչու այն տեսակետը՝ թե մեր ներդրումները, մեր հիմնական ներդրումները պետք ե ուղղած լինեն նախ և առաջ սպասողական նյութեր արտադրելու նպատակին, միանգամայն ժխտվում ե մեր կուսակցության, մեր կառավարության կողմից այն չափով, ինչ չափով այդ տեսակետը չի համապատասխանում մեր զարգացման սոցիալիստական հեռանկարներին :

Ինչպես անսանք, միութենական տնտեսությունը մի միասնական ամրողական մեծություն է. բնական և, ուրեմն, վոր այն հիմնական խնդիրները, վորոնք կանգնած են այսոր ամբողջ միութենական տնտեսության առաջ, ծառանում են նաև մեր առաջ, խնդիրներ, վորոնց լուծմանը պետք ե ձեռնամուխ լինենք մենք մեր առորյա աշխատանքներում :

Մեր ամենորյա աշխատանքները պետք ե նպաստեն ապահովելու այն սոցիալիստական դիրքերը անտեսության մեջ, վորմատնանշել և 15-րդ համագումարը : Վերցնենք թեկուզ արդյունաբերության և զյուղատնտեսության փոխհարարերության հարցը մեղանում : Այս հարցը վոմանց կողմից նույնպես դարձել է տարակուսանքի առարկա : Վորոշ ընկերներ գտնում են, վոր գրուզատնտեսության ասպարիզում մենք ավելի թույլ ներդրումներ սննենք, վոր գյուղատնտեսության վրա մենք ավելի քիչ ուշադրություն ենք դարձնում, և զբանից յեղակացնում են, վոր հարկավոր ե գյուղատնտեսության ներդրումներն ուժեղացնել : Շա-

տերն ել այն կարծիքին ելին, վոր մենք մեր ուշադրության կենտրոնը պետք ե զարձնենք արդյունաբերությունը: Թե մեկը և թե մյուսը չի կարելի համարել ճիշտ, վորովհետեւ միայն ժողովրդական տնտեսության այդ յերկու հիմնական ճյուղերի ճիշտ և դուզընթաց փոխհարաբերությունը հնարավորություն կտա ամբողջ ժողովնականության վիճակը բարելավելու: Յեթև գրանցից մեկը կրծառվում ե ի հաշիվ մյուսի, ասպա այդ առաջացնում և զժվարություն մյուս ճյուղի համար, և ընդհակառակը: Գյուղատնտեսության զարդացման վրա բացառիկ ուշադրություն զարձնելուց, անկասկած, կտուժի արդյունաբերությունը, արդյունաբերության թափը կթուլանա և, ընդհակառակը, յեթև արդյունաբերությունը բարձրացնենք ի հաշիվ գյուղատնտեսության, գյուղատնտեսության զարդացումը կկասեցի: Ժողովնականության այդ յերկու ճյուղերը միացած են, լրացնում են իրար, պարմանավորվում են միմյանցով, և միայն այդ յերկուսի փոխազդեցությամբ հնարավոր և բարձրացնել վողջ ժողովնականությունը, վարսկեալ այդպիսին: Վորպեսպի իմ ասածներն ել ավելի պարզեմ, ձեր ուշադրությունն էմ հրավիրելու այս քարտեղի վրա (ցույց ե առյօն քարտեղը). ահա թե ինչպիսի փոխհարաբերություն ե ստեղծված ժողովրդական տնտեսության այս յերկու խոշոր ճյուղերի միջև մեզանում: Այս, ընկերներ, ամբողջ գյուղատնտեսության արագբանքն և, վորից (ցույց ե տալիս քարտեղը), այս հոգագործությանն ե (ցույց ե տալիս քարտեղը), այս անտառային և այլ տնտեսություններին և (ցույց ե տալիս քարտեղը): Այսպիսով գյուղատնտեսության արտադրանքը 1927-28 թվին հավասար եր ժողովնականության ամբողջ արտադրանքի 58,1 տոկոսին: Այսուհետեւ այս զույնը ցենզային արդյունաբերության արտադրանքն և (ցույց ե տալիս քարտեղը), այս մանր արդյունաբերության, (ցույց ե տալիս քարտեղը), այդ յերկուսը միասին ուրեմն կազմել են նույն տարրում ամբողջ արտադրանքի 31,9 տոկոսը, ուրիշ խոսքով դյուցանականությունից ստացված արտադրանքը յերկու անգամ ավելի յե արդյունաբերության տվածից: Այս ապացուցում և, ինչպես և մենք սովորել ենք կրկնել, վոր մեր յերկիրը գյուղատնտեսական, բացարձակապես գյուղատնտեսական յերկիր և: Սակայն, չժխտելով այդ ճշմարտությունը, մենք գյուղատնտեսության զարգացմանը զարկ տալու հետ զուգընթաց պետք և բարձրացնենք և կաղմակերպենք նաև մեր յերկիրի արդյունաբերական հնարավորությունները: Գյուղատնտեսության հետ միասին պետք ե զարգանա նաև մեր արդյունաբերությունը, աստիճանաբար մեր

յերկիրը զուտ գյուղատնտեսականից վերածելով արդյունաբերութան-գյուղատնտեսական յերկրի : Այս տեսակեամբ ճշտությունը հաստատվում և թեկուղ մեր ժողովնեսության յերկու գլխավոր հատվածների արտադրանքի հետազա փոխհարաբերությամբ : Խնդիրներում ցույց և արված այս շրջանով, գյուղատնտեսության արտադրանքը 1927-28 թ. կազմում եր 68,1 տոկոս, իսկ 5-ամյակի վերջում նաև կազմելու յե արդեն՝ 50,3 տոկոս, ուրիշ խոսքով՝ գյուղատնտեսության արտադրանքի տեսակարար կշուր ինչում և ընդհանուր արտադրանքի համեմատությամբ, թեև ինչպես դյուրանակառությունն անմիջապես, նույնպես և նրա արտադրանքը բարձրանում են զգալի թափով : Իր հերթին արդյունաբերության ընդհանուր արտադրանքի տոկոսը նույնպես բարձրանում և 31,9 տոկոսից՝ 49,7 տոկոսի : Այս մեր ժողովրդական տնտեսության յերկու գլխավոր հատվածների՝ գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման ցուցանիշներից մեկն ե :

Այսուհետեւ, ժողովնեսության ընդհանուր վերելքը հնդկամյակի ընթացքում բնութագրելու նպատակով յես կրեմմ մի յերկու թիվ մարդկային ուժի, նրա վորակի զարգացման մասին : Մարդկային ուժը 5-ամյակում նույնպես աճում և բավական զգալի՝ 22,4 տոկոսով, վորից քաղաքում՝ 25,3 տոկոսով, իսկ գյուղում՝ 21,7 տոկոսով : Անոյ բնակչության բանվորական հասակ ունեցողները, ինչպես նաև գործադրությունների բնդհանուրը քանակի՝ 37,6 տոկոսը զործ են զտնում գյուղատնտեսության և վորոշ չափով ել արդյունաբերության մեջ : Դպրոցական աշակերտների թիվը հնդկամյակի վերջում աճում է 74,1 տոկոսով :

Ժողովնեսության վերելքի այս ընդհանուր բնութագրությունից հետո թույլ տվեք անցնել արդյունաբերության յերկու խոշոր հատվածների՝ մեր ծանր և թեթե արդյունաբերության փոխհարաբերության հարցին : Արդյունաբերության այդ յերկու խոշոր հատվածները՝ 27-28 թվին ունելին հետեւյալ փոխհարաբերությունը ծանր արդյունաբերության ընդհանուր արտադրանքը կազմում եր 38,2 տոկոս, իսկ թեթե արդյունաբերությանը՝ 61,8 տոկոս : Հնդկամյակի վերջում ևս այդ փոխհարաբերությունը մնում է համարյա անփոփոխ, այսինքն՝ 37,2 տոկոս ծանր արդյունաբերության արտադրանքը և 62,7 տոկոս թեթե արդյունաբերության արտադրանքը :

Դուք տեսնում եք, վոր հնդկամյա պլանը մեզանում բոլորովին արհեստական կերպով չի աշխատում ուժեղացնել արդյունաբերության առաջնորդության համար ի հաշիվ յերկրորդի, մի ինդիք, վոր

Աորհըղային ամբողջ ժողանակության արդի քաղաքականության
հիմնական առանցքն ե կազմում : Սակայն, անկասկած, այդ չէ
նշանակում, թե պետք ե թերազնահամառել ծանր արդյունաբերու-
թյան գերը, այլ ընդհակառակը, ցույց ե տալիս, վոր մեր յերկրի
արդյունաբերության հայտնաբերքած հնարավորություններն այ-
սոր ավելի մեծ չափով նյութ են մատակարարում թեթև արդյու-
նաբերությանը : Զնայած վոր արդյունաբերության գծով մեր
հիմնական ներդրումների ճնշող մասը՝ 75,2 ատկուր հատկացված
և ծանր արդյունաբերությանը, ապագայում, սակայն, յերբ մենք
ի վիճակի կլինենք շահագործման յենթարկել մեր հանքային բո-
լոր հարստությունները, թերեւ մեր արդյունաբերության արդ
յերկու հատվածները ստանան այլ պատկեր : Այս խնդրում մենք
առաջնորդվել ենք մեր կուսակցության տված զիրեկախիլի ներքին
բովունդակությամբ և վոչ թե նրա մեքենայական մեկնարանու-
թյամբ : Ենթե ծանր և թեթև արդյունաբերության վոխնարարե-
րության խնդիրը լուծվել և միութենական ամբողջ անտեսության
մեջ հոգութ առաջնի, առա նույն վոխնարարերությունը Միու-
թյան զանազան մանր-մունք շրջանների նկատմամբ պահպաները,
անկասկած կլիներ խնդիր մեքենայական բժբունում :

Այսպիսով մենք, ուրմեն, վոչ միայն շենք խախուել 15-րդ Հա-
մազումարի հիմնական զիրեկախիլը, այլ, ընդհակառակը, մոտե-
ցել ենք նրա լուծմանը Խորհրդային Միության անտեսության շա-
չերի աեսակետից :

II. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Այս ընդհանուր զիտողություններից հետո, ընկերներ, թույլ
տվեք անցնել ժողովրդական տնտեսության առանձին հատվածնե-
րի, առանձին ճյուղերի վերլուծությանը : Քանի վոր զյուղատնե-
սությունը մեղանում ավելի զերակշող տեղ ե բոնում, ուստի
սկսենք զյուղատնտեսությունից :


Նախ՝ մի փոքրիկ զիտողություն : Այն բոլոր թվերը, վոր յնո
կրերեմ թե զյուղատնտեսության և թե արդյունաբերության վե-
րաբերմամբ, համաձայնեցված են Անդրկովկասյան Պետալլանի
համապատասխան թվերի հետ : Վորոշ թվերի, մասնա վորապես մի
շարք վորակային ցուցանիների նկատմամբ պետք ե ասեմ սո-
կայն, վոր Հայաստանի Պետալլանն ունի իր առանձին կարծիքը :
Այդ ցուցանիները հետազայում պետք ե ճշտվեն և համաձայնեց-

վեն Անդրկովկասյան Գևորգյանի հետ : Այսուր միասնականութիւնն
ոկրունքը չխախտելու համար, յես վերցնում ամ Սնդրկովկաս-
յան Գևորգյանի ափյաշները, վարոնց հիման վրա կազմված և մեր
համբյա պրանք : Մեր յերկիրն ըստ Անդրկովկասյան Գևորգյանի
ափյաշների բանում և մասամբորապիս 29.894 քառ. կիլոմետր կամ
յերկու միլիոն ինը հարյուր ութուն ինը հազար հեկտար տարա-
ծություն : Այդ 2.989.000 հեկտարից 20 տոկոսը կամ 616 հազար
հեկտարը միանգամայն անպետք են, ըրջանառությունից բոլորու-
մին հանգած հողեր են, այնպիսի հողեր, վորոնց ողափոքնումն
անհնարին է : Դուք տեսնում եք, վոր համարյա թե հողերի տարա-
ծության մի հինգերորդ մասն անպետք է : Յուրաքանչյուր շնչի
ամբողջ հողերից ընկնում և 2,81 հեկտար ընդհանուր տարածու-
թյուն, իսկ յեթե վերցնենք վարելահողերի և ցանքերի տարածու-
թյունը, ապա յուրաքանչյուր շնչի ընկնում և 0,85 հեկտար : Այս-
պիսով մեր գյուղացիությունը վարելահողով գեռնես խիստ անբա-
վարար չափերով և ապահոված :

Ամբողջ վարելահողի քանակը հավասար է պիտանի հողերի
30,2-ին կամ հողերի 20,4 տոկ. : Բոլոր պիտանի հողերից մենք
կարողացել ենք վարելահող գարձենել 30,2 տոկոս : Մնացած 70 տո-
կոսի վորոշ մասը վարելահող դարձնելու համար մենք պետք է
մեծ աշխատանք թափենք, պետք է առանձին ու շաղը բություն դարձ-
նենք, վորպեսզի զյուղական տնտեսությունների հողի նորմալ կա-
րեքը բավարարենք : Մեր հաշվով 27-28 թվին Հայաստանում կա
149 հազար տնտեսություն՝ 4,79 շնչով, վոր հնդամյակի վերջում
դառնալու յև 162 հազար տնտեսություն՝ 5,15 շնչով :

Հողագոյնմասը գաշտավայրերում մի շնչին հատկացրել և
1,9-ից 3,1 հեկտար հող, սակայն վրա գիմաց Հողմողկոմար կա-
րողացել և արամագրել միայն 0,48-ից 0,60 հեկտար կամ հազիվ
մի քառորդի չափով : Այդ հողերից միայն 0,14 հեկտարն ե ջրովիք :
Մեր զյուղացիության հողանեղվածությունը վերացնելու համար
անհրաժեշտ և հողագործության համար պիտանի դարձենել 300 հա-
զարից մինչև 400 հազար հեկտար խորան հողերից, և միայն այդ-
պեսում հնարավոր կլինի հողանեղվածությունը վերացնելու : Աս-
կայն, ընկերներ, այդպիսի խոչը աշխատանքը մեր հնդամյակի
նյութական ու ֆինանսական հնարավորությաններից վեր է :

Առաջիկա 5-ամյակի ընթացքում մենք ի վիճակի կլինենք
շրջանառության մեջ մացնելու հողեր այլ անհրաժեշտ քանակի,
միայն 15 տոկոսը : Այս է, ահա, այն հողային կապիտալը, մեր



գյուղանտեսության բարձանսի ակտիվը—անողեաք և խոսքան հոգերի մեծ տարածություն, վարելահողերի սակավություն և այլն, վորը և կաղմում և մեր գյուղանտեսության բաղան։ Դրա հետեւ վանքով ստացվում են հողանեղվածություն, անջրդի հողերի մեծ հատվածներ և այդ տմենին զուգընթաց գյուղական աճող տնտեսություններ։ Այդ հիմնական սահմանափակ կապիտալի պահպանման, նրա աճման ու զարգացման խնդիրն և կաղմում գյուղատնտեսության մեջ վարելիք մեր տնտեսական քաղաքականության հիմքը։ Սակայն, ի՞նչ և հարկավոր, վորպեսզի այդ կապիտալը դրվի կանոնավոր շրջանառության մեջ, և անհրաժեշտ արդյունք տա։ Այս հարցին պատասխանելու համար, յետ կաշխատեմ պարզել, թե ինչ խնդիրներ են դրված գյուղատնտեսության առաջ այս շրջանում, և ինչպիսի ձևերով ու միջոցներով ենք մոտենում առաջդրված խնդիրների լուծմանը։ Գյուղատնտեսության սապարիդում ամենից առաջ մեզ վրա դրված և մի հիմնական խնդիր՝ վերակառուցել գյուղատնտեսությունը, վերացնել նահապետական այն ձևերը, վորով մշակվում և հողը, մի կողմից, և մյուս կողմից գրան զուգընթաց ստեղծել արտադրական նոր փոխհարաբերություններ գյուղում։ Վորպես այդ հիմնական խնդիրներն իրագործելու ոժանդակ միջոց, անհրաժեշտ և գյուղը մեքենայացնել, անհրաժեշտ քանակությամբ տրակտորներ և այլ մեջնաներ մուծելով։ անհրաժեշտ և կազմակերպել գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորը՝ կոյլեկախիլ տնտեսություններ, խորհրդային տնտեսություններ և այլն։ պիտօք և այդ միջոցով շրջանառության մեջ գնել հողերի նորանոր տարածություններ, մեր հողերի խոչըր տարածությունները ըարձնել ոլիտանի, կատարելով անհրաժեշտ գյուղատնտեսական աշխատանքներ, ջրային ռեսուրսներն ավելացնելով և այլ ձևնարկումներով։ Մեր յերկրի մակերեսվույթը, ռելյաֆը բավական խայտաբղետ և։ Տափարակ գաշտավայրերի կողքին դոյցություն ունեն լնոնային բարձրություններ, որանց կողքին սարահարթեր կամ անանցանդի էլիքներ ու լիններ։ Սովորաբար մեր յերկիրը բաժանվում և 4 հիմնական շրջանի՝ գաշտավայրային, նախալեռնային, սարահարթ և, վերջապես, լեռնային։

Յերկրի այդ 4 շրջանները, անշուշտ, տրեստական բաժանման արդյունք չեն, այլ բջիջում են մեր յերկրի մակերեսվույթից—ուլուֆից։ Յերկրի տարբեր մակերեսույթները, բնականարար, մեր առաջ դնում են և տարբեր խնդիրներ, պահանջելով գյուղատրնտեսությունը հարմարեցնել ամեն մի առանձին շրջանի առանձնա-

Հասկություններին : Բնական ե , վոր մեր յուրաքանչյուր քայլը պետք ե բղիեցնել տվյալ հոդամասի բնական , կիմայական և այլ պարմաններից : Յերկրի ուլյեֆից սերտ կախում ունեն նաև վյուզառնատեսական մշակույթները . կան բարձր տեխնիքական բույսեր , հացարույսերի վայրեր , խոտհարքներ , լեռնային արտասանվիճեր և այլն և այլն : Այսպիսով մեր յերկրի ուլյեֆն ինքնին բնորոշում և զյուզառնատեսության գանազան մշակույթների և ձյուզիքի զարգացման հերավրությունները , կանխորոշում և նրա հետանկարները : Բարձր տեխնիքական բույսերի մշակույթի կողքին մենք ունենք և ալպյան բուսականությամբ անվոր արգյունաբերական անասնապահություն , արտաշին տնտեսությունների վրա հիմնված կաթնարդյունաբերության հետ , զուգընթաց զարգանում և նաև մեր չերամապահությունը և այլն : Այժմ տեսնենք , թե վորոնք են մեր անելիքները այդ չորս շրջանների նկատմամբ : Առաջինը դաշտային շրջանն է : Այդ շրջանը բնորոշվում է , վորոշիութեականինիքական կուլտուրաների շրջան : Դաշտային շրջանում գյուղատնտեսության մեջ մեր հիմնական գիծը պետք և լինի զարգացնել տեխնիքական կուլտուրաների մշակույթը : Մեր ձեռքի տակ յեղած ավյալներից պարզվում , և , վոր դաշտային շրջանում ցանքերի 20 տոկոսը գետես հացահատիկն ե կազմում , մի բան , փորի դեմ պետք և անողոք պայքարել :

Ցանքափոխության տեսակետից հացահատիկների և խոտհարքների համար անհրաժեշտ տարածությունն ապահովելով , այդ շրջանում ամեն կերպ պետք ե ընդարձակել կուլտուրական մշակույթների տարածությունը , վերացնելով արդելառիթ բոլոր պատճառները :

Յերկրորդ շրջանը զինամուրապես պետք և համարել պտղատու և խաղողի այգիների շրջանը , վորը նողաստավոր պայմաններ ունի նաև ծխախոտազործության համար : Այսուղ մեր ուշագրությունը պետք ե զենարոնացնենք այգեգործության վրա : Խաղողի և առհասարակ պտղատու այգիների մշակույթը մեր ժողտնտեսության մեջ ունի կարեռ նշանակություն , և մեր հնդամյա պլանի մեջ ապահովված ե պտղատու բույսերի ու խաղողի այգիների զարգացման անհրաժեշտ թափը :

Յերրորդ շրջանը՝ սարահարթն ե , հացահատիկների շրջանը , խաշնարածության վորոշ թեքումով : Հացահատիկների զարգացման բոլոր նախադրյալները կան այստեղ , անհրաժեշտ և վորոշ ձեռնարկումներով ապահովել հացահատիկային մշակույթի ինտենսիվ զարգացումն այս շրջանում : Անասնապահության համար

վորոշ գրական տվյալներ ունենալով՝ յերբորդ շրջանն այս տեսակի սիմֆոնիկ հանդիքանում և փոխանցման մի շրջան գեղի լեռնային բազառապես անասնապահական շրջանը:

Արդ շրջանն, ուրեմն, արդյան կուլտուրաների շրջանն և, վորհարավորություն և տալիս արդյունաբարական անասնապահությունը զարգացնելու:

Գյուղանաեւության ասպարիզում առաջադրած խնդիրները լուծելու համար հարկավոր և նախ և առաջ գյուղատնեսության աերթիառիքայի կազմակերպում: Այս աշխատանքը մեզանում ամենահրատապ խնդիրներից մեկն է: Դուք անսաք, թե շրջանառության մեջ մենք ինչքան քիչ հոգ ունենք: Հարկավոր և արդ հողերի քանակը ավելացնել: այս խնդիրը զրվում և մեր առաջ հրատապ և անհրաժեշտ կերպով: Տերթիառիքայի կազմակերպման համար առաջին հերթին անհրաժեշտ և ուշագրություն զարձնել հողերի բարելավման աշխատանքների վրա, փորոնց նպատակը պետք և լինի մաքրել քարքարոս, անպետք հողերը և ցանելու համար պետքան զարձնել: Անջրդի արոտավայրերին ջուր տալու հնարավորություն ստեղծելով, ճանապարհներ անցկացնելով, կայաններ շինելով, առուներ պատրաստելով, անասուններին ջրելու տեղ պատրաստելով, մենք յենթագրում ենք հողամյակի ընթացքում 20,000 հեկտար անհարմար հողեր վերածել արոտավայրերի և ժամանել մեր շրջանառության ցանցի մեջ: Այս աշխատանքների համար 5-ամյա պլանը բավական զգալի գումար և նախատեսել՝ մեկ միլիոն 928 հազար ոուրիշ: Մեր մելիորատիվ ձեռնարկումները, անշուշտ, ունենալու յեն իրենց դրական արդյունքները մեր գյուղացու հողաբաժինն ավելացնելու տեսակետից: Բացի իմ հիշած զգալի գումարից, այս արագարիզում մանր-մունի աշխատանքներ ել կատարվելու յեն աեղական միջոցներով:

Տերթիառիքայի կազմակերպման յերկրորդ կարեռը խնդիրը, վորոշ պետք և նպաստի մեր յուլղատնեսության զարգացմանը, այդ հողերի վոռոգման կամ խոփացիոն աշխատանքներն են: Այս ասպարիզում, ընկերներ, մենք մի շարք խոշոր նվաճումներ ենք ունեցել անցյալում, և նախատեսնում ենք մի շարք նոր ձեռնարկումներ 5-ամյակի ընթացքում: Մենք ձեռնարկել ենք այնպիսի խոշոր խոփացիոն աշխատանքների, ինչպես են՝ Ղոերի, Արագդայանի, Ղարասուի և Զանդիբասարի հողերի վոռոգումը, յեթե ինկատի չառնենք փոքր Սարդարաբարից և Այգը լճից վոռոգվող և Շիրակի գաշտի տարածությունները, վորտեղ այսոր խոշոր աշխատանքներ են կատարված:

Այդք էմի և Փոքր Սարգարարատի ջրանցքների աշխատանքներն արգեն կարելի յեւ ավարտված համարել . վերջացած են և ժյուս մի քանի խոսոր ջրանցքները , վորոնք զգալիորեն նպաստեցին մեր գաշտավարության զարգացմանը : Անցյալ աշխատանքների վրա յես կանգ չեմ առնում : Իսիդացիոն այն նոր աշխատանքներից , վոր մենք ծրագրում ենք այս հնգամյակում , պետք և Զեր ուշաղբությունը հրավիրեմ Դուերի վրա , վարաեզ վոռոզվելու յե 34,000 հեկտար նոր հող , այս տարածությունից 5-ամյակի վերջում սպատափորձվելու յե 25,000 հեկտար : Արարդայանում վոռոզվելու յե 10,000 հեկտար , վորից կողմանը բենք 4000 հեկտար : Հարասուի և Զանդիբարասարի շրջանում վոռոզվելու յե 21,000 զետյատին հող , վորի մեծ մասը պետք և հնգամյակի վերջին պիտանի դառնա ցանքի համար . բացի գրանից , կատարվելու յեն գոնազան մանր աշխատանքներ Զարբախում , Արու-Հայաթի , Զանդուի , Եջմիածնի ջրանցքների վրա , վորոնք բոլորը միասին պետք և տան 4100 հեկտար նոր հող : Այդ իսիդացիոն աշխատանքների հետեւանքով ջրովի հողերի տարածությունը հնգամյակում ամելանում և 59,500 հեկտարով , վորից 47,300 հեկտարը բոլորովին նոր հողեր են լինելու . բացի գրանից , յերկրորդ հնգամյակի սկրցրին մենք կունենանք ելի 15,000 հեկտար նոր հող , վոր այս հրնամյակում ի վիճակի շնչել լինելու տնտեսապես սպատափորձելու : Այսպիսով , մեր ցանքերի տարածությունը հնգամյակի վերջում կկազմի 45 տոկոս : Այդ աշխատանքների համար հնգամյա պլանում նախատեսված է 32,900 հազար սուրբի , վորից բնակչության միջոցները կազմում են 3,450 հազար սուրբի : Մենք միայն մեր յերկրի ամբողջ տարածությունը վոռոզվելու համար հնգամյակում յենթագրում ենք ծախսել 32,900,000 սուրբի : Այդ գումարի խոշորագույն մասը ծախսվելու յե Դուերի վոռոզման վրա , վորի հետեւանքով Յեղվարդի և Քանաքեռի տափարակները այսորվա խոպան դրությունից կվերածվեն մշակելի գաշտերի :

Այսուհետեւ , տերրիտորիայի կազմակերպման տեսակետից անհրաժեշտ և մեծ ուշաղբություն զարձնել հողաշինարարության վրա , մի բան , վորին մենք ձեռնամուխ ենք յեղել , և վորը սակայն մինչև այսոք լուծված չե : Յեթե մենք կարողացել ենք միագուռըյան հողաշինարարություն կատարել , այս ել խիստ թշրի ձևավով , ապա գյուղամիջյան շինարարությանը ձեռնամուխ ենք լինում միայն այսոր . այս աշխատանքը մեզանից պահանջում է զշալի լարվածություն : Զնայած հողաշինարարական աշխատանքների խիստ կարեվորությանը և շտապողականությանը , այնուա-

մենայնիվ, նրանց բարդության հետևանքով հողաշխարարությունը հնարավոր կլինի վերջացնել մեղանում միայն 9 տարվա ընթացքում։ այս հնդամյակում մենք կկատարենք հողաշխարարական աշխատանքների միայն մի մասը։ Հողաշխարարական ամբողջ աշխատանքներն ավարտելու համար անհրաժեշտ է 4.700.000 ռուբլի, սակայն այս հնդամյակում նախատեսված են 2.050 հողար ռուբլի։ այսպիսով գյուղմիջյան հողաշխարարության մոտ 50 տոկոսը մենք կկարողանանք ավարտել առաջիկա հնդամյակի ընթացքում։

Հողաշխարարության հետ սերտ կապված են նաև գյուղական տնտեսությունների տարարնակեցման (расселение) և գաղթեցման (переселение) հարցերը։

Հնդամյան պլանով նախատեսված և 10.505 տնտեսությունների տարարնակեցման, կաղմակերպման և բարեկարգության համար ծախսել 1.764.900 ռուբլի, վորից բնակչության միջոցներից՝ 591.300 ռուբլի։ Հողասակագության հետեւանքով յերկրի ներսում կատարվելիք տարարնակեցումը, ինչպես նաև յեկած և յեկող գաղթականության կարիքները բավարարելու նպատակով հնդամյակը նախատեսում և 58990 հեկտար հողային տարածություն, վորից 36190 հեկտարը նոր վուողվելիք հողերից, ինչ մնացած 22.800 հեկտարը՝ հողաշխարարության հետեւանքով ազատված հողամասերից։ Հողսվ յենթաղրվում և բավարարել 9640 ծուխ կամ 48.200 շտուչ, վորոնցից 1360 նոր յեկող տնտեսություն կամ 6400 շտուչ։ Նախատեսված և այդ նպատակի համար հինգ տարում ծախսել 6264 հազար ռուբլի, վորից բնակչության միջոցները կաղմելու յեն 1.446 հազար ռուբլի։ Այս ձեռնարկումներով վորուշ չափով մենք կմեղմացնենք հողանեղվածությունը և կլուծենք գաղթականների տեղափորման հարցը։

Հողի կաղմակերպման խնդրում խոչը գեր և կատարում մեքնամատակարարման դրույթը։ 1926 թ. կատարված ընտրովի 10 տոկոսային հետազոտությունը պարզեց, վոր ինվենտարից զուրկ տնտեսությունները կազմում են բոլոր տնտեսությունների 56 տոկոսը։ Յուց տալու համար, թե վորքան աղքատ և մեր գյուղատեսությունն ինվենտարով, յեւ կրեմմ մի թիվ միայն։ յուրաքանչյուր չնչին ընկնում և 2 ռուբլի 58 կոպեկի ինվենտար։ պարզ և, վոր այդ ինվենտարով գյուղատնտեսությունը չի կարու բարձրանալ։ Դեռևս նահապետական արորը զործում և այնպիսի գաղտավայրային շրջաններում, վորտեղ կարող և տրակտորն աշխատել։ մենք դեռ չենք կարողացել վերացնել նահապետա-

կան դործիքները . մենք այս ասուզարիդում անելիքներ շատ ունենք : Ճիշտ և , մենք հնդամյա պղանով նախատեսել ենք զգալի զումարներ , զգալի այս իմաստով , վոր մեր հնարավորությունները չեն թույլ տալիս նույնիսկ այդքանը հատկացնել : Յեթե վեցոցնենք նույն ցուցանիշը , ապա հնդամյակի վերջում յուրաքանչյուր չնչին ընկնազ ինմինստարի զումարը համաօպք կլինի 7 առողի 72 կոպեկի , մի զամար , վորը ինքնին մեծ չեն , ոտկայն մեր հնարավորությունների հետ համեմատած՝ մեծ նվաճում են : Մեքենամատակարարման ընդհանուր զումարը 6.738.000 ռուբլի յն . Այդ զումարի մեջ ե մասնում նաև ներմուծվելիք 711 նոր տրակառների արժեքը և վերանորոգման արհեստանոցների կաղմակերպումը :

Գյուղատնտ տության զարգացման և վերելքի ահսակետից խոշոր նշանակություն ունի զյուղատնտեսության ինդուստրացման զործը , այսինքն՝ արդյունաբերական ճյուղերի կազմակերպման զործը մեր զյուղատնտեսության մեջ : Գյուղատնտեսության ինդուստրացման ասպարիդում մեր 5-ամյակում նախատեսնում ենք մի շարք ձեռնարկներներ : Այդ ձեռնարկներները նախատելու յին զյուղատնտեսությունն ել ավելի բարձրացնելուն : Գյուղատնտեսության արտադրանքի իրացման զործի կանոնավորումը , անշուշտ , ապահովելու յև նույն զյուղատնտեսության հետապն զարգացումը , և այս անսակետից զյուղատնտեսության ինդուստրացման խնդիրը ստանում և վճռական զործոնի նշանակություն :

Ծնդզենով այն կարևոր գերը , վոր ունի զյուղի ինդուստրացումը զյուղատնտեսության արտադրողականության բարձրացման , ուցիոնալացման յենթարկելու դործում , ժամանակի սղության պատճառով յն խիստ համառոտակի կթվեմ մեր ձեռնարկումները 5-ամյակի ընթացքում : Դաշտային և բանջարանոցային տնտեսության բերքը վերամշակման յենթարկելու նպատակով մենք յենթադրում ենք նախ կառուցել չորս զործարան պտուղները չորացնելու համար . բացի գրանից , յերկու կոնսերվի զործարան՝ մեկը Յերևանում , մյուսն Աշտարակում , այնուհետեւ՝ յերեք փոքր մասն պտուղներ պահնելու համար : Այդ ձեռնարկները կարժեան 450 հազար ռուբլի :

Միախոտազործությունը մեզ մատ մեծ հեռանկարներ ունի զարգանալու համար , նա աստիճանաբար ապաղայում մեր զյուղացու տնտեսության մեջ խոշոր տեղ է դրավում , մենք մեծ ուշադրություն պիտի զարմնենք նրա զարգացման և մասնավորագն վորակը բարձրացնելու վրա : Այդ նպատակով , ընկերներ , այս հաղամյա-

կում նախատեսել ենք յերեք Փիբմենացիոն գործարան կառուցել, 285 հազար ոռորդի արժողությամբ :

Այսուհետև, խաղողի և գինու գործի մասին :

Պատք ե տեղը, վոր մեր «Արարատ» գործարանը գետես չի կարողացել ընդդրիել խաղողի ամբողջ արտադրանքը : Անցյալ տարի նա կարողացավ միայն բերքի 57 տոկոսն ընդունել, իսկ մնացածը, պարզ է, անցավ մասնավորների ձեռքը : Խաղողի ամբողջ բերքն ընդունելու համար մենք մտանների և ամանների մոտ 81,5 տոկոս պակաս ունենք : Անհրաժեշտ և այդ գործը կանոնավորելու համար վորոշ կաղիտալ հատկացնել, վորոշ ներքրություն ունենանք այդ հումանյթի վաճառման գործը կազմակերպել լիիվ չափերով : Այդ նպատակով մենք յեթարրում ենք հիմնել մտաններ, գինեղործարան 12 հատ, ողունոր գործարան, գնելնոր վակուում-ապարատներ . այդ ամենի համար հարկավոր և 2 միլիոն 280.000 ոռորդի : Յերբ ընկ. Տեր-Գարրիկելյանը յերեկ զեկուցում եր այսաեղ, բնկերները նրան մի հարց տվեցին, թե՝ «Ե՞՞վոր Խորհրդացին իշխանությունը դևմ և ալիսուլին . ուրեմն ի՞նչու համար եք ուղղում բարձրացնել գինեղործությունը» : Բնկ. Տեր-Գարրիկելյանը շատ պարզորոշ կերպով բացարեց այդ հարցը : Բնկերներ, պետք չ տոել, վոր գինեղործությունը մեղանում մեծ հնառանկարներ ունի զարգանալու . զյուղանախառնության այդ ճյուղի զարգացումից կախված և զյուղական բնակչության բարեկեցությունը . անտեսել այս կարեոր հանդամանքը մենք չենք կարող : Բացի զրանից մեր արտադրած գինին մենք կարող ենք սպառել արտասահմանում : Հարկավոր և միայն մեր գինու վորակի վրա վորոշ ուշադրություն զարձնել, զինին հարմարեցնել արտասահմանյան սպառողի ճաշակին . այդ գինեղործմ նրա սպառման գործն ապահոված կլինի :

Մյուս կողմից մենք աստիճանաբար պետք և անցնենք նաև ոն-ալիսուլ գինեղներ պատրաստելու գործին :

Դուք գիտեք, վոր այսաեղ մի ժամանակ կար «Վիտալին» կոչված խմիչքը, կամ խաղողի հյութը, վորը այլուհու չի պարունակում իր մեջ : Այսպիսով, յեթե մեր խմիչքները հարմարեցնենք արտասահմանյան շուկաների պահանջներին, մի կողմից, և մյուս կողմից՝ ներքին գործածության համար այնպիսի խմիչքներ կարողանանք պատրաստել, վոր ալիսուլ չպարունակեն, մենք կպահպանենք և կզարդացնենք զյուղանախառնության նաև այդ կարեոր ճյուղը :

Գյուղատնտեսական հումուրթները վերամշակելու նպատակով

մենք այս համակառմ նախատեսել ենք կառուցել Յ աղաց և վուշից
ու կտավՀատից ձեթ պատրաստաղ դործարան։ Հայաստանում
մանր-մունիք ջրաղացներն իրենց տեխնիկական հարմարություննե-
րով, կարելի յեւ ասել, անգետք են հումուրթը կանոնավոր մշակե-
լու համար, ուստի համար պլանով նախատեսված և նոր ջրաղաց-
ների կառուցումը։ Հումուրթի մշակման ասպարիզում մենք նախա-
տեսել ենք մի նոր ձեռնարկություն ևս, այդ Նոր-Բայրադնառում
կառուցվելիք ոսլա-շաքարային գործարանն է։ Յես հիշում եմ, թե
ինչպես անցյալ համագումարում Նոր-Բայրադներն այս-
տեղ գանդատվում եյին, վոր իրենց կարտոֆելը չեն կարողանում
արտահանել և ատիպաված թափում են գետը։ Այս նոր գործարանի
կառուցումը Հնարավորությունն կտա կարտոֆելից ոսլա և շաքար
պատրաստել և շահավետ կերպով իրացման յենթարկել և այդպի-
սով նպաստել գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացմանը։
Զրագացների, ձեթհանների և ոսլա-շաքարային գործարանի կա-
ռուցման համար մենք նախատեսել ենք 155·000 ոուրի։

Այժմ՝ մեր կաթնատնտեսության մասին։ Կաթնատնտեսության
զարգացման տեսակետից մեր յերկիրն ունի բոլոր բնական անհրա-
ժեշտ նախագրյալները։ մեր կաթնամթերքները բարձր վորակի յեն,
մեր չվեցարական պանիրն իր վորակով մրցում և լավագույն չվե-
ցարական պանրի հետ։ Յեվ վորակեազի եւ ավելի նպաստենք գյու-
ղատնտեսության այդ ճյուղի զարգացմանը, հարկավոր և ստեղծել
այնպիսի պայմաններ, վոր թե ստացվելիք կաթի քանակը և թե
նրա վորակը բարձրանա և ապա կաթնամթերքների վերամշակ-
ման գործն ել ավելի կաղմակերպված ու կատարելազործված հիմ-
քերի վրա զրպի։

Մենք այսոր Հայաստանում ունենք կաթնամթերքների 13—14
գործարան, սակայն չնորհիվ այն հանգամանքի, վոր այդ գործա-
րանների գոնիված շրջաններում գյուղական տնտեսությունները
չունեն անհրաժեշտ քանակությամբ կաթնատու անասուններ, այդ
գործարաններն աշխատում են վոչ լրիվ բենվածությամբ։ Սա-
կայն այդ չի նշանակում, վոր Լոսի-Փամբակի, Ղարաքիլիսայի
շրջաններում կամ Լենինականում ու Նոր-Բայրադներում մենք դեռևս
նորանոր գործարաններ չպետք և կառուցենք, քանի վոր զրանք
իսկական կաթնատնտեսական շրջաններ են, ունեն հոկայտկան քո-
նակությամբ հումուրթ։ Հնդամյակում յենթագրվում և կառուցել
15 մեծ, 16 միջակ և 3 փոքր պանրազործարան, յերկու կաթնա-
գործարան և 9 զանազան տեսակի մասաններ՝ պահածոնների հա-
մար։ Բնդ հանուր առմամբ հնդամյակում այդ ուղղությամբ պիտի

ծախսենք 4.355.000 ռուբլի : Բնկերներ, կաթնարդյունարերության մեջ մասնավորապես մեծ զեր և կատարում վոչ միայն այն, թե ինչքան նոր դումար պիտի ծախսենք, այլ և այն, թե ինչպես պիտք և կարմակերպենք զործը : Հարցն այն և, վոր մենք ունենալով բոլոր բնական նպաստավոր պայմանները, չենք ստանում համապատասխան արդյունք : Անհրաժեշտ և այս հարցի վրա մեծ ուշադրություն դարձնել :

Թույլ ավելի, բնկերներ, այլեւ յերկար կանգ չառնել դյուզի ինդուստրացման նոր ձեռնարկումների վրա, այլ թվել միայն :

Անսանապահության արտադրանքի վերամշակության համար բարդի թվացարան, պանրագործարան և այլ հարմարություններ կառուցելու նպաստական նախատեսված և 120.000 ռուբլի : Աղջքի 10 զանազան գործարանների վրա ծախսելու յենք 150.000 ռուբլի : Կառուցելու յենք բեկոնի գործարան՝ խողի մին արտահանման պատրաստելու համար, վոր կարծենա 400.000 ռուբլի : Թոշնարուծության համար ծախսելու յենք 218.000 ռուբլի, մետաքսագործության վրա ծախսվելու յե 40.000 ռուբլի և այլն : Փամանակի սղության պատճառով յես այլեւ կանգ չեմ առնի դյուզի ինդուստրացման հարցի վրա :

Անցնում յեմ դյուզի ելեքտրոֆիկացիայի հարցին :

Ելեքտրոֆիկացիայի վրա յես մանրամասն կանգ կառնեմ արդյունաբերության մասին խոսելիս : Բայց համենայն դեպք անհրաժեշտ և այսուղ մի յերկու խոսք ասել : Յենթագրվում և մեր 7 շրջաններում՝ Դիլիջանում, Գորիսում, Մեղրիում, Ախատ-Դարբաշխագում, Քեչքչընդում, Կարմիր դյուզում և Բարձրայում կաղմակերպել դյուզական փոքրիկ ելեքտրոնկայաններ, վրանց ուժը հավասար և լինելու 540 կիլովատի . այս աշխատանքների համար 5-ամյա պլանով նախատեսված և 1.209.000 ռուբլի :

Տերիուրիխայի կաղմակերպման հարցում խոշոր դեր և կատարում հողի պարարտացման խույիրը : Գոմաղը, վոր ամենալավ անսահկի պարարտանյութն և, հաճախ չեր բավարարում հողը պարարտացման համար, զրա համար անհրաժեշտ են մի չարք քիմիական միջոցներ, ցիանամիդի, սուագիրֆոոֆատ և այլն : Արդյունաբերության մասին խոսելիս յես կանգ կառնեմ քիմիական պարարտանյութերի հարցի վրա :

Հողի պարարտացման գործի վրա զարձնելով մեր ուշադրությունը, մենք 5-ամյա պլանով նախատեսել յենք 4.944.000 ռուբլի : Յենթագրում ենք, վոր բամբակի ամբողջ տարածությունը

Ն-ամյակի ընթացքում կարող ենք պարարտացնել ամբողջովին, պոտատու արգիները՝ 10 %-ով, ծխախոտի ցանքները՝ 20 %-ով, հացահատիկները՝ 15 %-ով: Այսուհետեւ, այսոր կարեւրագույն հարց և նաև սերմապատրաստման և սերմամատակարարման դրամի կազմակերպումը: Լավորակ սերմ պատրաստելու և գյուղացուն մտակարարելու համար անհրաժեշտ եռուննալ սերմարուծարաններ, տեսակավոր սերմերի կայաններ, պիտուկան սերմանման ֆունդ, հացահատիկների պահեստներ և այլն. այդ գեղագում միայն համարավոր կլինի բայց սերմ սահանալ և մաքրած սերմ հայթային գյուղացիներին՝ բերքատվության բարձրացմանը զարկ տալու նպատակով: Մերժանման ործը կանոնավորելու նպատակով համար 1-300.000 ռ.: Փորձնական դործը նույնական նպատակոված և մերժական գործը նույնական նպատակոված յէ մեր տերիտորիայի կազմակերպմանը: Փորձնական հիմնարկների, Եջմիածնի սելեկցիոն կայայինի, մեքենադորժական բյուրոնների, Եջմիածնի և Լենինականի փորձադադարների կազմակերպման, ինչպես նաև զիննորդության, խաղողի մշակութին և անամարտությանը նպաստող փորձնական ձեռնարկությունների, ողերեւութարանական շահցի կարգմակերպման և գիտական հետազոտությունների համար հնդամյա պլանով նախատեսված և 1.242.000 ռ.:

Մեր ուշագրությունից չեր կարող վրիպել ազգությունության դործը: Մենք կարծում ենք, վոր գյուղատնտեսությունը հաջող բերք կտա միայն այն ժամանակ, յիր մենք վոչ միայն վորոշ գումարներ կլնենք այդ դործի մեջ, այլև կտրամազրենք անհրաժեշտ քանակությամբ պատրաստված ու ձեռնհաս ազգունուններ, վորոնց կարողանան նպատակ մեր հիմնական ներդրումների նպատակահարմար ողտագործմանը, մեր գյուղատնտեսության բարձրացմանը: Մենք գիտենք, վոր ազգունունների կարիքը շատ մեծ է, մենք նրանց ողակաց զգում ենք սուր կերպով: Հստ Հոգդողկոմատի տվյալների մեջ հիշեց տարվա ընթացքում հարկավոր են մոտ 343 ազգունում գյուղատնտեսության մեջ աշխատելու համար:

Ազգունումներով դյուղատնտեսությունն ապահովելուց հետո անհրաժեշտ և նաև ունենալ ազգուղունկանը՝ գյուղատնտեսական գիտելիքներն աղդաբնակության մեջ տարածելու նպատակով:

Ազգունումիական ողնության համար մենք նախատեսել ենք հնդամյակում ծախսել 161.000 ռուբլի:

Տերիտորիայի կազմակերպմանը նպաստող մի շարք՝ թուուցիկ կերպով հիշատակված ձեռնարկումների հետեանքով, բնականարար, ավելանալու յէ մեր ցանքերի տարածությունը: Հնդամյակի

ընթացքում աճումը կազմելու յի 42 %, այլ խոսքով՝ այս տարվա 319 հազար հեկտարի գիմաց մենք ունենալու յինք 449 հազար հեկտար։ Հացահատիկների ցանքերի տարածությունը 287,4 հազար հեկտարից բարձրանում է 336,3 հազար հեկտարի կամ աճում է 17 %-ով, տեխնիքական բույսերի 15.367 հեկտարը գտնում է 54800 հեկտար կամ աճում է 258,8 %-ով։ այս թվում բաժինը ցանքերը 10176 հեկտարից հասնում յին 34900 հեկտարի կամ աճում են 238 %-ով։ Պաղառու այդիներն աճում են 59 %-ով, խալողի այդիները՝ 24,3 %-ով։ Մնացած թվերի վրա յիս կանոչ չեմ առնում ժամանակի սղության պատճառով։ Ցանքերի տարածությունը 129,7 հազար հեկտարով ավելանալու յի շնորհիք մեջորածիվ և խիզացիոն աշխատանքների արդ ձեռնարկումները մեզ տալու յին 59500 հեկտար նոր տարածություն, խոպան հողերի ողափորձումից ստանալու յինք 45.900 հեկտար, արոտներից՝ 18.800 հեկտար և վերջապես, անտառային մելխորացիայից՝ 4.900 հեկտար։

Յանքերի տարածության ավելացմամբ, անշուշտ չեն սահմանափակվում մեր ձեռնարկումները: Մեր հերթական անելիքներից բերքատվության բարձրացման կարևորագույն խնդիրը, բնականաբար, պիտի դրավեր մեր առանձին ուշագրությունը: Մի շարք ձեռնարկումներով, այն է՝ աստիճանաբար բազմազատացնեն մշակույթի անցներով, նոր հոգեր (խամ) վարելով, աշնանային ցրտերից անմիջապես առաջ հողը հերկելով զննութեան վեպաշկա,) տեսակագրուստերմացուի մատակարարումով, սերմերի ախտահանումով և զառւմով, շարքացան կատարելով և այլն, մենք յեթոդրում ենք միջին բերքատվությունը հնդամյակի ընթացքում բարձրացնել առնվազն 20 տոկոսով, այսինքն՝ հասնել Անդրդկովիկասի պայմաններին հարմարեցած այդ չափանիշին:

Առանձին կուլտուրաների բնբաժանվությանը, բայց Անգրակետպղ-
յանի բավական զգուշ և պակասեցրած տվյալների, բարձրանալու
յի արագիսի հաջողությունը՝ Հացահատիկային և բակլային մշակություննե-
րի մի հեկտարի բնբարքը 8,2 ցենտներից հնդամյակի վերջում հավա-
սարվելու յի 12,9 ցենտների, բամբակինը 7,9 ցենտներից հասնելու
յի 14,5 ցենտների, ծխախոտինը 7,1-ից՝ 12 ցենտների, ցանողի
խառը 41,2 ցենտներից՝ 70,4 ցենտների, խաղողինը 44 ցենտներից՝
75 ցենտների և այլն և այլն՝ Սակայն բնբաժանվության բարձրաց-
ման այս տոկոսները, անշուշտ, չպիտիք և բավարար համարել: Այս
ուղղությամբ մենք չենք ոգտազործել մեր բոլոր հնարավորու-

ԲՐԱՆՆԵՐԸ : Անհրաժեշտ է հետազա մեր աշխատանքների ընթացքում և լ ավելի ուշադրություն դարձնել, վորովեսղի բերքատվության աստիճանի բարձրացումը հասնի միութենական ցուցանիշն՝

33 %-ին :

Ցանքերի տարածության ավելացման և բերքատվության բարձրացման հետևանքով վորոշ փափոխություններ են մասնում նույն մեր հաշտագուրաժային հաշվեկշռի մեջ։ Հացի և անասունների կերպի հաշվեկշռուն իր մուտքի և յելքի մասերով ավելանում և զգալիորեն։ Դուք զիտեք, ընկերներ, վոր մեր յերկիրը յեղել և և այժմ և լ հաց ներմուծող մի յերկիր և։ Մեր յերկիրի սեփական հացը բնակչության այսոր չի բավարարում և չի բավարարելու նույնիսկ այն դեպքում, յեթե հնդամյակի ընթացքում մեր պիտի զարձրած նոր հոգերի ամրող տարածությունը հացահատիկների մշակույթին հատկացնելու լինենք։ Սակայն հրապուրվել հացահատիկների մշակույթով ի մնաս տեխնիքական մշակույթների մենք չենք կարող։ Հացահատիկային տնտեսությունը մեզանում պիտի զարգանա այսնեղ, վորտեղ տեխնիքական բարձր մշակույթների համար նպաստավոր պայմաններ չկան :

Սակայն ապագայում, յեթե մենք կարողանանք սկիսանի դարձնել մեր զյուղատնտեսության համար բոլոր խոսան տարածությունները, վոր այսոր բարձի թողի յեն արված, ապա հնարավոր կլինի յերկրի ներսի հացով բավարարել յերկրի կարիքները։ Կրրկնում ևմ, այդ ուղիով պիտի զնալ միայն և միայն մեր յերկրի այն մասերում, վորտեղ բարձր կուլտուրաների մշակույթը հնարավոր չե և, վորտեղ կարելի յե միայն զարգացնել հացամշակությունը։ Այսպիսվ, թերես մենք ապագայում յերկրորդ հնդամյակի մասին զեկուցելիս ցույց տանք հացաֆուրաժային բալանսի մեջ առաջանալիք և այդ նոր փոփոխությունները։

Հացահատիկների ընդհանուր բերքը հնդամյակի վերջում ավելանալու յե 50,4 տոկոսով, բնակչության աճումը կազմել և 22,3 տոկ., վորից քաղաքինը 25,3 տոկ. և գյուղինը 21,7 տոկ.։ Բնակչության հացի սպառման քանակը աճում և 36,5 տոկ., հաշվելով մեկ շնչին քաղաքում 15 ու կես փութ, գյուղում 12 փութ տարեկան։ Հացահատիկների բերքի բարձրացման հետևանքով գյուղ ներմուծվող հացի քանակը 32,6 հազար տոննից ինում և 14,4 հազար տոննի, ուրեմն նվազում և 56,4 տոկ., իսկ Հայաստան ներմուծվող հացաֆուրաժը նվազելու յե 7 տոկոսով։ Կրկնում եմ՝ այդ այն ժամանակ, յեր աղջաբնակությունն ընդհանուր առմամբ աճում և 36,6 տոկ.։

Ընկերներ, յես նախադահությունից արդեն նախաղգուշացում
եմ ստացել, վոր պետք և շատ սահմանափակեմ իմ նյութը, ուստի
խնդրում եմ ներողամբութիւննել, յեթե յես հարցերի վրա կանգ առ-
նեմ շատ անցողակի կերպով: Գյուղատնտեսությունը վերջա-
ցնելու համար յես կանդ կառնեմ գյուղատնտեսության մի ու-
րիշ հատվածի—անասնապահության վրա: Բուսաբանության մա-
սին չեմ խոսի, քանի վոր տերիտորիայի կաղմակերպման հար-
ցերը վերլուծելիս հարեանցիրեն շոշափեցի նաև գյուղատնտե-
սության այդ ճյուղին վերաբերող հարցերը:

Մեր յերկիրը, ընկերներ, իր բնական հարստություններով և
իր կլիմայական պայմաններով բոլոր նախադրյալներն ունի ա-
նասնապահության դարգացման համար: Մեր լնոնային հարուստ
արտավայրերը, մեր կլիմայական պայմանները միանդամայն
նպաստավոր են, վորպեսզի անասնապահությունը կարեռագույն
տեղ գրավի մեր գյուղատնտեսության մեջ: Յեզ յեթե անասնա-
պահությունը մինչեւ այժմ զարգացել և կրիայի քայլերով, ապա
դրա պատճառն այն և, վոր նա մեր առանձին ուշագրության ա-
ռարկան չի կազմել: Մենք չենք կենտրոնացրել մեր ուշագրու-
թյունը գյուղատնտեսության այդ ճյուղի վրա, ահա թե ինչու
այսոր, յերբ մենք նպաստակ ենք գրել գյուղատնտեսության ամ-
բողջ արտադրանքը բարձրացնել, գյուղացու հասույթը մեծացնել
և նրա համար բարեկեցիկ վիճակ ստեղծել, անհրաժեշտ և գյու-
ղատնտեսության և այդ ճյուղի վրա դարձնել մեր գլխավոր ու-
շագրությունը: Նախ և առաջ հարկավոր և մեր արտաների կաղ-
մակերպման գործը կանոնավորել: Արոտները մեղանում միանդա-
մայն անխնա կերպով են ոգագործվում: Գյուղատնտեսական գի-
տելիքները ասում են, վոր վորոշ տարածության վրա, յուրաքան-
չյուր հետարի վրա կարելի յե արածացնել միայն վորոշ քանա-
կությամբ անասուն, վո՞չ ավելի, սակայն չնորհիվ մեր անկուլ-
տուրականության, մեր վոչխնայողական վերաբերմունքի դեպի
մեր ունեցած հարստությունները, մենք հաճախ անխնա կերպով
ենք ոգտագործում արոտները, բնոնավորելով այն նորմայից ա-
վելի: Կանոնավոր և ժամանակին կատարած արոտաշինարարու-
թյունն, անշուշտ, պետք և նպաստի կանոնավոր անասնապահու-
թյան զարգացմանը: Այդ ուղղությամբ, ընկերներ, ծամայա ծրա-
գրի մեջ նշված են մի շարք ձեռնարկումներ, մի շարք անելիքներ,
վորոնք նպաստելու յեն արոտաշինարարության գործին: Սակայն
միայն մեր արոտների քանակը լիովին չի բավարարելու զարգա-
ցող և աճող անասնապահությունը: Արոտաշինարարության հետ

միասին մենք դարկ ենք տալու կերի քանակի ավելացմանը՝ առանձնապահությունն ապահովելու նպատակով։ Հնդամյակը նախատեսել և մի շարք ձեռնարկումներ վրապես կեր գործածվող զանազն արժտիքների, ճակնդեղի, ցանովի խոտի, և այլ մշակույթների գարգացման համար։ Սակայն վոչ միայն պետք և կերի քանակին ուժեղացնել, այլ նաև նրա վրապես։ Այս նպատակով մենք պահանջին ուշադրություն ենք դարձրել այսպես կոչված՝ խոտացած կեր ստանալու վրա։ Այսուհետեւ, անասնապահության գարգացման համար կարեւոր նշանակություն ունի և այն հանդամանքը, թե ինչպես են կերակրվում անասունները։ Միայն կանոնավոր կերի չնորհիվ հնարավոր կլինի բարձրացնել կաթի քանակը։ պետք և մեր պայմաններին համապատասխան կերակրման ձեւեր մշակելով բարձրացնել կաթի քանակը, վորից կախված և մեր կաթնատնտեսության և նրա արդյունքների վերամշակության գարգացումը։ Եթե մեր ամբողջ անասունների քանակը վերածենք խոչը յեղացուրավոր անասունների, ապա հնդամյակում կունենանք միջին թվով 27,5 տոկոս աճում, վորից ձիերի քանակն աճում և 33,9 տոկոսով, խոչը յեղջյուրավոր անասունների քանակը՝ 28 տոկոսով և մանր յեղջյուրավորներինը՝ 22,4 տոկոսով։ Վերջինների թվում վաշխարների քանակը կավելանա 17,2 % -ով։ Բանող անասունների քանակը հնդամյակի վերջում կավելանա 38 տոկոսով։

Անասունների քանակի բարձրացման հետ զուգընթաց մենք մտահոգված ենք նաև հնից ժառանգություն մնացած զանդաղաշարժ յեղների և գոմենչների ողտագործումը աստիճանաբար վերացնելու հարցով, փոխարինելով նրանց ավելի վորակյալ կենդանիներով։ Այս տեսակետից մեծ ուշադրություն ենք զարձնելու 5-ամյակում ձիերի քանակի վրա։ Նրանց աճումը հավասար է 33,9 տոկոսի, վորը, իհարեւ, չի կարելի համարել բավարար, բայց և այնպես այս գգալի նվաճում և նոր, ինտենսիվ ձեվերին անցնելու տեսակետից։

Անամնապահության մյուս ճյուղերից՝ մեզվարուժությունը, շերամապահությունը և թոշնաբաւծությունը անցուշա չեյին կարող վրիպել մեր ուշադրությունից հեռանկարային ծրագրերը կադմելիս։ Մեզվարուժությունը մեր հոգացողության առանձին առարկան պետք և զառնա այսուհետեւ, քանի վոր չնորհիվ մեր ծաղկավետ և հյութալի արոտների մեր մեղրի վորակը, համեմատած ուրիշ վայրերի հետ, անհամեմատ բարձր է։ Յենթադրվում է մեզրի ամբողջ արտադրանքը 55 տոկոսով բարձրացնել հնդամյակի վերջում։

Եերամապահությունը նույնպես զարգացման մեծ հետանկարներ ունի : Մեր մի տուփ սերմից ստացվում է 3,3—3,5 փութ բոժոք : Այս մի չտեսնված արդյունք է : Անցյալ տարի Պարսկաստանում մենք սպառեցինք աշաղին քանակությամբ սերմ , չկարողանալով բավարարել նրա ամրող պահանջը : Բայ զեռևս չստուգված տեղեկությունների՝ չերամապահությունը հնարավոր է դարձացնել վոչ միայն այսուղ, վորտեղ կան թթենիներ, այլ և այսուղ, վորտեղ կարելի յե թթի տերեւներ ցանել . նման փորձեր կատարված են Խոտիխում, չերամապահության այդ հայրենիքում :

Մի ուրիշ մասնագետ չերամը գունավոր տերեներով կերակրելու փորձ և արել, վորի հետեանքով ստացվել ե գունավոր մետաքս, վոր ինչպես զիտեք՝ անհամեմատ բարձր և զնահատվում : Թե այդ փորձերը վորքան հիմնովին են և վստահելի, անշուշտ այդ պեսք և ստուգել ե սպա կիրատել նաև մեղանում : Շերամապահությունը մեկ մոտ զրավելու յե անհրաժեշտ տեղ :

Յես ստանձնապես կանգ չեմ առնում թոշնարուծության վրա . այս դյուզատնտեսության այն ճյուղն ե , վոր համեմատարար շտաքիչ կապիտալ և պահանջում : Մինչեւ այժմ մենք թոշնարուծության վրա նայում ենք մատների արանքով : Նոր-Բայազետի դավադից , բատ իմ ունեցած տեղեկությունների , նախապատերազմյան շրջաններում արտահանվել ե մոտ 15 միլիոն ձու , իսկ այժմ մեր շուկայում այդ քանակը չկա : Հարկավոր ե , վոր դյուզական յուրաքանչյուր տնտեսություն զիտակցի ; թե ինչպիսի արդյունավետ ճյուղ ե թոշնարուծությունը թե իր և թե՝ մեր ընդհանուր ժողովրդական տնտեսության համար :

Անասնաբուծությանը զարկ տալու նպատակով առանձին ուշագրություն ենք գարձրել և անասնաբուծական զործի կաղմակերպման վրա : Զանազան եղիքոստիհաների՝ չումայի , սատի , ութիրիսախտի և այլ հիվանդությունների գեմ պայքարելու նպատակով զավառային անասնաբուծական ցանցը կազմակերպելու , անառունների համար բուժակայաններ և հիվանդանոցներ կառուցելու նպատակով հետամյակում նախատեսված ե 318 հաղարռությունների պատճեն : Այսուղ առանձնապես սպառք և հիշատակել անասնաբուծական-բակտերիուլողիսական Անդրկովկասյան ինստիտուտի բացումը մեղանում՝ Եերևանում , վորը բացի խոշոր ժողովրդատնտեսական նշանակությունից , նաև մի կոթող և և արժանի պատասխան զանազան հակահեղափոխական թափթփութերի կողմից Անդրկովկասյան Ֆեղերացիայի գեմ տարածվող հերթարանքներին :

Թույլ ավելք անցնել գյուղատնտեսության մի այլ ճյուղին՝ անտառային անտեսությանը : Հայտատանն իր անտառների տարածությամբ համարվում է վոչ-անտառային յերկիր :

Մեր անտառները համեմատած մեր տերիսորիայի հետ՝ շատ շնչին տարածություն են բանում : Սակայն չնայած դրան, մենք անհրաժեշտ ու շաղբառաթյուն չենք հայտնաբերել այդ սակալաթիվ անտառային անտեսությունը պահպանելու համար : Անտառների անհրաժեշտ և ուցիոնալ շահազործումն ինքնըսափնքյան պայմանավորում է նրանց դարձացման հետագա ուղիները : Մեր անտառները, չնորհիվ մի շարք պայմանների, (ճանապարհների բացակայության, հետափորության և այլն) կամ չեն շահազործվում անհրաժեշտ չափով, կամ վորանեզ այդ պայմանները նպաստավոր են, շահազործվում են անխնա կերպով : Մինչդեռ մեր անտառներն ըստ նախնական ավյալների ի վիճակի յեն տալու մեր շինանյութերի մոտ 70 % -ը : Մյուս կողմից՝ անհրաժեշտ և անտառային տարածության ընդարձակման մասին ես մտածել : Այդ ուզուությունը վարուց աշխատանքներ հնդամյա պլանի մեջ նախատեսված են : Անտառների տարածությունը հնդամյակի բնթացքում չի փոխվում : Անտառային տարածությունն այսոր և հնդամյակի վերջում կազմում ե 362 հազար հեկտար, վորից զուտ անտառի տարածությունը հագասար և 321 հազար հեկտարի : Ճիշտ ե, անտառների տարածության մի մասը հատկացնում ենք ցանքերի, մոտավորապես 4000 դեսյատին, սակայն դրա փոխարեն յենթագրում ենք նույն քանակությամբ նոր անտառներ ավելացնել : Մեր անտառների յեկամուտը, վոր դոյանում և անտառանյութի վաճառքից, անտառների կողմնակի ուղարգործումից, վորսորդությունից և զանազան սուլքանքներից ու տույժերից, հնդամյակի վերջում ավելանում է 73 % -ով, իսկ նույն անտառների պահպանման և շահազործման ծախքերը — 72 % -ով : Զուտ յեկամուտն ամերկանալու յե 56 % -ով : Անտառանյութի վաճառքը հնդամյակի վերջում ավելանալու յե 30 % -ով :

Ամփուշներք գյուղատնտեսության մասին մեր ասածները, ընուրուշերով նրա հետագա ընդհանուր պատկերը : Մեր բոլոր հիմնական ներդրումների, մեր ձեռնարկած մի շարք միջոցների հետեւնքով փոխվելու յեն անկասկած նաև նրա արգյունքները :

Գյուղատնտեսության ամբողջ արտադրանքը ստանում է հետեւյալ պատկերը հնդամյակի վերջում : Յեթե 27—28 թ. գյուղատնտեսության ամբողջ արտադրանքը հավասար եր 81,5 միլիոն ուռելու (հաշված թե բուսաբուծության և թե անտառաբուծության

դումարները), ասլա 32—33 թվականներին այդ արտադրանքը մոտավորապես կրկնապատկվում է, հավասարվելով 153 միլիոն ռուբլու, այսինքն՝ աճում է 87,9 %—ով: Ուրիշ խոսքով՝ յեթե գյուղատնտեսությունը արտադրում էր 100 ռ. ապրանք, հնդամյակի վերջում կարտազրի մոտ 188 ռուբ. ապրանք: Հողագործության ամբողջ արտադրանքը 50,2 միլիոն ռուբլուց բարձրանում է մինչև 96,3 ռուբլու կամ աճում է 92%—ով, անասնաբուժությունը՝ 28,7 միլիոն ռուբլու արտադրանքի դիմաց տալիս է 53 միլիոն ռուբլու, ուրիշ խոսքով՝ աճում է 88 տոկոսով: Այդ ընդհանուր արտադրանքի հետ զուգընթաց ավելանում է նաև նրա ապրանքային մասը: Ընդհանուր արտադրանքի մի մասը մնում է գյուղացիների մոտ, վորպես ապրումտի միջոց, իսկ մյուսը հանվում է շուկա վրապես ապրանք: Գյուղատնտեսության արտադրանքի ապրանքային մասի պատկերը հնդամյակի վերջում կլինի հետեւյալը — գյուղատնտեսության ամբողջ 81,5 միլիոն ռուբլու արտադրանքից 27—28 տարում իրեն ապրանք շուկա յեր հանվել 19,3 միլիոն ռուբլի, 32—33 թվին շուկա յե հանվելու 205,1 տոկոսով ավելի, այսինքն՝ 58,9 միլիոն ռուբլի: Այսպիսվ, ապրանքայնությունն աճում է զգալիորեն: Այս գումարից հացահատիկների ապրանքայնությունը կազմում էր 9,2 միլիոն ռուբլի, վոր հնդամյակում զամանում է 32,5 միլիոն ռուբլի, այսինքն՝ ավելանում է 253 տոկոսով, անասնապահության արտադրանքը 10,1 միլիոն ռուբլուց զառնալու յե 26,4 միլիոն ռուբլի կամ աճելու է 161,4 տոկոսով: Այսպիսով, թե ամբողջ արտադրանքի և թե ապրանքային մասի աճման մեծ տոկոսներն ինքնին ցույց են տալիս, թի ինչպիսի բուռն թափով զարգանում է մեր գյուղատնտեսությունը հնդամյակի ընթացքում: Սակայն միայն զարգացման այս պրոցեսը չե, վոր կլանում է մեր ամբողջ ուշադրությունը: Մենք զարգացման այդ պրոցեսի մեջ զնում ենք դասակարգային սոցիալիստական հասկացողություն: Մենք խոսում ենք վոչ թե միայն մեր տնտեսությունը, մեր շինարարությունը բարձրացնելու մասին, այլ այդ տնտեսությունը, այդ շինարարությունը սոցիալիստական ձևերով բարձրացնելու մասին: մեզ ամենից առաջ հետաքրքրում է ժողոտնտեսության սոցիալիստական բարձրացումը, սոցիալիստական վերակառուցումը: Ահա թե ինչու առանձին շեշտ ենք զնում մենք նաև գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորի զարգացման վրա: Սոցիալիստական սեկտորն այս ասպարիզում զարգանում է այսոր յերկու հղոր կազմակերպություններով: Դրանցից առաջինը խորհրդային տնտեսություններն են, իսկ յերկրորդը կուլեկ-

առիվ տնտեսությունները : Խորհրդային տնտեսությունները կոչ-
ված են գյուղատնտեսության վերակառուցման աշխատանքների
մեջ որինակ ծառայելու . գյուղացիությունն զբանցից պետք և ո-
րինակ վերցնի և իր աշխատանքների մեջ պետք և կիրառի նրանց
տնտեսական ձեւերը՝ ավելի մեծ արդյունք ստանալու , իր տնտե-
սությունը սացիալիստական ձեւով վերակառուցելու նպատակով :
Խորհրդային տնտեսությունները կատարում են այն բջիջի գերը ,
այն թթվամորի գերը , վորը պետք և վերակառուցի մեր գյուղատն-
տեսությունը նոր հիմունքներով՝ սոցիալիստական հիմունքներով :
Հայաստանում այսոր գոյություն ունի 6 խորհրդային տնտեսութ-
յուն : Այդ խորհրդային տնտեսությունների թեքումը զիմավո-
րապես յեղել և այդեզործական , հացահատիկային և մի փոքր ել
անասնապահական : Հնդամյակի ընթացքում ծրագրվում է կառու-
ցել նոր 4 խորհրդային տնտեսություն . զբանցից մեկը Բասարզե-
շարում՝ հացահատիկային-կարտոֆելային տնտեսություն և , վորն
ընդուրկում և 3.500 հեկտար տարածություն . այստեղ ծախսվե-
լու յի 230 հազար ռուբլի : Յերկրորդը հիմնվելու յի Ղոերում , վո-
րոնց այս հնդամյակում պետք և վոռոզվին . այստեղ կազմակերպ-
վում և բամբակային-հացահատիկային տնտեսություն 2 հազար
հեկտար տարածությամբ — 150 հազար ռուբլի հիմնական ներ-
ուժումով : Զանգեզուրում և Լենինականում՝ Աղբարայի շրջանում
հիմնվելու յեն յերրորդ և չորրորդ տնտեսությունները ; յուրա-
քանչյուրը 5 հազար հեկտար տարածությամբ . այստեղ ծախսվե-
լու յի 860 հազարական ռուբլի : Այսպիսով , թե գոյություն ունե-
ցող մեր խորհրդային տնտեսությունների ուժեղացման և թե խոր-
հրդային նոր տնտեսություններ կազմակերպելու նպատակով կա-
տարվելիք հիմնական ներդրումները հավասար են 3.600.000 ռուբ-
լու : Խորհրդային տնտեսությունները մեզանում վոչ միայն պետք
և նպաստեն դյուլատնտեսության բարձրացմանն ընդհանրապես ,
այլ և նրանք պետք և նպաստեն ապրանքայնության բարձրացմա-
նը : Խորհրդային տնտեսությունների տված արդյունքն իր ճնշող
տոկոսով , շատ քիչ բացառությամբ , պետք և ապրանքային շուկա
հանվի՝ ընակչության սպառողական կարիքները բավարարելու
համար :

Բացի մեր ծրագրած այս 4 խորհրդային տնտեսություններից ,
Լենինականում կազմվում և մի նոր խորհրդային տնտեսություն
և , վորը մեր հնդամյա պլանով չի նախատեսված : Այդ Լենինա-
կանի հացահատիկային և ճակնդեղի տնտեսությունն ե : Նրա նշա-
նակությունն ակներև և , մասնավորապես ճակնդեղային տնտեսու-

թյան նշանակությունը, վորից մենք ստանալու յենք նոր կառուց-
վելիք չաքարի գործարանի համար անհրաժեշտ հումույթ-ճա-
կնդեղը:

Եերկրորդ խոշոր գործոնը, վորը վերակառուցելու յե մեք
զյուզանատեսությունը սոցիալիստական հիմունքներով, — մեր
կոյլեկտիվ տնտեսություններն են: Խոսել այն մասին, թե ինչ-
պիսի վողերություն և առաջ բերել զավաներում կոլտնտեսու-
թյունների հիմնումը, այդ շարժումը, ինձ թվում և՝ ավելորդ
կլիներ, քանի վոր ձեզանից ամեն մեկը, վոր ավելի յե կապված
գյուղի հետ և տեսնում ե, թե ինչպես չքավորներն ու միջակներն
աշխատում են ամեն կերպ մանել կոլեկտիվ տնտեսությունների
մեջ, պարզ պատկերացնում և այդ շարժման խոչոր հեղափոխական
նշանակությունը մեր հետամնաց գյուզանատեսության ասպարի-
զում: Սակայն, ընկերներ, միակողմանի կլիներ այդ վողերու-
թյունը բացատրել զյուզացիոնթյան կոլտնտեսություններին ան-
դամադրվելու ցանկությամբ նրանց զերը խոր գիտակցելով
միայն: Եերեմն պատահում ե, վոր զյուզացիները մտնում են
կոլտնտեսությունների մեջ, ի նկատի ունենալով այն հանգաման-
քը, վոր Խորհ. Խմբանութոյընը հատուկ ուշադրություն և զարձ-
նում կոլտնտեսությունների վրա սերմացու տալով, մեքենաներ,
մարիկեր տրամադրելով են. են: Այդ ըստիքներից ոգոտիերա-
ցանկությունը հաճախ զառնում և այն հիմնական շարժառիթը,
վորի շնորհիվ զյուզացին մտնում և կոլտնտեսությունների մեջ:
Սորեսական այդ տրամադրությունների գեմ, ընկերներ, պետք և
ամենախիստ պայքարը մղել: Բարեկախտաբար, այդ տրամադրու-
թյունները մեզանում սակավաթիվ են, սակայն պետք և աշխատել
այդ ես բոլորովին արմատախիլ անել: Եեթե վերցնելու լինենք մեր
կոլտնտեսությունների այս տարվա գրությունը, կտեսնենք, վոր
նրա զարգացման զինամելիկան, թափը խիստ բուռն ե, խիստ արագ: Սակայն,
կրկնում եմ, յեթե այդ թափն առաջանում և սորեսական
մտայնությունից, այդ, իհարկե, խիստ վտանգավոր հանգամանք
և, վորից պետք և աղատազրպվել: Կոլտնտեսությունները մենք պետք
և զարձնենք արտադրողական կենտրոններ, նրանք լինելու յեն այն
հիմքը, վորը բարձրացնելու յե մեր գյուզանատեսությունը, զարկ
տալով նրա սոցիալիստական ձեռքին: Եեր կոլեկտիվ տնտեսու-
թյունների պատկերը Հնգամյակի ընթացքում հետեւյալն ե լինելու:
27—28 թվին մենք ունեցինք կազմակերպված 55 կոլտնտեսու-
թյուն, վորոնք 32—33 թվականին դառնալու յեն 540 կոլտնտե-
սություն, կամ ավելանալու յեն 10 անգամ: Ընկերներ, այս զար-

դացման մի չտեսնված թափ և գյուղատնտեսության ասպարիզում : Յեթե կոլտնտեսությունները մինչեւ այժմ ընդդրկել են գյուղական տնտեսությունների 0,53 տոկոսը, ապա 5-ամյակի վերջում մեր կոլտնտեսությունները պետք է ընդդրկեն գյուղական ամբողջ տնտեսությունների 17,2 տոկոսը, ամելանալով մոտավորապես 35 և գետ ել ավելի անգամ : Կոլտնտեսությունների ցանքերի ընդհանուր տարածությունն այս տարի կազմում եր 15 հազար հեկտար, իսկ հնգամյակի վերջում նրանք ունենալու յեն 75,100 հեկտար : Յեթե կոլտնտեսությունները մինչեւ այժմ ունեցել են 118 հեկտար բամբակի ցանք, ապա հնգամյակի վերջում նախատեսված եռ ունենալ 9100 հեկտար, յեթե նրանց ամբողջ արտադրանքը 150 տոնն եր, ապա նույն ժամանակամիջոցում զառնալու յե 13,200 տոնն : Ամբողջ արտադրանքի արժեքը 169,3 հազար ոուրլուց հասնելու յե 20,732 հազար ոուրլու : Վերջապես, յեթե կոլտնտեսությունների ընդհանուր արտադրանքի մեջ կազմում եր 0,46 %, ապա 5-ամյակի վերջում հասնելու յե 27,9 %-ի, իսկ արտադրանքի ապանքային մասի տեսակարար կշիռը գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ կազմում էր 0,46 %, ապա 5-ամյակի վերջում հասնելու յե 42,6 %-ի : Ընկերներ զարգացման այս թափը պարագայրեցնում և մեկ առանձապես ուշադրություն դարձնել կոլտնտեսությունների վրա, նրանց զուտ արտադրական բնույթ տալ, պայքարելով բոլոր տեսակի ու ձեւերի սորեսական արամագրությունների դեմ :

Ընկերներ, վորպեսզի վերջացրած լինեմ գյուղատնտեսության ժաման իմ ասելիքները, ինձ մնում է հիշատակել, թե ինչ գումարներ ենք տրամադրելու մեր գյուղատնտեսությանը հնգամյակի բնթացքում :

Մեր հիմնական ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 92.778 հազար ոուրլի, վորից հանրայնացված սեկտորի միջոցով՝ 81,5 միլիոն ոուրլի, իսկ մնացածը՝ ընակչության միջոցներից : Հիշյալ 81,5 միլիոն ոուրլին ըստ աղբյուրների բաժանվում է այսպես. պետական բյուջեյով հատկացվելու յե 42.243 հազար ոուրլի, տեղական բյուջեյով՝ 838,9 հազար ոուրլի, յերկարատև վարկ՝ 32.766 հազար ոուրլի, կարճատև վարկ՝ 3.153 հազար ոուրլի և, վերջապես, կոռուպտացիայի և գյուղատնտեսական ձեռնարկությունների սեփական միջոցներից՝ 2.512 հազար ոուրլի : Թող այս թվերը լսեն արտասահմանում զանազան կաֆեներում ուրախ ժամանցով զրազվող զանակցական թափթփուկները, վորոնք յերազում անդամ չեյին կարող տեսնել նման նվաճումներ և

վորոնք այսոր տղայամիտ հոխորտանքներով աշխատում են նըս-
վաստացենել Խորհ. Իշխանության աննախընթաց նվաճումները :

Այս հիմնական ներդրումների հետեանքով հնգամյակի վեր-
ջում զյուղատնտեսության ընդհանուր արտադրանքն աճելու յե
93,4 տոկոսով, փորից բուսաբուծությունը 101%-ով, անասնա-
պահությունը 86,8 տոկոսով, տեխնիքական մշակույթները 330,3
տոկոսով և մյուսները՝ 229,3 տոկոսով։ Տեխնիքական կուլտու-
րաների տեսակաբար կշխոն ամբողջ արտադրանքի մեջ այսորվա-
7,2 տոկոսից դառնալու յե 15,2 տոկ., մյուսներինը՝ 10,5-ից
դառնալու յե 17,3 տոկոս, մասնավորապես հացահատիկների տե-
սակաբար կշխու 54,5-ից իջնում և 41,3 տոկոսի։ Այս նվազումը
տեղի յե ունենում ի հաշիվ տեխնիքական բույսերի, փորոնց տե-
սակաբար կշխու բարձրանում և։ Մի զյուղացու հասույթը հնդամ-
յակի վերջում աճում և 68,5 տոկոսով, իսկ մեկ հեկտարից սուաց-
ված արտադրանքի արժեքն ավելանալու յե 37 ոուրզով, այսինքն՝
39 ոուր. 20 կոպեկի փոխարեն հավասարվելու յե 76 ռ. 30 կոպ.։
Կամ աճելու յե 94,6 տոկոսով։

Թույլ տվեք սրանով վերջացնել ժողովրդական տնտեսության
առաջին ճյուղը՝ գյուղատնտեսությունը։

III. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՋՈՒԹՅՈՒՆ

Այժմ յես անցնում եմ արդյունաբերությանը։ Ընկերներ,
վորպեսդի մեզ համար պարզ լինեն արդյունաբերության զար-
գացման հեռանկարները, նախ և առաջ պիտի նկատի ունենանք
այն հիմքերը, փորոնց վրա պետք և կառուցել արդյունաբերու-
թյունը, ուրիշ խոսքով՝ պետք և պարզել, թե ինչն և մեր ար-
դյունաբերության բազան։

Արդունաբերությունը, փորպես արդպիսին, կարող և կա-
ռուցվել արտաքին շուկաներից բերվող հումույթի կամ տվյալ-
յերկրամասի ներքին շուկայում մատակարարվող հում նյութի
վրա, այս վերջնի ամենալայն լմբունողությամբ։ Առաջին ու-
ղին մեր ուղին չե, քանի փոր մենք կարծում ենք, թե մեր տըն-
տեսությունը յերբեք չպիտի ունենա ունիվերսալիզմի բնույթ,
անդայման մի բան անելու ցանկություն։ Տնտեսության մեջ,
մասնավորապես արդյունաբերության ճյուղում մեր կարողու-
թյունները, մեր արդյունաբերության զարգացման ուղիները,
հեռանկարները, պայմանավորվում են մեր յերկրի բնական
հարստություններով, գյուղատնտեսության ընձեռած հնարա-
վորություններով։ Յերկրի բնական հարստությունները, հան-

քերը կազում են մեր հանքային արդյունաբերության Հիմքը : Յերկրի բնական հարստությունների վրա յե կառուցվում մեր շինանյութերի արտադրությունը : Մեր յերկրի ջրային հարստությունների վրա յե կառուցվում մեր եկեղեցաբարդյունաբերությունը, վորին գուղընթաց և և վորից բղխում և նաև մեր քիմիական արդյունաբերությունը . և վերջապես, մեր զյուղատնտեսությունը մատակարարում և մի շարք հումույթներ, վոր մենք անհրաժեշտարար կարող ենք վերամշակման յննթարկել ապրանք գարձնելու, սպառողական արժեքներ սանդելու նպատակով : Յերկրի այս հարստություններով են բնորոշվում, աչա, մեր արդյունաբերության զարգացման ուղիները : Այսպիսով, արդյունաբերությունը մեզանում զարդանալու յե մեր հանքային հարստությունների, մեր շինանյութերի հսկայական զանգվածների նպատակահարմար շահագործման ուղիով, մեր ջրային հարստություններից սպիտակ ածուխ ստանալու ուղիով, զյուղատնտեսության տված հումույթի վերամշակման ուղիով :

Մեր ձեռնարկած իոիզացիոն աշխատանքները վոչ միայն սոսկ գյուղատնտեսության զարգացման են նպաստելու, այլ և տալու յեն մեզ այն թանկարժեք նյութը, վորի անունն և եկեղեցաբական եներդիմա, և վորը իր հերթին կազմելու յե մեր քիմիական արդյունաբերության հիմքը :

Փյուղատնտեսական հումույթներից մեր բամբակը, ձեթը, կտավհատը և այլն, մեր խաղողը և պտուղները կազմում են այն հումույթային բազան, վորի վրա կառուցվելու յեն մի շարք արդյունազործական ձեռնարկություններ : Այդ յերեք գլխավոր ուղղություններով հարածուն ու սիստեմատիկաբար զարգանալով՝ մեր արդյունաբերական ձեռնարկությունները պետք և նըպաստեն մեր զուտ ագրարային, դյուղատնտեսական յերկիրը հետզհետե արդյունաբերական-զյուղատնտեսական յերկրի վերածելուն :

Ունենալով արդյունաբերության զարգացման այս հեռանկարները, մեզ համար հայատանում այլևս այժմեական չե արդյունաբերական ձյուղերի փոխհարաբերության հարցը : Յեթե միութենական միասնական ամրող տնտեսության համար սոցիալիզմի կառուցման պայմաններում ծանր և թեթև արդյունաբերության փոխհարաբերության հարցը այսոր կաղմում և տնտեսական քաղաքականության հիմնական առանցքը, ապա անցողական այս շրջանում մեզանում՝ հայատանում, ինչպես և միութենական առանձին-առանձին շրջաններում,

վորոնք միասական տնտեսության առանձին հատվածներն են, փոխարարելության այդ հարցը լուծվում և ավյալ յերկրամասի բնական հարստությունների նպատակահարմար ու սացիոնալ ողագործման ճանապարհով: Այս թե ինչո՞ւ՝ շեշտը գնելով մեր բնական հարստությունների ողագործման վրա, մենք, բնականարար, լուծած կլինենք նաև ծանր և թեթև արդյունաբերական տեսակարար կըսի հարցը մեզանում:

Մի գիտողություն ես: Յերկրի բնական հարստությունները վերամշակության յենթարկելիս, անշուշտ, մենք զեկավարվելու յենք և այն հիմնական գիրեկախիվով, վոր ավել են մեր մի շարք թե՛ կուսակցական և թե խորհուրդների համագումարները, այն և՝ զործարանները հումույթի բազաներին մատեցնել: Անժխտելի յէ, վոր այդ յեղանակով, այսինքն՝ հումույթները աեղում սացիոնալ, նպատակահարմար ձեռով վերամշակելով, մենք մեծ արդյունքներ կստանանք: Այս հարցում սակայն մենք վորոշ, միատեսակ մտածելակերպ չենք վորդեղրել դեռևս: Կան ընկերներ, վորոնք յենելով միութենական արդյունաբերությունը հումույթով ապահովելու անհրաժեշտությունից, վորը նույնու մենք չենք ժխտում, ավելորդ են համարում մեզանում արդյունաբերության այնպիսի ճյուղերի զարգացումը, վորոնք այս կամ այն չափով չոչափում են հումույթի բազան: Վոր միութենական արդյունաբերությունը պետք և ապահովել հումույթով, միութենական արդյունաբերության մեջ հիմնական կապիտալը պետք և պահպանել և ողագործել, այդ անժխտելի յէ, սակայն նոր գործարաններ պետք և կառուցել այնպես, վոր աեղ կա հումույթ, և յերեք չպետք և աշխատել արհեստականորեն կյանքի կոչել արդեն անպետքացած, տեխնիկայի պահանջներին չհամապատասխանող գործարանները, զեկավարվելով հումույթով ապահովելու ցանկությամբ, մի բան, վոր վոչ տնտեսապես և վոչ եւ քաղաքականապես հնարավոր չե հիմնավորել:

Բնական այս Փակտորներին անհրաժեշտար պետք և ավելանա մարդկային ույժը վորակյալ բանվորության նոր կաղըքը. սակայն այս հարցի վրա յես կանդ կառնեմ ժողովրդական յուսավորության մասին խոսելիս:

Այս ընդհանուր դիտողություններից հետո թույլ ավելք կանգ առնել արդյունաբերության չորս բնագավառների՝ հանքային արդյունաբերության, շինանյութերի, ելեկտրականության, քիմարդյունաբերության և գյուղատնտեսական հումույթների վերամշակման զարգացման վրա առանձին-առանձին:

Մեր հանքային հարստությունները, ընկերներ, գժրախտաբար գեռես չեն հայտնաբերված: Բացի Ալլաշվերզու և Դափանի պղնձահանքերից, վորտեղ և զարգանում ե մեր պղնձի արդյունաբերությունը, մնացած հանքային հարստությունները գեռես չեն հայտնաբերված: Մենք շատ ենք լսում այն մասին, վոր Հայաստանը ունի շատ վոսկի, արծաթ և այլ հանքեր: Թե այս կարծիքը վորքան հիմնավոր է, մենք գժրախտաբար չգիտենք: Հանքային արդյունաբերության ասպարիգում թափաված հնարավորությունները հայտնագործելու նպատակով մենք շատ անելիք ունենք: Պետք և հետախուզական, յերկրաբանական պշխատանքները կատարել մեր յերկրի հանքային բնական հարստությունները հայտնաբերելու և մեր արդյունաբերության մեջ դրավելու նպատակով: Հնդզամյակով այդ աշխատանքների համար նախատեսված ե 3695 հազար ոուրլի, բացի գրանից քիմիական արդյունաբերության նոր աղբյուրներ հայտնաբերելու և հետազոտական նպատակներով հատկացվում ե 355 հազար ոուրլի, չհաշվելով Հայողնձի գծով կատարվելիք յերկրաբանական հետախուզական աշխատանքները, վորի համար նախատեսված ե 4550 հազար ոուրլի. 750 հազար ոուրլի յել ծախավելու յե ջրբային և ներգետիկ ոնսուրսները հայտնաբերելու համար: Հայաստանի ծանր արդյունաբերությունից պղնձի արդյունաբերությունը, ինչպես գիտենք, գոյություն ուներ մեզանում գետ պատերազմից առաջ, պղնձը արդյունահանվում եր Փրանսիացիների ձեռքով: Իմպերիալիստական և քաղաքացիական պատերազների բնթացքում պղնձարդյունաբերությունը յենթարկվեց անկման, մի շարք հանքահորեր լցվեցին ջրով, մեքենաները փչացան և այլն: Այսոր այդ արդյունաբերությունը վերականգնվում է, թեպետ պետք ե անել, վոր 27-28 թվին մենք գեռես չենք ունեցել պղնձի նախապատերազմյան արտադրանքը և անհրաժեշտ եֆֆեկտը: Սակայն պղնձի արդյունաբերությունն ունի զարգացման խոշոր հետանկարներ: Այս հնդամյա պլանը նախատեսել ե 10,800,000 ոուրլի հիմնական ներդրում: Հնդամյակի նախնական թվերը հաստատելուց հետո, վերջին վարիանտով, պղնձի արդյունաբերության համար Մոսկվան հիմնական ներդրում և նախատեսել 20,790,000 ոուրլի, այսինքն՝ յերկու անգամ ավելացրել և մեր նախնական յենթադրությունը: Գունավոր մետաղի կարիքը մեր Միության արդյունաբերության մեջ խիստ մեծ և պահանջում է հատուկ ուշադրություն: Պղնձի արդյունաբերության կողքին մենք այս տարի հիմք ենք

դնում հանքային արդյունաբերության մի նոր ճյուղի՝ ծծմբային կալչետանի արտադրությանը, մի ճյուղ, վորով զգալիորեն հարուստ են մեր հանքերը. խսկ ծծմբային կալչետանի կարիքը նույնպես մեծ և մեր միութենական անտեսության մեջ։ Տարիներ շարունակ այս ուղղությամբ մեր ձեռնարկած քայլերը միայն այս տարի պահպանում են հաջողությամբ։ Ծծմբային կալչետանի համար հնգամյա պլանով նախառեսված և 2,070 հազար ոուրլի։ Արդյունաբերական այդ յերկու ձեռնարկումներով սահմանափակվում են հնգամյակով ծրագրված մեր շինարարությունը հանքարդյունաբերության ասպարիզում։ Կրկնում եմ, այդ բնագավառում մենք ունենք բնական մեծ հարստություններ, վորոնք սակայն զեռ հայտնաբերված չեն, և վորի վրա մենք պետք են գարձնենք շատ լուրջ ուշագրություն։ Մեր արդյունաբերության յերկրորդ ճյուղը շինանյութերի ճյուղն եւ։ Շինանյութերի բնագավառում մենք անհամեմատ ամելի նորաստավոր պայմաններ ունենք։ Լեռնային գեռես չոպտագործված զանազան տեսակի հսկայական մասսիվները շահագործման անսպառ պահեստներ են, վորին այսոր մենք ձեռնամուխ ենք լինում։ Մեր յերկրի զանազան զավառներում արածված չեւաքարի (պեմզայի), դրանիտի, մարմարի, բաղալտի, կոնդրումերատի, տուֆի, ցեմենտի, կրի, գաջի և այլ հանքերը անսպառ աղբյուր են շինանյութեր պատրաստելու համար։ Միութենական ամբողջ շինարարության հժանացման ու կարգագործման գործում մեր շինանյութերի արդյունագործությունը վճռական զեր և խաղալու։ Այդ աեսակետից արդյունաբերության այս ճյուղը մեզանում դառնալու յե մեր հատուկ հողացողության ու ուշագրության առարկան։ Շինանյութերից պեմզան այն շինանյութն ե, վորը կարող ե փոխարինել աղյուսին։ Հայաստանը հարուստ և պեմզայով։ Անիի, Յերևանի և Զանգեզուրի շրջաններում կան բնական հարուստ հանքեր, վորոնց շահագործումը պետք ե կարմակերպել այս հնգամյակում։ Այս ուղղությամբ նախատեսել ենք մի զգալի գումար 1,861 հազար ոուրլի հաշված բնակարանային շինարարության գումարները։ Այնուհետև, Լոռի-Փամբակի գրանիդի և բաղալտի մասսիվների Արգաքայանդի և Միսխանայի մարմարի, Իջևանի կոնդրումերատի արդյունագործությունը, վորոնցից մասնավորապես վերջին յերկուսը անհրաժեշտ նյութ են մատակարարելու մեր ծավալվող ելեկտրո-արդյունաբերությանը, —նույնպես ստացել են իրենց զրական լուծումն այս հնգամյակում։ Մեր նախատեսած 1812,7 հազար

ոռւրլով մենք ի վիճակի կլինենք վերջնականապես կաղմակեր-
պելու դրանց շահագործումը:

Եինայութերից առանձնապես պետք է կանգ առնել Արթի-
կի տուփի վրա, վորի գյուրությամբ կտրվելու, սղոցվելու,
մեխիլու և զլաղուրի յենթարկվելու հատկությունը, նրա թե-
թեությունն ու գիմացկունությունը, տաֆության և խոնավու-
թյան դիմագրողականությունը, ծակոտկենությունը և այլն և
այլն իրավամբ այսոր իրենց վրա յեն դարձել վողջ Միության
կառուցողների հատուկ ուշագրությունը: Այս տարի արդեն
մենք ձեռնամուխ ենք յեղել նրա շահագործման աշխատանքնե-
րին, վորին արտարյուտչետային կարգով Միությունը բաց և
թողել մոտ 3200 հազար ոռւրլի, Հայագլուզ Արթիկ-Լենինական
յերկաթուղարքիծը, վորն ավարտվելու յե մինչեւ ս.թ. ողոստոս-
ւեպտեմբեր ամիսները: Այսպիսով, շինանյութերի առանձնապես
աչքի ընկնող այդ ճյուղի՝ Արթիկի տուփի շահագործումը այս
տարի կաղմակերպվի արտակարգ կերպով: Առաջիկայում,
յուրաքանչյուր գործառնական տարրա համար վերստուգիչ թը-
վեր կազմելիս մենք այն ևս կմտցնենք մեր պլանի մեջ:

Այսուհետեւ, բացի այս հիմնական ցինանյութերից, մենք
ունենք նաև շաղախանյութեր՝ ցեմենտ, գաջ, կիր և այլն, վո-
րոնց շահագործմանը նույնպես ձեռնամուխ ենք լինելու, վոր-
պեսզի հիմնական նյութերին տրամադրվի նաև շաղախանյութ:
Այս տարի մենք Դավթարքի ըրջանում ցեմենտի և ալերաստրի գոր-
ծարաններ ենք կառուցելու: Ցեմենտի գործը կաղմակերպելու
նողատակով հնդամյակի վերջին վարիանտով նախատեսված և
4200 հազար ոռւրլի, կրի, գաջի և ալերաստրի գործարանների
համար՝ 204 հազար ոռւրլի: Առանձնապես պետք ն հիշա-
տակել անտառանյութերի վերամշակման աշխատանքները. գո-
յություն ունեցող գործարանի կահավորման ու արտադրողա-
կանությունն ընդարձակելու համար մենք յենթադրում ենք ծախ-
սել 3750 ոռւրլի:

Մետաղագործական արդյունաբերության մեջ մեր յերկիրը
ծայր աստիճան աղքատ և առաջմ: Մեր հանքային հարստու-
թյունները, յեթե կան ել, գեռես չեն հայտնաբերված: Մեր
միակ մեքենայական գործարանով սահմանափակվում և մետա-
ղի արդյունաբերության գործը մեզանում: Այդ գործարանը,
վոր մեծ մասամբ նորոգման աշխատանքներ և կատարում, պետք և
վերջնականապես սարքավորվի և գործի գցի առաջիկա տարում:

Նախատեսված 451,500 ռ. գումարով ապահովված և ժիանգամայն այդ վերասարքավորումը :

Եթե անցնում եմ արդյունաբերական ձեռնարկությունների յերրորդ խմբին—մեր քիմիական արդյունաբերությանը : Քիմիական արդյունաբերությունը համեմատարար նոր և զարգանում Միտության մեջ, իսկ մեզանում նա բոլորովին նոր և սկսվում : Միտության քիմիական արդյունաբերության համեմատարար հետամնաց վիճակը բացատվում եր նախ և առաջ եժան վառելայիտի բացակայությամբ : Մասնավորապես մեզանում, մինչեւ խորհրդայնացումը մեր ելեքտրական շինարարության մասին խոսք անդամ չեր կարող լինել : Մինչդեռ մասնագետների կարծիքով քիմիական արդյունաբերությունը մեզանում ունի խոշոր հեռանկարներ : Եթե վորքան ելեքտրակայանների կառուցմամբ ավելանա ելեքտրականության մեր պաշարը, այնքան նորանոր հնարավորություններ կստեղծվեն քիմարդյունաբերության համար Հայաստանում :

Ահա թե ինչու Հնդամյակում մենք քիմարդյունաբերության վրա առանձին ուշադրություն ենք դարձրել : Ահա թե մենք ինչ ենք ծրագրում Հնդամյա պլանով քիմիական արդյունաբերության ասպարիզում : Յերեանի հիգրոելեքտրոկայանի կառուցմամբ հիմք դրվեց Յերեանի կարրիքի գործարանի : Կարրիտ-կալցիի ժողովնեսության մեջ ունի խոշոր նշանակություն, մանավանդ, վոր մեր կարրիքը եժան և և վորակով բարձր : Կարրիտ-կալցիի մեր գործարանի լայնացման և սուրբավորման համար հնդամյա պլանում նախատեսել ենք 290,000 ռուբլի :

Մեր խոշոր ձեռնարկումներից քիմիական արդյունաբերության մեջ պետք ե հիշատակել ցիանամիզի գործարանի կառուցումը, վորի նպատակն ե դյուլատնտեսությանը պարարտանյութեր մատակարարել : Ցիանամիզի գործարանը կառուցվելու յի այս Հնդամյակի ընթացքում Զորագետի հիգրոկայանն ավարտվելուց հետո : Այս նպատակով մեր Հնդամյա պլանով նախատեսված և յերկու միլիոն չորս հարյուր հազար ռուբլի : Պետք ե ասել, վոր այսոր վոչ միայն կատարվում են Զորագետի կանալի աշխատանքները, այլև միաժամանակ դրված և ելեքտրոկայանի հիմքը, և մոտիկ ապագայում մենք կղննենք նաև ցիանամիզի գործարանի հիմքը : Քիմիական արդյունաբերության յերրորդ ձեռնարկումը ծծմբաթթվուտի արտադրությունն ե, վոր նույնպես կարեոր և այսոր :

Մծմբաթթվուտի արտազրությունը մեղանում ունի նպաստավոր հեռանկարներ. ծծմբաթթվուտի գործարանը կառուցելու համար հատկացված է 1270 հազար սուրլի: Այսուհետեւ՝ պղնձի արջասպի դործը: Դաք գիտեք, թե զյուզատնաեսության մեջ ինչ նշանակություն ունի պղնձի արջասպը զանազան վնասատուների դեմ կավերու համար, մասնավորապես մեր այգիների համար: Այս տարի մենք ճենամուխ ենք յեզել պղնձի արջասպի դործարանի կառուցման, վորին հատկացված է 600,000 սուրլի: Վերջապես հարկավոր և հիշատակել փայտի չոր թորման գործը (շոխա ուրգոյնք լեռա) վորի կադրակերպումը նույնպես հախատեաված է մեր Հնդկամյա պլանով:

Այսպիսով, յեթե հաշվելու շինենք մեր ձեռնարկումները և լեքսրոֆիկացիայի ասպարիզում, վորի վրա յս մտադիր եմ կանգ առնել քիչ հետո, առանձնապես, ազա պիտք և առնենք, վոր ծանր արդյունաբերության մեջ հնդամյա պլանով նախատեսված հիմնական ներդրումները, չհաշվելով պղնձի արդյունաբերություն և Արթիկի տուֆի մշակմանը հատկացված գործարները, հավասար և 23521.8 հազար սուրլու:

Այժմ անցնենք թեթե արդյունաբերությանը: Արդյունաբերության այս ճյուղը պայմանավորվում է զլիսավորապես զյուզատնաեսության տված հումույթով և իր հերթին նպաստում զյուզատնաեսության արտադրանքի բարձրացմանը: Թեթև արդյունաբերությունից առանձին ուշագրության առարկայի գարձել մեր տեքստիլ արդյունաբերությունը: Լենինականի տեքստիլ արդյունաբերությունը իր գոյության համեմատաբար կարծ ժամանակամիջոցում ունենալով 40.000 իլիկ, վորից այսոր աշխատում են մոտ 9000-ը, ցույց տվեց իր միանգամայն կենսունակությունը:

Ենթագրվում է այս հնդամյակում ևլ ամելի ընդլայնել նրա արտադրողականությունը, բանով իլիկների թիվը հասցնելով 100.000-ի և գաղղրահների թիվը՝ 2500-ի, գարձնելով մեր փոքրիկ Լենինականը գործարանային մի կենտրոն, մասնավորապես տեքստիլ արդյունաբերության կենտրոն: Տեքստիլ արդյունաբերությունը ունենալու յե հետեւյալ բաժինները՝ մանվածքային, գործվածքային, տրիկոստաժի, ներկարաբության և ազա բամբակի և կարի գործարաններ: Այդ բոլոր ձեռնարկումների իշխագործման համար տեքստիլ արդյունաբերության մեջ հնդամյակի ընթացքում ծախսելիք մեր գումարները, ներառյալ բնակարանային շինարարությունը, կազմում են 20.266,600 սուրլի:

Յերկու խոսք ես այն մասին, թե տեքստիլ արդյունաբերությունը ինչ չափով ե ապահովված հումույթով, քանի վոր այս մասին կան տարածուառողներ: Պետք ե ասել, վոր հնդամյակի վերջում մենք մեր գյուղատնտեսության արտադրած բամբակի մոտ 53 տոկոսը ի վիճակի կլինենք վերամշակելու մեր դործարանում: այս նշանակում ե, վոր մենք կունենանք բամբակի ավելցուկ, վորը կարող ենք տրամադրել միութենական տեքստիլ արդյունաբերությանը: ուրեմն մենք կարող ենք արտահանել բամբակի ամբողջ բերքի մոտ 50 տոկոսը: Բացարձակ թվերով արտահանվելիք այդ 50 տոկոսն անհամեմատ ավելի մեծ ե, քան մեր այսորվա արտածումը: Տարակուսողների այդ մտավախությունն այսպիսով, ուրեմն, միանդամայն անհիմն ե:

Թեթեվ արդյունաբերության յերկրորդ ճյուղը մեր կաշու արդյունաբերությունն ե: Կաշու վերամշակման համար մենք այժմ ունենք 2 գործարան, սակայն այդ գործարանները այնքան պրիմիտիվ են, սարքավորումը այնքան նահապետական ե, առանց վորեւ հարմարության, վոր հարկավոր ե վերանորոգել, վերասարքավորել: Այդ աշխատանքների համար հնդամյա պլանով նախատեսել ենք 1.075 հազար ոռորդի հիմնական ներդրում: Պալփրաֆ-արդյունաբերությունը մեղանում նույնպես աննախանձելի վիճակի մեջ ե այսոր: Շնորհիվ մեր տպարանների անհարմարության՝ մեր թերթերը, մեր գրականությունը, մեր գրքերը տեխնիքական բազմաթիվ պակասավոր կողմեր ունեն թե՛ շարքածքի, թե՛ գեղարվեստական և թե՛ խնայողության և թե, վերջապես, ուշ տպագրվելու տեսակետից: Մեր պոլիգրաֆ-արդյունաբերությունը կարիք ունի կատարելագործված վորոշ մեքենաների, այնպիսի մեքենաների, վորոնք նպաստեն իմ թը-ված բացերը վերացնելուն:

Պոլիգրաֆ-արդյունաբերության կանոնավոր կազմակերպումը, անշուշտ, մեծ նշանակություն ունի մեր կուլտուրական հեղափոխական վերելքի համար: Այս տեսակետից պոլիգրաֆ-արդյունաբերության վրա առանձին ուշադրություն պետք ե դարձնենք: Հնդամյակում նախատեսված ե 768 հազար ոռորդի, հաշված նաև բնակարասնային շնարարության գումարները:

Մննդի և համի արդյունաբերության ուղղությամբ հնդամյակով նախատեսված են մի շարք նոր գործարաններ: Գյուղատնտեսության մասին խոսելիս յես արդեն հիշատակեցի, վոր մենք հիմնում ենք կոնսերվի յերկու մեծ գործարան— 557 հազար ոռորդի. հիմնական ներդրումով: Հնդամյակի մեր նվաճումներից ե լինելու

Անինականում կառուցվելիք շաքարի գործարանը : Շաքարի տրեստի ներկայացուցիչները տեղում ուսումնասիրելով մեր ճակնդեղի վրակի, յեկան այն աներկրա յեղակացության, զոր մեր յերկրում անպայման պետք և հիմնել շաքարի գործարան : Մեր ճակնդեղի պարունակած շաքարի տոկոսն ավելի բարձր և, քան նույնիսկ Աւկրայնայինը : Հողային տարածությամբ, ինչպես նաև ելեքտրոնայի գործարանը, կառուցվելիք գործարանը միանդամայն ապահովված կլինի : Բացի այդ նպաստավոր պայմաններից, մենք Լենինականում ունենք և ազատ բանվորական ուժ, վոր կարելի յև զրագեցնել շաքարի արտադրության մեջ : Ուրեմն, շաքարի արտադրության գործը կազմակերպելու համար մենք ունենք բոլոր հիմնական նախադրյաները : Տարակուսանքի առարկա յեր մինչև այժմ կառուցվելիք գործարանը հումույթով լիովին ապահովելու հարցը . սակայն այսոր այդ հարցը նույնպես լուծված և բարեհաջող կերպով : Գործարանն աշխատելու յև լրիվ բեռնավորմաբ : Շաքարի արդյունաբերությունը կազմակերպելու նպաստակով հնդամյա պլանով նախատեսել ենք 5.860 հազար ռուբլի :

Այնուհետև, խաղողի առատ բերքը և այգիների հետաղա զարգացումը, բնականաբար, պետք և առաջարկեյին «Արարատ» գործարանի վերասարքավորման և նրա արտադրողականության բարձրացման անհրաժեշտությունը, վորպեսզի նա հումույթի ամբողջ ալյանքային մասը վերամշակելու հնարավորություն ունենա : Այս նպատակով հնդամյակը նախատեսնում է 1,213 հազար ռուբլի, ներառյալ բնակարանային շինարարության գումարները : Յեվլ, վերջապես, կարտոֆելի սպասման համար նպաստավոր չուկա ապահովելու նպատակով, ինչպես արդեն ասացի, նախատեսված և Նորհայաղետում կառուցել շաքարա-ուլային գործարան, հատկացնելով այդ գործին 259 հազար ռուբլի :

Իմ թված այս ձեռնարկումներով սպասվում են հնդամյա պլանով ծրագրված արդյունաբերական այն խոշոր աշխատանքները, վորոնք կարգավորվում են մեր ժողովրդական Տնտեսության Խորհրդի կողմից :

Միութենական և Փեղերատիվ արդյունաբերական ձեռնարկություններից, վորոնք գործում են Հայաստանում, պետք և հիշատակել Հայրամբակի բամբակաղտիք, ձիթհան և ոճառի գործարանները, վորոնց վերասարքավորման, ընդլայնման ու կատարելագործման համար հնդամյա պլանով նախատեսված են բավական զգալի գումարներ : Այսպիսով թեթև արդյունաբերության հիմնական ներդրումները, չհաշված միութենական և Փեղերատիվ ար-

գյունարերության գծով կատարվելիք ներդրումները, հավասար ևն 30 միլիոն ոռուրլու, հաշված նաև բնակարանային շինարարության գումարները:

Յեթե հանրապետական արդյունարերությունն արդեն ստացել է իր վորոշ պատկերը, նշել է իր զարգացման ուղիները և հաստատուն կերպով ու հիմնավորապես ապահովել է իր առաջնադաշտումը, ապա նույնը չի կարելի ասել տեղական արդյունարերության մասին:

Մինչեւ այժմ մեր աղքատիկ տեղական արդյունարերությունն ընթացել է միայն յերկու ուղինո՞ց՝ շինանյութերի և աննդի ու համի արտադրության գծով:

Տեղական արդյունարերության մասին թե մեր հանրապետական և թե մանավանդ տեղական մարմիններն անհրաժեշտ հոգացողություն չեն հայանարերել մինչեւ որս։ Տեղական արդյունարերության նկատմամբ անհրաժեշտ հետաքրքրություն չի հայանարերված վոչ միայն տեղական անտեսական կյանքի կազմակերպման ու զարգացմանը նպաստելու, այլ նաև տեղական բյուջեյին ոժանդակերու անսակետից։ Այս ուղղությամբ շատ քիչ բան ենք արել, և մեր հնդամյա պլանի պահանջմուր կողմներից մեկը պետք է համարել տեղական արդյունարերության վերաբերյալ հարցերի անբավարար լուծումը։

Ներկա հնդամյակի մեջ մեր զավառներից միայն Զանդեզուրի, Լենինականի և Յերևանի զավառների արդյունարերության վերաբերյալ հարցերն են ստացել քիչ թե շատ զգալի լուծում։ Մյուս զավառների պատկերը հնդամյա պլանի մեջ չի ցույց արված։ Քանի գեր ուշ չեն, պետք է մտածել այս ուղղությամբ և կազմել անտեսականապես հիմնավորված պլաններ՝ մեր տեղական արդյունարերության զարգացումն ապահովելու նպատակով։

Արդյունարերական ձևոնարկումների շարքը վերջացնելու համար յերկու խոսք են մեր տնայնազործության մասին։ Հայաստանի դյուներում և քաղաքներում բնակչության մեծ մասը զբաղվում է տնայնազործությամբ։ Նրանց մեջ զարգացած են զանազան արհեստներ, վորոնք խոշոր նշանակություն ունեն մեր անտեսական կյանքում։ Վերցնենք թեկուզ զրանցից ամենակարենորը—զորդագործությունը, վոր մեր տնայնազործական արդյունարերության մեջ զգալի տեղ է բռնում։ Տնայնազործության այս ճյուղը նախ մեծ թվով անձանց աշխատանք և հայթայթում, և ապա արտաձման հիմնալի նյութ և մատակարարում։ Այնուհետև մի շարք այլ արհեստներ, ինչպես որինակ, վոսկերչությունը, զարրնությու-

նը, ապա ջուրհակությունը, նույնագես առանձին-առանձին ոժան-դակ գեր են կատարում մեր ժողովնահոսության մեջ:

Յերեանից վոչ հեռու հիմնված Նոր-Արարկիր քաղաքը այսոր ամբողջապես մի փոքրիկ գործարան է: Այն մի քաղաքացի իր տանն ունի մի փոքրիկ գաղղրահ, պատրաստում և գեղեցիկ ձեռագործներ և հանում և շուկա: Այս ցույց և տալիս, վոր տնայինագործական արդյունաբերությանը զարգանալու նախադրյալներ, ինչ-ովես նաև տնտեսական վարոչ հիմքեր ունի: Ժողովնախորհը մեր տնտեսության այս ճուղի վրա պատշաճ ուշագրություն պետք է չարձնի: Մեր այս մի շարք ձեռնարկումներն, անշուշտ, հսկայական գումարներ են պահանջում: Արդյունաբերության գծով հնդամյակում ծախսելու յինք 87.700.000 ռուբլի, առանց բնակարանային շինարարության, վորից 25.000.000-ը մասնավորապես ելեկտրականության գծով: Համաձայն Միութենական Պետողանի վերջին վարիանտի՝ հիմնական ներդրումները մի քանի ճյուղերի վերաբերմամբ զգալիորեն ավելացրած են, վորից բնականարար և համապատասխան շափով ավելանում և նաև հիմնական ներդրումների իմ հիշատակած 87.7 միլիոն ռուբլու ընդհանուր գումարը: Այդ հիմնական ներդրումների հետեանքով ամբողջ արդյունաբերության հիմնական դրամագլուխը, վոր այսոր կազմում է 9.838 հազար ռուբլի, հնդամյակի վերջում կհասնի 59.971 հազար ռուբլու կամ կամ 632 տոկոսով:

Ցենզույին և մանր արդյունաբերության ամբողջ արտադրանքը, վոր 26—27 թ. անփոփոխ զներով 1927—28 թ. հավասար եր 38.2 միլիոն ռուբլու, հնդամյակի վերջին տարում կդառնա 155.8 միլիոն ռուբլի, կամ կամ 307.8 %-ով: Այդ գումարից հանրապետական արդյունաբերության ամբողջ արտադրանքը 9100.0 ռուբլուց հասնելու յի 82100 հազար ռուբլու, պղնձինը՝ 2200 հազարից 8700 հազար ռուբլու, բամբակինը 5700 հազարից՝ 18800 հազար ռուբլու և այլն: Ամբողջ արտադրանքի ապրանքային արժեքը, վոր 27—28 թ. հավասար եր 37.2 միլիոն ռուբլու կամ ամբողջ արտադրանքի 97.4 տոկոսի, հնդամյակի վերջում կազմելու յի 151.6 միլիոն ռուբլի կամ 97.2 տոկոս, բացարձակորեն աճելով 309.7 տոկոսով: Վերջապես, հնդամյանացված սեկտորի բաժինն ընդհանուր արտադրանքի մեջ, վոր 27—28 թ. կազմում եր 68.4 %, հնդամյակի վերջում կհավասարի 91.9 տոկոսի:

Արդյունաբերության մասին խոսելիս չի կարելի կանգ չառնել մի շարք վորակային ցուցանիշների վրա: Մեր վոչ միայն հետաքրքրում են հիմնական ներդրումները, վորպես գումարներ, այլ և

այն, թե ինչպիսի եֆֆեկտ են տալու այդ ներդրումները, թե ինչ հետևանքներ ենք ստանալու մենք մեր ձեռնարկումներից: Կանոք առնենք նախ ինքնարժեքի վրա: Ինչ պատկեր ե ստանում ինքնարժեքի հարցը հնդամյակի ընթացքում: Պետք ե ասել, վոր այդ ասպարիզում մենք չունենք այն հաջողությունները, վոր պետք ե ունենայինք: Այստեղ մենք կենտրոնական իշխանության կողմից արրված հիմնական սկզբունքային դիրեկտիվը չենք կարողացել լրիվ կերպով կատարել:

Ինքնարժեքը հնդամյակի վերջում պիտի իջներ 35 տոկոսով, սակայն արգյունարերության տված տվյալներով մեզանում ինքնարժեքը իջնում է միայն 26,2 տոկոսով: Այս, անշուշտ, մեր խոշոր բացերից մեկն է, վոր պետք ե աշխատենք անպայման վերացնել, վործադրելով բոլոր հնարավոր միջոցները: Հիմնական ներդրումները կատարվելու յեն վոչ միայն բյուջեի հաշվին, վոչ միայն պետական գանձարանի հաշվին, այլ և արգյունարերության ներքին կուտակումներից, վորոնք ստացվելու յեն ինքնարժեքի իջեցման հետևանքով: Համադրումարը ոյնտեղ ե հրահանդի և շեշտի, վոր զների իջեցման ասպարիզում մենք պարտավոր ենք կատարել բարձրադրույն մարմինների դիրեկտիվը, վոր ինքնարժեքի իջեցումը պետք ե ապահովել 35 տոկոսով: Այդ հնարավորությունը, պետք ե ասել, արգյունարերությունը ունի, վորովհետեւ արգյունարերության մի քանի ճյուղերի տնտեսական վիճակը թույլատրում ե ինքնարժեքն իջեցնել: Բերեմ մի քանի թվեր: Պիմզան իջեցնելու յե ինքնարժեքը 53,0 տոկոսով: այս հանդամանքը ցույց ե տալիս, վոր նրա ինքնարժեքը մինչեւ որս չափաղանց բարձր է յեզել: Անտառանյութերի ինքնարժեքը իջնում է 31,4 տոկոսով, տեկստիլ արդյունարերությանը՝ չորս տարվա ընթացքում 20,1 տոկ., կաշվարդինը՝ 8,0 տոկ., մեքնայական դործարանինը՝ 4,8 տոկոսով, սակայն միջին իջեցման տոկոսը, ինչպես ասացի, կադմելու յե 26,2 տոկոս: Այսպիսով, ինքնարժեքի իջեցման ասպարիզում մենք գենես շատ անելիքներ ունենք:

Եթե ինքնարժեքի իջեցման ասպարիզում մենք բարձր որդանների դիրեկտիվը խախտել ենք, չենք կատարել, ապա վաճառքի զների մեջ մենք ունենք արգելն բոլորովին հակառակ պատկեր: Վաճառքի զները ըստ դիրեկտիվի հնդամյակի վերջում պետք ե իջնեյին ընդամենը 17-18 տոկոսով, մինչդեռ մեր արդյունարերությունն այստեղ հայտնարերել ե զդալի վողերություն, իջեցման տոկոսները հասցնելով 24,8 տոկոսի: Այս, ընկերներ, նույնութեա սխալ ե հարկավոր ե շտկել. յեթե մենք առաջին դեպքում

պետք և աշխատենք ինքնարժեքը իջեցնել 35%-ով, առա 2-րդ գեղքում մենք պետք ե 24,8-ը նվազեցնենք և հասցնենք 18-ի, քանի վոր այս վերջին տոկոսները ստացվում են ի հաշիվ սոցիալիստական կուտակման:

Վաճառքի գների իջեցման գերակատարում ունեն նույն պեմ-զան՝ 42,6 տոկոս, անտառային շինանյութերը՝ 26,6 տոկոս, տեկստիլը՝ 13,5 տոկոս, կաշվարդը՝ 6,1 տոկոս. և մեքենայական գործարանը՝ 5,6 տոկոս։ Սակայն չնայած այդ անհամաշափության, այնուամենայնիվ, արդյունաբերության սոցիալիստական կուտակումը վորոշ չտափով աճում է։ Յեթե այդ կուտակումը 27-28 թվին կազմում եր հիմնական կապիտալի 10,8 տոկոսը, առա հնգամյակի վերջում նա հավասարվելու յե 11,9 տոկոսի, կամ ավելանալու յե 1,1 տոկոս, վոր սակայն բավարար չի կարելի համարել։

Ինչպիսի փոփոխությունների յե յենթարկվում աշխատավարձը։ Միջին աշխատավարձը բարձրանում է 26-27 տոկոսով վորից ծանր արդյունաբերության մեջ 23,3%։ Մասնավորապես Հայպղնձի արդյունաբերության մեջ յենթաղրվում և աշխատավարձը բարձրացնել 33,7%-ով։ Աշխատավարձի հարցում ես, ինչպես ինքնարժեքի ասպարիզում, մենք լրիվ չենք իրազործել մեր ստացած դիրքետիվը։ Սակայն, յեթե ինկատի ունենանք տեկստիլ արդյունաբերության մեջ զբաղված անվորակ բանկորության ճնշող քանակը, վոր իջեցնում է միջին աշխատավարձը, առա այս ասպարիզում մենք ավելի նպաստավոր պայմաններում ենք գտնվում, քան ինքնարժեքի հարցում։ Այս ուղղումից հետո միջին աշխատավարձը մեղանում հետ չի մնում բարձրադրույն որդանների տված նորմայից։

Համեմատաբար լավ և դրությունը արտադրողականության բարձրացման ասպարիզում։ Միութենական 110%-ի դիմաց մեղանում արտադրողականության բարձրացման միջին տոկոսը կազմում է 248,8 վորից ծանր արդյունաբերության մեջ՝ 304,3 տոկոս, իսկ թեթև արդյունաբերության մեջ՝ 181,9%։ 1927-28 թվականին մի բանվորի միջին արտադրանքը բացարձակ թվերով կազմում էր ծանր արտադրության մեջ՝ 174 ռ. 72 կ., իսկ թեթև արդյունաբերության մեջ՝ 455 ռ. 04 կ. Հնգամյակի վերջում նույն թվերը համապատասխանորեն հավասարվում են 531 ռ. 60 կ. և 845 ռ. 79 կ.։ Իմ թված ճեռնարկումները, բնականորեն, պետք է արդյունաբերության մեջ ներդրավին բանվորական նոր կողքեր։ 1927-28 թվին արդյունաբերության մեջ աշխատող բանկոր-

ների թիվը հասնում էր 3873-ի , Հնգամյակի վերջում այդ թիվը հասնելու յե 10982-ի կամ ավելանալու յե 283,6% , չհաշված Արթիկի տուփի վրա աշխատող բանվորներին , վարոնց թիվը հասնելու յե 3000-ի :

Աշխատանքի տեսպության տեսակետից պետք եւ հիշել 7-ժամ-յա բանվորական որվա մասին : Բոլոր նորակառույց գործարանները աշխատանքները սկսելու յեն 7-ժամյա բանվորական որով : Հանրապետական հատուկ հանձնաժողովի միջոցով ուսումնասիրովում և այսոր մի շարք գործարաններում 7-ժամյա բանվորական որ մտցնելու հարցը : Բանվորների կենցաղային գրությունը բարելավելու , մասնավորապես աշխատանքի պաշտպանության գործք գոյություն ունեցող արդյունարերական ձեռնարկություններում կանոնավոր հիմքերի վրա զնելու նպատակով մենք նախատեսել ենք Հնգամյակում 753 հազար ուուրի : Ինչ վերաբերում և նոր կառուցվելիք գործարաններին , նրանք աշխատանքի պաշտպանության տեսակետից պետք եւ համապատասխանեն տեխնիկական բոլոր պահանջներին :

Արդյունարերության մասին իմ Համառոտ ասելիքները ավարտելու համար կանգ կատնեմ արդյունարերության մի կարելվորագույն ճյուղի՝ ելեքտրականության վրա , վորը յես զիտավորյալ կերպով առանձնացրի ծանր արդյունարերությունից ։ Ենորհիվ մեր զետերի սիստեմի՝ Հայաստանը բավական հարուստ և ելեքտրոններդիմով : Թե ինչպիսի կարենոր նշանակություն ունի ելեքտրականությունը արդյունարերության և առհասարակ ամրող ժողովրդական տնտեսության համար , այդ մասին ավելորդ և խոսել , մանավանդ , յերբ այդ եներդիման այնպես եժան և մեղանում : Մեր լեռնային գետերը եժան ելեքտրոններդիմայի անբռնպատ և հարուստ ազրյուր են Հանգիստանում : Այդ հանրավորությունների նպատակահարմար ողտագործումը նպաստելու յե մեր տնտեսության վերելքին , նրա սոցիալիստական վերակառուցմանը :

1927 թ . մենք ունեյինք զանազան մանր և խոշոր 23 ելեքտրոնկայան՝ 5137 կիլով . կարողությամբ : Հնգամյակի վերջում ունենալու յենք 29 ելեքտրոնկայան 47,780 կիլ . կարողությամբ կամ մոտ 9-10 անգամ շատ , քան այսոր : Կիլովատների տասնապատկման հետագա ավելանում և նաև եներդիմայի ողտագործման աստիճանը : Դուք զիտեք , վոր վոչ մի կայանի ուժ տեխնիքապես լիովին ողտագործել հնարավոր չեք : Ենթակայում գոյություն ունեցող մեր ելեքտրոնկայանների ողտագործման տոկոսը նորմալ և , հավասար

և 64-ի : Հնդամյակի վերջում այդ թիվը հասնելու յի 70,8-ի , մի բան , վոր ելեքտրականության մեջ աշխատող մեր ընկերներին շատ ել դուր չի գալիս , և վորը սակայն ցույց է տալիս , թե մեր կարէքն ամէնի մեծ է , քան նույնիսկ Հնդամյակի վերջում մեր ունենայիք կայանների կարողությունը : Նոր կառուցվելիք խոշոր կայաններից առանձին ուշադրության արժանի յին Զորագետիք հիգրոսելեքտրո-կայանը , վոր ավարտելու յինք 30-31 բյուջեատային տարում , և վորը 20.000 կիլովատ ուժ և ունենալու և վորի վրա Հնդամյակի ըն-թացքում պիտի ծախսվի 7,5 միլիոն ոուրլի : Ապա զալիս և Քա-նաքեռինը , վոր նույնպես 15 հազար կիլովատ ուժ և ունենալու և պետք և արժենա 8,5 միլիոն և ավարտվելու յի 32—33 թիվն : Այս յերկու մեծ հիգրոսելեքտրոկայանների վրա ծախսելու յինք 16 միտ յիոն : Տեղական հիգրոսելեքտրոկայաններից պետք և հիշատակել Յե-րեանինը՝ 4500 կիլովատով , վորի վրա Հնդամյակում ծախսելու յինք 735 հազար ոուրլի : Լենինականինը՝ 5200 կիլովատով , վորի վրա ծախսվելու յի 1535 հազար ոուրլի : Այս յերկուսն ել կասուց-ված են այսոր , սակայն մեր նախատեսված դումարները ծախս-վելու յին նրանց ընդարձակման և նրանց կարողությունը ծրա-դրված չափերին հասցնելու նպատակով : Այնուհետև , հիշենք Ի-նեանի հիգրոսելեքտրոկայանը , վոր ունենալու յի 550 կիլովատ և վորին հատկացրել ենք 750.000 ռ . և վերջապես , Ղաթարի հիգրո-կայանը՝ 3000 կիլ . կարողությամբ , վորի համար նախատեսված և ծախսել 1.000 հազար ռ . : Այնուհետև , Հնդամյակով նախա-տեսված են գյուղական մեծ ու փոքր 8 հիգրոսելեքտրոկայան—Դիլիջանում , Գորիսում , Մեղրիում , Կարմիր-Գյուղում , Քեշի-քենգում , Ախատայում , Բարձրայում , վորոնցից հինգը բոլորովին նոր ևն կառուցվելու , ընդհանուր կարողությամբ 525 կիլովատ , և վորոնց վրա ծախսելու յինք 1.256 հազար ոուրլի :

Հնդամյակը լուծում ե և մի խիստ կարեոր հարց , այդ մեր բոլոր խոշոր հիգրոսելեքտրոկայանների շաղկապման հարցն ե : Դուք զիտեք , վոր Հայաստանի լեռնային զետերի և վտակների ջրի դերետը տարվա բոլոր ժամանակներում և զանազան յերկրամասե-րում միատեսակ չե : Այդ բնական յերեսութը կարող և ունենալ և անպայման կունենա իր աղղեցությունը մեր այս կամ այն հիդ-րոկայանի կարողության վրա , ոլահն լուլ այդ կարողությունը չոչ դերետից կախված վիճակում : Տարեկաքի այդ աղղեցությունը թու-լացնելու և վերացնելու նպատակով անհրաժեշտ է համարված Զո-րագետի , Լենինականի , Քանաքեռի և Յերեանի հիգրոսելեքտրոկա-յանների շաղկապումը (կոստօնու) , վորպեսզի մի կայանի պա-

Հետով ուժով ոգնության հասնենք մյուսին, վորը իմ թված պատճառների հետեանքով կարիք կունենա ոժանդակության: Այս աշխատանքներին մենք հատկացրել ենք Յ միլիոն ոռութիւն: Ելեքտրոշինարարական մեր բոլոր ձեռնարկումների համար այսպիսով հնդամյա պլանով նախատեսել ենք 24·276 հազար ոռութիւն:

Ելեքտրական նորանոր հնարավորություններ հայտնագործելու նպատակով դիտական հետախուզական աշխատանքների համար հնդամյակը նախատեսել է 750 հազար ոռութիւն: Այսպիսով, ելեքտրական չինարարության վրա ծափսելու յենք հինգ տարվա ընթացքում ամենի քան 25 միլիոն ոռութիւն:

Գալով ելեքտրոններդիայի ոգտագործման հարցին, պետք է առեմ, վոր 1927—28 թ. ախսված և 14·900 հազար կիլովատժամ, վորից արգյունարերությունը սպասել և 12·400 հազար կ. ժ., դյուզատնառեսությունը 500 հազար կ. ժ., կոմունալ և կենցաղային կարիքների համար սպասված և 2000 հազար կիլովատժամ: Համայակի վերջին տարում ելեքտրոններդիայի ընդհանուր սպասությունը հասնելու յե 100 միլիոն կ. ժ., վորից արգյունարերությունը սպասելու յե 87 միլիոն կ. ժ., դյուզատնառեսությունը 6 միլ. կ. ժ. և վերջապես կոմունալ և կենցաղային կարիքները սպասելու յեն 7 միլիոն կ. ժ.:

Ելեքտրականության մասին իմ առելիքը վերջացնելու նպատակով մի քանի խոսքով անհրաժեշտ եմ համարում կանգ առնել նրա արգյունավետության, եփփեկտիվության վրա: Ինչ արժե մեզ ելեքտրոններդիան: Այս տեսակետից մենք միանդամայն բարենպատ և բացառիկ պայմաններում ենք զանգված, Յերեանում, որինակ՝ մի կիլովատժամի եներգիայի ինքնարժեքը սպասողին նստում է 2,5 կոպեկ այսոր, իսկ հնդամյակի վերջում իշնելու յե 1·8 կոպեկի: Լենինականում նույն կիլովատժամը արժե 5,2 կոպեկ, իշնելու յե 1·8 կոպեկի: Զորագետի և Քանաքեռի կայանների ինքնարժեքը նույնպես լինելու յե 1·8 կոպեկ: Մինչդեռ Անդրկովկասյան մի շարք հիգրոելեքտրոնկայաններ ունեն անհամեմատ բարձր ինքնարժեք: Այսպես՝ Զագեսի եներգիայի ինքնարժեքը սպասողին այսոր նստում է մի կիլովատժամը 4,7 կոպեկ, վորը հնդամյակի վերջում իշնելու յե 3,2 կոպեկի: Նույնու կայանի ինքնարժեքն այսոր 12 կոպեկ և, վորը հնդամյակի ընթացքում մնում է անփոփոխ: Վերջապես, Ռիոնդեսի կիլովատժամը սպասողին արժենալու յե 3 կոպեկ: Այսպիսով, Անդրկովկասյան մասում ամենաեժան եներգիան պիտի մատակարարեն մեր հիգրոելեքտրոնկայանները: Աակայն իջևանի ելեքտրոնկայանի ինքնարժեքն անհամեմատ բարձր և Անդրկովկասյան բոլոր ելեքտրոնկայանների ինքնարժեքից և հնդամյակի վերջում կազմելու յե 14

կոսպեկ: Բայց իջևանի ելեքտրոկարանի պատմությունը ձեզ բոլորի ծանոթ է, նրա կառուցումը դուռ անտեսավեն չի հիմնավորված, այսուղի կան քաղաքական նկառառություններ:

Արանով յես ավարտում եմ իմ ասելիքն արգյունարերության մասին:

IV. ՏՐԱՆՍՊՈՐՏ

Ընկերներ, յես անցնում եմ մեր անտեսության մի այլ ճյուղին, վորս ինքնին մի ազգակի և լինելու թե գյուղատնտեսության և թե արդյունաբերության զարգացման համար, այդ մեր արանուպորտ՝ մեր ճանապարհներն են: Դուք գիտեք, թե ինչ խոշոր նշանակություն ունեն ճանապարհները անտեսության մեջ: Յեթե ուզում եք մի յերկրի տնտեսական բարեկցության աստիճանն իմաստ, նաև և առաջ ուշադրություն դարձրեք, թե ավյալ յերկիրը վոր չափով և ապահովված ճանապարհներով: Այդ տեսակետից պետք ե ասել, վոր Խորհրդային Հայաստանի առանձին պարձենարու առիթ չունի: Մենք զգալի չափով ազգայի ենք ճանապարհներով: Յեթե վերցնենք մեր յերկաթուղին, նա ժապավեսության սահմանամերձ ըրջաններով, կտրելով մեծ մասամբ այնպիսի տարածություններ, վորանդ խիստ բնակչություն, մոտիկ բնակավայրեր բոլորովին չկան: Մեր յերկաթուղին կտրում ե ամրող Սարդարապատի հարթավայրը, վորանդ անցնում ենք տանիքակ կիլոմետր և բնակություն չենք նշմարում: Մեր յերկաթուղին, վորը կառուցված ե ցարի կառավարության որոք, հետապնդելիս յեղել վոչ թե յերկրի տնտեսությանն ոժանդակելու նպատակ, այլ զուտ աղմբնի խստրատիվ, ուղարկան նպատակներ: Այսոր յերե մեր ուշադրությունը դարձրել ենք վոչ թե պատերազմների միջոցով նորանոր յերկրներ գրավելու վրա, այլ զիսավորապես մտահոգված ենք յերկրի զյուղատնտեսության, արգյունաբերության և առհասարակ ժողովներության բարձրացման հարցով, այս տեսակետից արանապօրտի հարցը, ընկերներ, մասնավորապես յերկաթուղու հարցը, կարեռապույն նշանակություն և ստանում մեզ համար: Յերկաթուղագծի ապագա զարգացումը, այսպիսով, պայմանավորվում ե մեր անտեսական վերելքի, ժողովներության ընդհանուր անձնությունը: անձմամբ: Յերկաթուղացին նոր կառուցվածքները նախատեսված են յերկու ուղղությամբ, մի կողմից Աղստամբայի վրայով զեպի Յերեան և մյուս կողմից՝ Ալյաթ—Զուլֆա հիմնական գծից գեպի Ղափանի հանքերը: Յես չեմ հաշվում կենինական—Արթիկ գիծը, վոր սկսված ե այս տարի և պետք ե ավարտվի մինչև աշուն: Աղստամբա—Յերեան գծից այս

Հնդամյակում պետք և կառուցվի մոտ 50 կիլոմետր, Ազստաֆայից
կամ Յերեանից սկսելով :

Դափան—Ռիչիչայ գիծը գարձյալ ունենալու յև մոտ 40 կի-
լոմետր տարածություն :

Այսպիսով, մեր յերկաթուղադիծը հինգ տարում հարստանում
և այդ յերեք գծերով, վորոնցից Ազստաֆա—Յերեան գիծը շարու-
նակվելու յև հաջորդ հնդամյակում :

Այս գծից հնդամյակի բնթացքում կառուցվելիք 50 կիլոմետր
տարածության վերաբերմամբ այսոր յերկու հիմնական տեսակետ
կա : Վորոշ ընկերներ նպատակահարմար են համարում այդ գիծը
սկսել Ազստաֆայից զեպի Յերեան, այսինքն՝ առաջին հերթին
շինել Ազստաֆա—իջևան հանգույցը : Մի շարք այլ ընկերների
կարծիքով գիծը պետք և սկսել Յերեանից և հասցնել մինչև Ախ-
տա : Մեր հնդամյա պլանը հիմնավորելիս, անշուշտ մենք պետք և
ծանրանանք այս հարցի լուսաբանման վրա, տնտեսապես հիմնա-
վորելով մեկ կամ մյուս տեսակետը :

Գալով Դաթար—Ռիչիչայ գծին, պետք և ասել, վոր այն տրն-
տեսապես միանդամայն հիմնավորված է : Դուք զիտեք, վոր ուղ-
տերի կարավաններով չենք կարող նպատակահարմար կերպով շա-
հագործել Դաթարի մեր հանքերը, և այդ իսկ պատճառով հսկա-
յական գումարներ ենք զործագրում պղնձի փոխադրության հա-
մար : Այդ տեսակետից Դաթար—Ռիչիչայ գիծը բավարարելու յև
պղնձահանքերի կարիքները : Յերրորդ գիծը, վորի մասին արգեն-
տացի, Լենինական—Արթիկ յերկաթուղադիծն և, վոր ունի 32
կիլոմետր տարածություն : Յերկաթուղային շինարարության ա-
պագա ծագալման, նրա հետագա գարգացման տեսակետից ան-
հրաժեշտ և մեր տնտեսության համար մի կարեռազույն և խո-
չոր հարց լուծել, այսինքն՝ ինչ ուղղությամբ շահավետ կլինի-
զարգացող ժողովնեսության ապրանքային մասսան սպասել : Կեց-
նենք, որինակ, Արթիկի տուփի արտածման հարցը : Յեթև տուփի
արտադրությունը կատարենք նույնիսկ այն թափով, վոր նշված
և մեր հնդամյակում, ապա զեպի Միության խոշոր կենտրոնները
պետք և ուղղենք ապրանքների մի հսկայական քանակություն :
Յեզ ահա, բնականաբար, հարց և առաջ գալիս, թե այդ ապրանք-
ների հսկայական քանակը ի վիճակի կլինի, արդյոք, փոխադրե-
լու Լենինական—Նավթլուղ գիծը, թե նպատակահարմար կլինի
Յերեան—Զուլֆա, Լենինական—Յերեան—Ազստաֆա, կամ վեր-
ջապես՝ Լենինական—Դարաքիլիսա—Ազստաֆա գծերով կազմա-
կերպել մեր ապրանքների արտահանությունը : Ահա հարցեր, վո-

բանք յերկաթուղային շինարարության մեջ խաղալու յեն վճռական դեր, և վորոնց ուսումնասիրության վրա մենք պետք ե ամենալուրջ ուշաղբություն գալըձնենք : Այսուհետեւ, բնկերներ, նույնարեն կարենը և այժմեական հարց և նարդարաբարատը Եջմիածնի, Զանգիբրասարի վրայով անմիջապես Յերեանի հետ և Յերեանը մի շարք գյուղերի վրայով Ղամարլույի հետ միացնելու հարցը :

Մեր առաջադրած այդ խնդիրներն ունեն անտեսական խոչըր նշանակություն, այդ ձեռնարկումներով մենք յերկաթուղագիծը կը ուսեցնենք բնակչությանը, նույնառ մով ժողովնասության բարձրացմանը : Այժմ հնգամյա պլանով մեր յերկաթուղին ավելանալու յե 122 կիլոմետր տարածությամբ, վորի համար ծախսելու յենք 11.350 հազար ռուբլի :

Յերկաթուղային շինարարության մեջ առանձնապես պետք է հիշատակել Յերեանի նոր կայարանի կառուցումը, Ղարաքիլիսայի և Լենինականի կայարանների, ինչպես նաև Լենինականի և Յերեանի զեպոնների բնդարձակումը, բանվորական բնակարանային շինարարությունը, գնացքների կանոնավորման և վերասարգավորման հարցերը և այլն և այլն, վորոնք ամենքն ել զտել են իրենց արագուցումը հնգամյակի մեջ :

Հնգարդակցության միջոցների յերկրորդ խումբը կազմում են անոելս ճանապարհները : Բնկերներ, անոելս ճանապարհները սովորաբ ընդունված ե բաժանել չորս խմբի՝ միութենական, հանրապետական, տեղական նշանակություն ունեցող ճանապարհներ և դեպի գլխավոր ճանապարհները և յերկաթուղագիծը տանող ճանապարհները (Պօձձնուելու) Այս չորս կարգի ճանապարհները մեզանում համեմատաբար ավելի լավ գիճակի մեջ են, թեպետի նրանց բնդհանուր տարածությունը զեռևս հեռու յե բավարար լինելուց : Այս տեսակետից մեր հանրապետությունը պետք ե գասել անճանապարհ կամ ավելի քիչ ճանապարհ անեցող յերկրների շարքը : Հնգամյակի ընթացքում համամիութենական ճանապարհներն ավելանալու յեն 31 կիլոմետրով, հանրապետականները՝ 16 կիլոմետրով, տեղականները՝ 1450 կիլոմետրով և առեւրման ճանապարհները՝ 398 կիլոմետրով. այսպիսվ ճանապարհների բնդհանուր տարածությունը 1753 կիլոմետրից կդանա 3648 կիլոմետր : Խորը գիտակցելով դեպի յերկաթուղագիծը տանող ոժանդակ ճանապարհների կարևորությունը, հնգամյակում առանձին ուշաղբություն և գարձված առեւրման ճանապարհների վրա, վորոնց տարածությունը 22 կիլոմետրից հասնելու յե 420 կիլոմետրի : Բացի դրանից, վորպես փորձ, հնգամյակում յենթաղրգում և 193 կիլո-

մետր կատարելագործված (հուղբոնով կամ ասֆալտով պատած) ճանապարհների կառուցել:

Ճանապարհների այս շինարարության հետևանքով բնակչության կարիքների սպասարկման չափը դպավիորեն կրարձրանա: Յեթե այսոր 1 կիլոմետր ճանապարհը սպասարկում է 503 բնակչի կարիքներ, ապա Հնդամյակի վերջում սպասարկելու յև 309 բնակչի կարիքներ, այսինքն՝ սպասարկումն ավելանում է մոտ յերկու անգամ: Հնդամյակի բնթացքում անոնելու ճանապարհների շինարարության համար, բացի յերկաթուղուց, նախատեսված ե 21.052 հազար ոուրլի, վարից միութենական ճանապարհների վրա ծախսվելու յև 11.900 հազար ոուրլի, հանրապետականների վրա 5.646 հազար ոուրլ, տեղականների վրա 2.489 հազար ոուր. և առերման ճանապարհների վրա՝ 1.017 հազար ոուրլի: Ճանապարհների մասին խոսելիս չի կարելի կանոնադրությունների վրա ծախսվելու վոր ունի զարգացման բոլոր նախադրյաները: Յեթե մենք հնարավորություն չունենք յերկաթուղու ցանցը մեր անահետեթյան պահանջների համեմատ բնդարձակելու, ապա ավտոտրանսպորտի զարգացումը միանդամայն հնարավոր ե և անհրաժեշտ: այս նպատակով Հնդամյակի նախատեսված են զդալի ներդրումներ:

Այսոր մենք ունենք ավտոտրանսպորտի 12' դիմ 610 կիլոմետր տարածությամբ, վորոնք սպասարկվում են 36 մեքենայով: Հնդամյակի վերջում զծերի քանակը համելու յև 32-ի, աճելով 266,7 տոկոսով, տարածությունը կազմելու յև 2412 կիլոմետր կամ ավելանալու յև 395,5 %-ով, մեքենաների թիվը համելու յև 186-ի կամ ավելանալու յև 523 տոկոսով: Յեթե այսոր ավտոտրանսպորտը փոխադրում է տարեկան մոտ 190 հազար ուղենոր և 355 տոնն ապրանք, ապա Հնդամյակի վերջում փոխադրելու յև 505 հազար ուղենոր և 52730 տոնն ապրանք: Սակայն զարգացման այս զդալի երանությունը գեռեն հեռու պետք է համարել մեր կարիքները բավարարելու առավելանինց: Այս ուղղությամբ ավտոգայում մենք չառ անելիքներ ունենք:

Հազորդակցության վերջին միջոցը ջրային տրանսպորտն է, վորով մենք ծայր աստիճան աղքատ ենք: Բացի Սևանա լճից, մենք վորեն այլ ջրային Հազորդակցության միջոց չունենք: Սակայն Սևանը տեղական Հաղորդակցության տեսակետից ունի կարելոր նշանակություն: Միութենական Հաղորդակցության ճանապարհների ֆողովդական կոմիսարիատը մացրել է իր սիստեմի մեջնաև Սևանա լիճը: Սևանի վրա նավազնացության տոննամին ավելացնելու, յերթենեկությունը կանոնավորելու, ափերն ամրացնելու, նա-

վահանդիսուներ և վերջապես բանվորական բնակարաններ կառուցելու նպատակով նախատեսված և 605 հազար ոռորչի, բացի այն գումարներից, վոր տրամադրվելու յեն Սեւանի Փլորան և Փառանան և ուժիմն ուսումնասիրելու և զանազան գիտական աշխատանքների համար : Այս հիմնական ներդրումների ծախսմամբ յենթագրում ենք ապրանքատեղափոխումը այսորվա 2197 տոննից հնդամյակի վերջում հասցնելու 11756 տոննի և մոտ 60 հազար ուղեսրների փոխարեն փոխադրել 94 հազար մարդ :

V. ԺՈՂԿԱԿ

Թույլ տվեք, ընկերներ, անցնել ժողովրդական տնտեսության մի այլ ճյուղի՝ ժողովրդական կապին, վորը նույնպես մի աղջակ և մեր անտեսության բնդհանուր վերելքի : Մենք, ընկերներ, փոստայի և հեռագրով առանձնապես հարուսա չեյինք նախադպատերացման շրջանում, սակայն այսոր հնդամյակի առաջին խել տարում այդ ուղղությամբ մենք ունենք խոշոր նվաճումներ : Մեր համարյա բոլոր զավառական կենաբունները ունեն փոստ-հեռագրական գրասենյակներ, ունեն հեռախոսներ : Խոշոր զյուր՝ բը նույնպես մասնակից են հաղորդակցության այդ կատարելազործված միջոցներին՝ հեռախոսին և հեռագրին : Սակայն բնկ. Տեր-Գարբինյանի զեկուցման առթիվ արտահայտվող ընկերները ցանկություն եցին հայտնում, վոր հեռախոսի զործն և ավելի ժոտեցվի ժողովրդական զանգվածներին, վոր հեռախոսը զառնա սովորական և անհրաժեշտ զործիք ամեն մի աշխատավորի համար, ժամանակը խնայելու և առհասարակ ուացիոնալ կերպով ողտագործելու համար : Այս տեսակետից թե փոստ-հեռագրական հիմնարկները և թե մեր հեռախոսային ցանցը հնդամյակում, անշուշտ, պիտի ստանան զարգացման անհրաժեշտ թափ : Մենք յենթագրում ենք, վոր հնդամյակի վերջում հնարավորություն կունենանք գյուղական բընակչության 84 % ընդգրկել փոստ-հեռագրական ցանցով : Յեթե այսոր մի փոստ-հեռագրական գրասենյակի սպասարկման շրջադիմը 215 քառ. կիլոմետր և, ապա հնդամյակի վերջում այդ նույն գրասենյակի շրջադիմը կլինի 166 քառ. կիլոմետր . յեթե այսոր մի փոստ-հեռագրական գրասենյակ սպասարկում և 5337 մարդու կարեք, ապա հնդամյակի վերջում նա կսպասարկի 4634 մարդու կարեք : Այսինքն՝ մոտավորապես 800 մարդով պակասում և մի գրասենյակի բնունվածությունը, գրասենյակը ավելի յե մոտենում

բնակչությանը : Փոստ-Հեռագրական հիմնարկների թիվը 59-ից հասնելու յի 91-ի կամ աճելու յի 54 տոկոսով :

Հեռախոսացման ասպարիզում յենթադրվում և հնդամյակում ունենալ ուղիղ հեռախոսագիծ Յերեան—Ղարաբիլսա—Թիֆլիս—Մոսկվա :

Այս հեռախոսագիծը բոլորովին նոր և կառուցվում մինչեւ այժմ թիֆլիսի հետ խոսելիս մենք ոգտվում ենք հեռագրաթերերից, այժմ կունենանք ուղիղ հեռախոսաթեր, վորով կկապվենք Միության մայրաքաղաքի, Մոսկվայի հետ :

Այնուհետև նախատեսվում է մի նոր ցանց ևս կառուցել Յերեան—Գորիս—Նորաշեն գծով . գրանք այն կենտրոններն են, վոր մեզանից ավելի յեն կտրված և վորակ անպայման հարկավոր եր հեռախոսագիծ անցկացնել : Բացի նոր հեռախոսագծերից, հնդամյակով նախատեսված և քաղաքների հեռախոսացանցը լայնացնելը և ընդարձակելը : Բացի սովորական հեռախոսներից, վորոնց բաժանորդների թիվը Յերեանում հասնելու յի մոտ 2500—3000-ի, յենթադրվում է մեր յերկու քաղաքներում՝ Յերեանում և Լենինականում ունենալ նաև ավարտած հեռախոսներ : Փոստի գործը կանոնավորելու նպատակով բացի գրասենյակներն ավելացնելուց ավելացվում է նաև նամակատար ցրիչների թիվը : Կառուցողական աշխատանքներից պետք է հիշատակել Յերեանի փոստ-Հեռագրական նոր գրասենյակի կառուցումը, ինչպես նաև բոլոր դավանային կենտրոնների գրասենյակների կառուցումը և վերակառուցումը : Կառուցողական աշխատանքների համար նախատեսված է 689,5 հազար ոուրիշի : Նոր հեռախոսագծերի վրա ծախսվելու յի 1.542,8 հազար ոուրիշի և, վերջապես, հեռախոսացանցն ընդարձակելու համար տրամադրվում է 125 հազար ոուրիշի :

VI. ՅԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այժմ մի քանի խոսք ել բնակարանային շինարարության մասին : Զկա մեկը Հայաստանում, վորին Հայտնի շլինեն բնակարանային այն ծանր պայմանները, վորոնց մեջ ապրում է մեր աշխատավորությունը, մասնավորապես բանվորությունը քաղաքներում և հանքագաղատական աշխատանքների համար նախատեսված է Հանքաշատ վայրերում : Եսովորություն ե դարձել կրկնել— «վոր մենք բնակարաններ չունենք, այլ զերեղմանների չափ տեղ» : Յերեանում մի շնչի միջին նորման հավասար է 2,42 քառ. մետրի, Լենինականում՝ 2,71 քառ. մետրի, իսկ Հայաստանի միջին նորման հավասար է 2,51 քառ. մետրի, այսինքն՝ մոտ 2 ու կես անգամ

պակաս քան առողջապահական տեսակետից սուհմանված ամենա-
նվազագույն նորման, վոր 6 քառ. մետրից պակաս չպետք է լինի :
Բնակարանային այս ճշնաժամն ազդում է վոչ միայն մեր աշխա-
տավորության առողջության վրա, վոչ միայն թուրացնում և նրա
աշխատաւնակությունը, այլ նաև հնարավորությունը չի տալիս մեր
դարձացող ժողովնեսության համար դրսից հրավիրելու մասնա-
կեա և կարող ուժեր, վորոնց կարիքը մեզանում մեծ է : Պարզ է,
ընկերներ, վոր մեր հնդամյակում բնակարանային հարցը պետք է
դրամիկ առանձին ուշագրություն : Բնակարանային սուր ճշնա-
ժամը թուրացնելու համար հարկավոր են մեծ կապիտալներ, ըղ-
զալի գրամագրություններ : Մենք մինչեւ այսոր, անցյալ 8 տարվա չի-
բարության բնթացքում, 40—45 միլիոն գրամ ենք հատկացրել
զուտ բնակարանային շինարարության, սակայն այդ դումարը, վոր
ամբողջապես ծախսված եր նպատակին զգալի կերպով չի թեթևաց-
րել մեր բնակարանային ճշնաժամը : Մեր կարիքը բավարարե-
լու համար հարկավոր են 100-ավոր միլիոններ, մի զումար, վոր
այս հնդամյակում չենք կարող տրամադրել : Հնդամյակի բնթաց-
քում ծրագրվում ե բնակարանային շինարարության վրա ծախսել
ելի 40 միլիոն ոուրլի, վորից քաղաքային խորհուրդների և զործ-
կոմների գծով 19 միլիոն ոուրլի, արդյունարերության գծով 12
ու կես միլիոն, կոոպերացիայի գծով 4 միլիոն, տրանսպորտի
գծով 2 միլիոն ոուրլի և անհատական-մասնավոր կապիտալի հաշ-
վով 2 ու կես միլիոն ոուրլի : Այդ 40 միլիոն ոուրլով մենք մի-
կողմից հնարավորություն կունենանք բնակելի վիճակում պահ-
պանելու մեր բնակարանային այսորվա ֆոնդը և վորոշ չափով ավե-
լացնելու այն (25,9%-ով) : Հնդամյակի վերջում հայտատանի մի-
ջին բնակելի նորման կազմելու յե 3,17 քառ. մետր, վորից Յերե-
մանում՝ 3,37 քառ. մետր և Լենինականում՝ 3,32 քառ. մետր,
այսինքն՝ հնդամյակի վերջում մենք կունենանք անհրաժեշտ նոր-
մայի միայն կեսը : Շինարարության յերկրորդ չունգը, ընկերներ,
կոմունալ շինարարությունն է : Մենք անսանք, թե մեր բնակարա-
նային պայմանները ինչքան սուզ են, նույնը կարելի յե ասել նաև
մեր կոմունալ ձեռնարկությունների մասին : Մեր յերկու մեծ քա-
զագիները վոչ մի հարմարություն չունեն : Նույնիսկ Յերեանը, իբ-
րև մայրաքաղաք, մինչեւ այժմ վոչ միայն չունի կոյուղի (կանու-
յիղացիա), այլ մինչեւ անդամ միակ ջրմուղը չի բավարարում բն-
ակչության կարիքներին : Ասքուստի այս տարրական հարմարու-
թյունների բացակայությունը իր հերթին, ի հարկե, անդրագառ-
նում և աշխատավորության աշխատանքի ինտենսիվության վրա :

Մի շարք քաղաքներում մենք չունենք նույնիսկ բաղնիքներ : Համախ տեղերում աշխատող ընկերների ամենահամեստ պահանջները բաղնիք կառուցելու նկատմամբ մենք ի վիճակի չենք յեղեւ բավարարելու : Այսոր մեր գավառական և գավառակային կենտրոններից շատերում բաղնիք չկա, չեմ խօսում այլիս մեծ զյուղերի և ավանների մասին : Աննախանձելի վիճակում և գտնվում նաև մեր քաղաքների բարեկարգության զործը : Անշուշտ այդ կարգներին բավարարելու հարցը պետք է մեր հնդամյա պլանի մեջ ստանար իր արտացոլումը : Յերևանի և Լենինականի ջրմուղների լայնացման ու նորերի կառուցման համար նախառեսված և 3,436 հազար ոուրլի, Յերևանում կոյուղի կառուցվելու համար հատկացվում է 1,350 հազար ոուրլի : Նոր բաղնիքների վրա ծափսելու յենք 705 հազար ոուրլի : Այսուհետեւ, քաղաքները և փողոցները սարահատակելու և կանոնավոր դրության մեջ պահպահու համար նախառեսված և 1528 հազար ոուրլի, և վերջապես, նոր շուկաներ և խանութներ կառուցելու, ինչպես նաև յեղածները կարգի բերելու համար հատկացված և 1260 հազար ոուրլի : Այսպիսով մեր ամբողջ կոմունալ շինարարությունը հնդամյակում ստանում է 11 միլիոն ոուրլի :

Հնդամյա պլանով ծրագրված շինարարական աշխատանքներից չի կարելի չիշչատակել առետրական նշանակություն ունեցող շինարարությանը : Թոչնարուծության, անասնապահության և բուռարուծության արտադրանքների արտահանման գործը, մեր պտուղների, մասնավորապես՝ կաթնամթերքների, մորթած թըրոչունների, և բանջարեղենի շահավետ սպառման ու արտահանման գործը պահանջում է նախ և առաջ ունենալ սառցարաններ :

Այս աարի մենք ձեռնարկնել ենք յերկու խոշոր սառցարանների կառուցման—Յերևանում և Յելենովկայում . ծրագրում ենք կառուցել յերկու ուրիշ սառցարան, մեկը Ղարաքիլիսայում և մյուսը Լենինականում : Դրանցից Յերևանինը ունենալու յե 400 հազար տոնն տարողություն, Յելենովկայինը՝ 220 հազար տոնն, Ղարաքիլիսայինը՝ 200 հազար տոնն և Լենինականինը՝ 100 հազար տոնն : Սառցարանների կառուցման համար բացի մինչեւ որս ստացած գումարներից, հատկացված և դարձյալ 673 հազար ոուրլի :

Զուտ շինարարության մեջ հիմնական ներդրումների ընդհանուր գումարը հնդամյակում հավասար է 172,1 միլիոն ոուրլու, վոր ծախսվելու յե ժողովնտեսության զանազան ճյուղերում : Գյուղատնտեսության գծով կատարվելիք զանազան շինարարական աշխատանքների համար հատկացված է 16,5 միլիոն ոուրլի, ար-

դյունաբերության գծով՝ 19 միլիոն, բնակարանների համար՝ 38 միլիոն, երեքտրականության գծով՝ 11 միլիոն, խորհացիալի գծով՝ 28 միլիոն և այլն։ Այդ 176 միլիոն ոռորդուց մոտ 100 միլիոնը ծախսվելու յի քաղաքացիական շինարարության ուղղությամբ և Հիդրո-աերանիքական ու ձանապարհային շինարարության գծով 72,1 միլիոն ոռորդիք։ Շինարարության այս աննախընթաց թափը անխուսափելիորեն առաջադրելու յի և շինանյութերի պատրաստման հարցը։ Յես արզեն զեկուցեցի, վոր մի շարք նոր ձեռնարկությունների շինանյութերի ծավալումով և կառուցումով մենք հնարավորություն կունենանք անհրաժեշտ շինանյութերի հայթայթումն ապահովելու։ Զծանրաբեռնելով ձեր ուշադրությունը շինանյութերի անհրաժեշտ քանակի վերաբերյալ թըմբերով, պետք ե ընդունեմ, վոր շինանյութերի հարցին զուգընթաց, այսոր մեր մատահոգության առարկան և լինելու նաև վորակյալ բանուժը, մասնավորապես կառուցող վորակյալ ուժ պատրաստելու հարցը։ Մտավախություն կա, վոր շինարարական աշխատանքների հսկա ծավալումի հետեանքով վորակյալ բանվորների պակաս զգացվի, մի հարց, վորի վրա մեր հետազա աշխատանքների ընթացքում պետք ե կենարունացնենք մեր ուշադրությունը։

VII. ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Թույլ տվեք, ընկերներ, անցնել բնակչության զարգացման, նրա աճման թափի, բանվորական ուժի, և ընդհանրապես աշխատանքի պրոբլեմին։ Մեր տնտեսությանը համընթաց աճում և և մեր բընակչությունը։ Ամբողջ Միության մեջ Հայաստանը իր ազգաբընակության աճման տոկոսով ունիորդ և շահում թերևս այն պատճառով, վոր մեր ազգաբնակությունը ավելի յերիտասարդ և, թերևս այն պատճառով, վոր ժողոտնեսության հնգամյա զարգացման հետեանքով զանազան տեղերից Հայաստան են դալիս նորանոր ուժեր։ Այսպես թե այնպես՝ ազգաբնակության աճման տարեկան տոկոսը այժմ հավասար է 4.1-ի. (Տեղերից—Համաշխարհային ունիորդ), յես այդ գժվարանում եմ ասել։

Հնդամյակի վերջում մեր ազգաբնակությունը կամի 22,4 տոկոսով, վորից քաղաքինը՝ 25,3 տոկոսով և դյուզականը՝ 21,7 տոկոսով։ Դյուզի բնակչության այսպիսի բուն աճումը, բնականարար, տալու յի ավելորդ ձեռքեր, վորոնց մեր՝ թեկուղ զարգացող, արդյունաբերության մեջ զբաղեցնել անհնար կլիներ։

Պարզ է, վոր գյուղի բնակչության ազատ մասը, վոր այսոր համասար և 66 հազար հոգու կամ գյուղական ամրող բնակչության 17,7%-ին, թվին 1932-33 թվին կինը 54,4 հազարի, կազմելով գյուղի ամրող բնակչության 12,4%-ը: Գյուղի բնակչության այս ազատ մասը զրագվելու յի դրսի աշխատանքով կամ այլ սեղոնային աշխատանքներով:

Արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և անտեսական այլ ճյուղերի զարգացման հետեանքով անխուսափելիորեն ավելանալու յի նաև ժողովնականության մեջ զրագված բանդարների թիվը:

Բնակչության բանվորական հասակ ունեցող չերտերի աճման տոկոսը հնդամյակում հետեային և 15-22 տարեկան հասակ ունեցողները հնդամյակի վերջում աճում են 22,5 տոկոսով, 23-50 տարեկանները 22,4%-ով: Խորհանք աճմանը զուգընթաց մեր ժողովնականությունը ներգրավելու յի աշխատազ նոր ձեռքեր մաս 31 հազար հոգի (61,9 հազար հոգու փոխարեն 92,6 հազար հոգի) կամ բանվորական հասակ ունեցող և այժմ զրագվածների 49,6%-ը: Գյուղատնտեսության մեջ զրագված բանվորների թիվը հնդամյակի վերջում ավելանալու յի 27,6%-ով, արդյունաբերության մեջ՝ 92,8%-ով, չինարարական աշխատանքների մեջ՝ 108,5 տոկոսով, կազի և տրանսպորտի մեջ՝ 15,4 տոկոսով: Խորհրդային իշխանության տված գիրեկտիվների հետեանքով վարչական ապարատը չի ընդարձակվելու, իսկ սոցիալ-կուլտուրական սեկտորը՝ ժողովրավական լուսավորությունը, առողջապահությունը և այլն, ներգրավելու յին նոր ուժեր անցյալի՝ 72,2%-ի չափով: Աշխատանքի պաշտպանության ասպարիվում գոյություն ունեցող մեր բոլոր արգյունաբերական ձեռնարկությունները պետք և տատիճանաբար կիրառեն կյանքում Աշխատանքի Որենսգրքով նախատեսված աշխատանքի պաշտպանության բոլոր միջոցները: Այս ուղղությամբ հնդամյակով նախատեսված և 752 հազար սուրբ: Ինչ վերաբերում և նոր կառուցվելիք գործարաններին, ապա նըրանք պետք և համապատասխանեն Աշխատանքի Որենսգրքով պահանջվող՝ աշխատանքի պաշտպանության բոլոր պայմաններին, աշխատանքի պաշտպանությունն ապահովելու համար պետք և ամեն անգամ նախահաշվիներ կազմելիս նախատեսնել անհրաժեշտ զումարը: Շ-ժամյա բանվորական որվա մասին յևս արդեն խոսեցի: ուստի այլևս չեմ կանգ առնի այլ հարցերի վրա: Ժողովնականության, նրա առանձին ճյուղերի զարգացման և աշխատավարձի բարձրացման հետեանքով անշուշտ պետք և ավելանար նաև սոց-

ապահովագրվածների թիվը ինչպես նաև պետք ե ավելանան սոցազահովագրության ֆինանսները : Սոցազահովագրական մարմինների բյուջեն հնդամյակի վերջում դառնում ե անդեֆիցիտ՝ նրա յելքի մասը աճում է 90,4 %-ով, իսկ մուտքի մասը՝ 107,6-տոկոսով : Ապահովագրվածների թիվը ավելանում է 58,6 %-ով ։ գործադուրկներին տրվելիք նպաստները աճում են 259,5 տոկոսով : Աշխատունակությունից ժամանակավորապես զրկվածներին տրվելիք նպաստները աճում են 118 %-ով և, վերջապես, հանդսով տների և սանատորիաների վրա ծախսվելիք գումարը աճում է 35,2 %-ով :

VIII. ԿՈՌՊԵՐԱՅԻ ՑԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ

Մինչեւ այժմ յես խոսում եյի ժողանակության յերկու հիմնական բնագավառների մասին, վորոնցից առաջինը տալիս ե հումույթը, յերկրորդը՝ այդ հումույթը վերամշակման յենթարկելով, պատրաստում ե սպառման և գործածման արժեքները : Տնտեսության յերրորդ խոշոր բնագավառը ընդգրկում է ժողանակության մթերման և սպառման պրոցեսները : Տեսնենք, թե ինչպես և ինչ ճանապարհներով և գյուղատնտեսության և արդյունաբերության արտադրանքը հասնում սպառողին, ժողովներության առաջին յերկու խոշոր հատվածները ինչ չափով ևն բավարարում բնակչության սպառողական կարիքները :

Տնտեսության այս բնագավառը սպասարկում է մեր առևտրի և ապրանքաշրջանառության հանրայնացված հատվածը, վորերազգրիչ մասերն են կոոպերացիան և պետական առևտուրը :

Ինչպես գիտեք, մենք ունենք 4 տեսակի կոոպերացիա՝ գյուղատնտեսական, սպառողական, տնայնագործական և բնակարանային : Գյուղատնտեսության ընդհանուր վերելքը գյուղատնտեսական կոոպերացիայի գարզացման համար տալիս ե ամեն մի հընարավորություն : Մի կողմից՝ գյուղատնտեսական կոոպերացիան գյուղատնտեսական արտադրական պրոցեսները կոոպերատիվ հիմունքներով ե կազմակերպում . արտադրության անհատական ձեւվերը համայնականի վերածելով, մյուս կողմից՝ նա հանդիսանուր յեայն փաստական լծակը, վորը պետք ե գյուղատնտեսության արտադրանքը քաղաքի արդյունաբերության հետ շաղկապի, գյուղի և քաղաքի կանոնավոր անտեսական կազի խթանը հանդիսանա :

Այսպիսով, չթերանալով յերբեք իր հիմնական գերում, այս ոինքն՝ կազմակերպելով և վարելով գյուղատնտեսության արտադրական պրոցեսները, գյուղկոռպերացիան պետք է ընդգրկի նաև Հայթայթման ու մթերման պրոցեսները:

Եինելով Համեմատարար յերիտասարդ կազմակերպություն, գյուղկոռպերացիան գեռես ի վիճակի չե անսայթաք կատարելու իր պարտականությունները: Մասնավորապես, կազում և մթերման գործը, վորտեղ գյուղկոռպերացիան գեռես բազմաթիվ բացեր ունի, մանավանդ զեների քաղաքականության առաջարիգում: Գյուղատնտեսության արտադրական հյուղերին անհրաժեշտ գործիքներ, մեքենաներ և այլ պարագաներ հայթայթելու, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի մթերման ու իրացման գործում գյուղկոռպերացիան աստիճանաբար պետք և ստանձնի վճռական գեր, և ժամանակի ընթացքում պետք և ստանա մենաշնորհի իրավունք: Վորոշ և զգալի քայլեր այս ուղղությամբ առաջիկա հնգամյակի ընթացքում մենք կատարում ենք: Գյուղկոռպերացիան հնգամյակում ծավալը ում և թե կազմակերպչորհն և թե անտեսապես: 1932-33 թվականին գյուղկոռպերացիան ունենալու յե 196,4 հազար անգամ, չհաշված կորանտեսության անդամներին կամ աճելու յե 257,5 տոկոսով, ընդգրկելով գյուղական բոլոր տնտեսությունների 139,8 տոկոսը: Գյուղկոռպերացիայի ընդգրկած գյուղական անտեսությունների տոկոսը, առանց վարկային ընկերությունների, հավասարվելու յե 89,9%-ի, իսկ առանց կոլտնտեսությունների՝ 72,7%-ի: Գյուղկոռպերացիայի ամբողջ ապրանքաշրջանառությունն աճելու յե 419% ով, համելով 83,618 հազար ոուրլու, իսկ զուտ ապրանքային ըրջանառությունը՝ 44,539 հազար ոուրլու, կամ աճելու յե 385,5%-ով:

1927-28 թվին գյուղկոռպերացիան ընդգրկում եր գյուղատնտեսության ապրանքային արտադրության միայն 30,1 տոկոսը, մինչդեռ հնգամյակի վերջում այդ տոկոսը հավասարվելու յե 53,3%-ի, կամ աճելու յե 71,1 տոկոսով:

Աճում ու զարգանում և նաև գյուղկոռպերացիայի Փինանսական բաղան: Սարքին ցանցի փայտքամազլուին աճում և 542,6 տոկոսով, Միության կաղիտալը՝ 474,1 տոկոսով: Վարկային ընկերություններում գյուղացիների ավանդային գործարքներն աճում են 522,8 տոկոսով. վերջապես, յեթե 27-28 տարում գյուղկոռպերացիայի յուրաքանչյուր անդամի վճարած միջին փայտքարը կազմում եր 9 ոուրլի 30 կ., ապա հնգամյակի վերջում կազմի 21 ոուրլի: Ֆինանսապես ամբանալու հետեւանքով փոխ-

վում և նաև սեփական և ոտար միջոցների փոխարաբերությունը, գառնալով ավելի կայուն: Արագանալու յե նաև կապիտալի շրջանառությունը, նպաստելով գյուղկոռպերացիայի հայթայթման և մթերման գործարքների գարզացմանը:

Հիմնական ներդրումները գյուղկոռպերացիայի գծով, չհաշվելով, գյուղանատեսության ինդուստրացման համար հատկացված գումարները, հավասար են 10.360 հազար ռուբլու:

Սպառողական կոռպերացիայի վրա յես շատ քիչ կանգ կառնեմ, քանի վոր այդ մասին բաժանված են ձեզ առանձին և հատուկ գրքույիններ: Սպառկոռպերացիան գյուղի և քաղաքի ապրանքաշրջանառության մեջ պետք է վճռական տեղ գրավի: Դեռևս, չնորհիվ մի շարք պայմանների, սպառկոռպերացիան չի հայտնաբերել իր բոլոր ունակությունները: Մանրածախս ապրանքաշրջանառության մեջ սպառողական կոռպերացիան պետք և աստիճանաբար իր ձեռքն առնի բոլոր շուկաները: Մանրածախս առևտուրի ասպարիգում դեռ մասնավորի գերը մեծ և մեզանում յենթագրում ենք, վոր հնդամյակի վերջում այդ առևտուրից միայն 17 տոկոսը կմնա մասնավորի ձեռքում, իսկ մնացած մասը կենտրոնացվելու յե հանրայնացված սեկտորի ձեռքում:

Հնդամյակի ընթացքում սպառկոռպերացիան այսորված համեմատությամբ մի շարք կարևոր նվաճումներ և անելու: Կոռպերատիվների անդամների թիվը աճելու յե 78,1 տոկոսով: Քաղաքների մեծահասակ բնակչության 54,8 տոկոսը կներդրավի կոռպերացիայի մեջ, իսկ գյուղի տնահետությունների՝ 75 տոկոսը:

Սպառկոռպերացիայի թե ամրոջ և թե զուտ ապրանքաշրջանառությունը հնդամյակի ընթացքում կրկնապատկվում և, ֆինանսական զրությունը ամրանում: Մասնավորապես, փայտքամաքումները Միության մեջ աճում են 639,5 տոկոսով, ցանցում՝ 657,9 տոկոսով կամ ընդհանրապես 650,3 տոկոսով: Վճարած միջն փայլը, վոր այսոր հավասար և 7.ոռուրլու, հնդամյակի վերջում կազմելու յե 29,5 ոռուրլի: Սնկական և ոտար կապիտալների հարաբերությունը հնդամյակի վերջում հավասարվելու յե:

Արդյունաբերության մասին խոսելիս յես մասամբ չոշափեցի անյանաղործական կոռպերացիայի հարցերը: Տնայնաղործական արդյունաբերության արտադրական և իրացման պրոցեսների կազմակերպման, ինչպես նաև յերկրորդական նշանակություն ունեցող եքսպորտային ապրանքների արտածման գործում տնայնագործական կոռպերացիան վճռական դեր և խաղալու: Այս նպատակով տնայնաղործական կոռպերացիան պետք է ընդգրկի տնայ-

նազործության բոլոր ճյուղերը : Հնդամյակի վերջում տնայնագործական կոռպերատիվ կազմակերպությունների թիվը աճելու յե 236%-ով : Կոռպերացման յենթարկված տնայնագործների թիվը աճելու յե 534,3 տոկոսով, ընդգրեկելով բոլոր տնայնագործների 48,5%-ը, վորը այսոր հավասար է միայն 9,6-ի : Տնայնագործական կոռպերացիայի ամրող արտադրանքն աճելու յե 545,8 տոկոսով, հասնելով 14,906 հազար ոուրլու : Վոր կազմում է մանր և տնայնագործական արդյունաբերության ամրող արտադրանքի համարյա կեսը : Ֆինանսապես տնայնագործական կոռպերացիան կայսուն վիճակ ունի, հնդամյակի վերջում նրա սեփական միջոցները կհասնեն 1,489 հազար ոուրլու : Եքսոպրատային գործարքները տնայնագործական կոռպերացիայի հնդամյակի վերջում ավելանալու յեն մոտ 22 անդամ, հասնելով 2,202 հազար ոուրլու : Հնդամյակը նախատեսում է 1,155 հազար հիմնական ներդրում, վորից գորգագործության համար հատկացվում է 387 հազար ոուրլի :

Կոռպերացիայի վերջին ճյուղը բնակչինկոռպերացիան է : Բնակարանային մեր կրթտիկական պայմաններում բնակչինկոռպերացիայի գերը վերին աստիճանի պատասխանատու յե և դժվարին : Բնակչինկոռպը մի կողմից պետք է կոռպերացման յենթարկված անդամների միջոցների կուտակումով և ստացված վարկերով նորանոր բնակարաններ կառուցի, ուժեղացնի իր ցանցը, ստարածելով իր ազգեցությունը հանրապետության բոլոր քաղաքների վլրա, ճյոււ կողմից՝ պետք և միջոցներ ձեռք առնի բնակարանային յեզած Փոնդը պահպանելու երնակարանները կոռպերատիվ հիմունքներով ոգտագործելու ուղղությամբ : Իր գոյության համեմատարար կարճ ժամանակաշրջանում Բնակչինկոռպը միանդամայն ապացուցել է իր կենսունակությունն ու այժմեականությունը : Բնակչինկոռպերատիվ ընկերությունների անդամների թիվը հընդամյակում աճելու յե 148,7%-ով, հասնելով 2783-ի, իսկ վարձակալական կոռպերատիվ ընկերությունների անդամների թիվը աճելու յե 240%-ով, հասնելով 2674-ի : Բնակչինկոռպերացիայի փայտդրամագլուխը 89,8 հազար ոուրլուց հասնելու յե 996,800 ոուրլու : Վարձով արվելիք բնակարանների տարածությունը 16 հազար քառ. մետրից բարձրանալու յե 51 հազար քառ. մետրի, և, վերջապես, շինարարության համար այս տարի հատկացվող 300·600 ոուրլու հանդեպ հնդամյակի վերջին տարում պետք է տրամադրի սեփական և կողմնակի միջոցներից 2,132 հազար ոուրլի : Այս թվերը մի անդամ ևս ապացուցելով Բնակչինկոռպի :

կենսունակությունը, անշուշտ, հեռու յեն մեր կարիքները բավարարելուց : Այս ասպարիզում մենք գեռ չառ անելիքներ ունենք, վորոնց ձեռնամուխ պետք է լինենք հաջորդ հնդամյակում :

Ժողովնաեսության սոցիալիստական վերակառուցման և ընդհանուր վերելքին դուզընթաց, նյութական բարիքների բաշխման պլանավոր հատվածը՝ առետուրը ևս պետք է յենթարկվեր արտադրական նոր հարաբերություններին, վերակառուցմանը, ուժեղացնելով սոցիալիստական ելեմենտները առետրի կազմակերպման բնագավառում : Մասնավորապես, առետուրը աստիճանաբար պետք է լուծարքի յենթարկի առաջարկության և պահանջի տարերայնությունը՝ նախնական պայմանագրերի և պատվերների միջոցով, բոլոր ձեր և տեսակի կոռուպերատիվ կազմակերպությունների և պետառետրի առետրական գործարքները համաձայնեցնելու և սիստեմի վերածելու ճանապարհով : Իր աստիճանական ծավալման ընթացքով առետրական հանրայնացված սեկտորը հետզհետև գրավելու յե այն բոլոր դիրքերը, վորտեղ այսոր տիրում և դեռ մասնավորը, և վորը, անշուշտ, տեղի յե տալու տրնտեսապես ու կազմակերպչորեն ավելի կենսունակ հանրայնացված սեկտորին :

Այս հիմնական խնդիրները հանրայնացված առետուրը ի վեճակի կլինի լուծելու, մի կողմից, առետրի տեխնիքական հիմքը վերակառուցելով, սաոցարանների, պահեստների կառուցումով և առհասարակ մթերման գործի կանոնավոր կազմակերպմամբ, իսկ մյուս կողմից՝ մանրածախս առետրի ցանցը լայնացնելով, բնակչության նյութական ու կուլտուրական աճող պահանջների համեմատ, ապրանքաշրջանառության ուղիները կանոնավորելով և այլն :

Անժխտելի յե, վոր այս կարեռապույն հարցերը չեյին կարող իրենց լրիվ լուծումն ստանալ առաջիկա հնդամյակում : Մենք այսոր կազմակերպչորեն նոր ենք կիպ (ուղղություն) ձեռնամուխ վիճում նրանց լուծմանը : Սակայն առաջիկա հնդամյակը տալու յե մի շարք նոր նվաճումներ և այս ասպարիզում :

Մանրածախս առետրի 3831 կետերից 27-28 թվին հանրայնացված սեկտորը ուներ միայն 577 կետ կամ մոտ 15 %, իսկ հընդամյակի վերջում նրա տեսակաբար կշփու հասնելու յե 22,8 տոկոսի :

Ապրանքային ամբողջ շրջանառությունը աճելու յե 116,9 տոկոսով, բացարձակապես կազմելով 410 միլիոն ռուբլի, վորեց հանրայնացված սեկտորը կազմելու յե 90,3 տոկոս, աճելով 162,9

տոկոսով, և մասնավորը՝ 9,7 տոկոս, նվազելով 16,7 տոկոսով:

Մեծածախս առևտրի մեջ հանրայնացված սեկտորի տեսակարար կշիռը հնգամյակի վերջում կազմելու յև ընդհանուր գումարի, 286 միլիոն ռուբլու 94 տոկոսը, իսկ մանրածախսի մեջ՝ 129 միլիոն ռուբլու 82,2%-ը:

Հանրայնացված սեկտորի տեսակարար կշոր պատկերն ել ավելի նպաստավոր և միջնորդական ապրանքաշրջանառության ասպարիզում: Միջնորդական ապրանքաշրջանառությունը հնգամյակի վերջում հավասարվելու յև 238 միլիոն ռուբլու, վորից հանրայնացված սեկտորը կազմելու յէ 93,3 տոկոս, իսկ այս ընտափավորի մեծածախս առևտրի մեջ նրա տեսակարար կշոր հասնելու յէ 99,2 տոկոսի և մանրածախսի մեջ՝ 85,8 տոկոսի:

Այսպիսով, հնգամյա պլանը հանրայնացված սեկտորին տալիս և ապրանքաշրջանառության մեջ բացառիկ գերակշռող տեղ, վորոշ մասերում հասցնելով նույնիսկ մոնոպոլ գրության:

Մեր այս քայլերը արդարացնելու նպատակով մենք նախատեսել ենք և անհրաժեշտ գումարներ: Հիմնական ներդրումների ընդհանուր գումարը այդ ընտափառում կազմում է 14.868 հազար ռուբլի, վորից սառցարանների կառուցման վրա ծախսելու յենք 673 հազար ռուբլի, կաթնատնտեսության առևտրական ձեռնարկությունների վրա 4.355 հազար ռուբլի, խանութների և կոռոպերատիվների վրա 600 հազար ռուբլի, պահեստների կառուցման վրա 400 հազար ռուբլի, չուկաններ, առևտրական կայաններ և այլն՝ 1.040 հազար ռուբլի և, վերճապես, ձվի և թոչունի կոմբինատի վրա՝ 600 հազար ռուբլի:

IX. ԺՈՂԼՈՒՍՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Անցնում եմ ժողտնտեսության մի խիստ կարեռը հատվածի, սոցիսալ-կուլտուրական ասպարիզում մեր նախագծած աշխատանքների լուսաբանման:

Դեռևս 15-րդ կուսհամագումարը, նշելով ժողտնտեսության դարպացման սկզբունքային ուղղները, զնելով տնտեսության սոցիսալիստական վերակառուցման հարցն ընդհանրապես, տվեց նաև կուլտուրական հեղափոխության հրամայական նշանաբանը, ընդգծելով մի անգամ ևս այն սերտ կազը, վոր գոյցություն ունի տնտեսության և ժողովրդական լուսավորության միջև:

Հիմք ունենալով 15-րդ համագումարի վորոշումները՝ ժողո-

